

31-32(569-570)

20.11.2019

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐ

Лусар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusar

ԵՐԵՔ ՕՐ, ՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՂՈՒ ԵՎ ՄՏԻ ՏՈՆ ԴԱՐԳԵՎԵՅԻՆ

Աշխարհային արձակուրդի այդ երեք օրերը, որ Արցախի մանկավարժական հանրույթի մի որոշ մասի համար, թերևս նրանց, ովքեր ուզում են փոխվել և փոխել շրջապատը, հիրավի դարձան մասնագիտական ոգու և մտքի թևածման անմոռաց պահեր: Խոսքը, իհարկե, «Արցախի կրթական ֆորում-2019»-ի մասին է, որի մասնակիցները ներկայացել էին սրտի թելադրանքով՝ ըստ կազմակերպիչների կողմից նախապես արված հայտարարության հայտարարումի և ոչ վարչական լծակներից ելնելով, ոչ կամավոր-պարտադիր սկզբունքով, ինչպես նաև հավաքների ժամանակ սովորաբար լինում է: Եվ կազմակերպված էր շատ քաղաքակիրթ ձևով, ինչպես ասում են՝ շքանուշիկի միջև բուն գործողություններ: Հենց հայտագրման պահից, երբ ցանկացողները կարող էին ընտրել ներկայացված ծրագրից իրենց հետաքրքրող թեմաները, մինչև գրանցման տեղ, որտեղ մասնակիցներն ստացան հայերենի այբուբենի նկարագրող տառեր, որոնք մատնանշում էին դասարան-ենթախմբերը, մինչև դահլիճ: Ավելորդ չհամարենք մշել նաև հանգստի պահերը: Ամեն ինչ այնպես էր կազմակերպված, որ ժամանակի կորուստ չլիներ, ֆորումն ընթանա ժամանակացույցին համապատասխան և իհարկե, բարձր մակարդակով թե՛ բովանդակային և թե՛ կազմակերպչական առումով:

Թե ինչի մասին են խոսել, ինչ թեմաներ են քննարկել, ինչ տպավորություն են ստացել մասնակիցները, աշխատել ենք հանգամանակից լուսաբանել «Լուսար»-ում՝ նպատակ ունենալով, որ ֆորումի մասին իրազեկված լինեն մեր բոլոր մանկավարժները: Մասնակիցները հավանաբար այդ մասին պատմած կլինեն իրենց դպրոցներում և անպայման պիտի պատմեն, քանի որ նրանք են նորարարության առաջին ջոկատները, որոնք իրենց տեսածը, սովորածը պիտի տարածեն կրթօջախներում, բայց թերթն էլ այդ ամենի կոնկրետ կազմակերպիչը լինելով՝ առաքելություն ունի ոչ միայն հանրության լայն շրջանակներին ներկայացնել այդ ամենը, այլև շարունակել: Համոզված ենք, որ արձագանքներ կլինեն նաև նրանց կողմից, ովքեր հնարավորություն չեն ունեցել անմիջապես դառնալ ֆորումի մասնակից: չէ՞ որ մեր մանկավարժական էլիտայի ներկայացուցիչները միայն նրանք չեն, ովքեր մասնակցել են: Մենք ունենք հզոր ներուժ, որն ասելիք ունի, և սպասում ենք:

Դատելով այդ օրերի արձագանքներից՝ համոզված կարելի է ասել, որ ֆորումի ձևաչափը, կառուցվածքը, թեմաները հիմնականում ճիշտ էին ընտրված: Բայց ազատ կամարտահայտման մի ձև էլ հարցաթերթիկների միջոցով տեղեկություն ստանալն է: Դրանք վերջում բաժանվել են մասնակիցներին, որտեղ նրանք մշել են իրենց տպավորությունները, կատարել առաջարկություններ, և պատասխաններն ամփոփելով՝ թերևս ավելի ստույգ պատկերացում կկազմվի ֆորումի մասին: Ինչպես ասաց ԱՐ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, նախարարությունը հնարավորություն կստանա հետագա աշխատանքն ավելի արդյունավետ ու ճիշտ կազմակերպելու:


Ֆորումի նորույթներից մեկն այն էր, որ մասնակցում էին նաև աշակերտներ: Նրանք ոչ միայն լսողի դերում էին, այլև ակտիվ մասնակիցների, մեծերն ասես նորովի ճանաչեցին իրենց աշակերտներին:

Ավելորդ է ասել, որ բարձրացվեցին բազմաթիվ խնդիրներ. չէ՞ որ դա այն հարթակն է, որտեղ պետք է արտահայտեն տարիներով կուտակվածը և ոչ միայն. այլև ասեին, թե ինչ են ուզում, ինչպես են պատկերացնում Արցախի կրթական տեսլականը և ինչ ճանապարհով գնալ:

Կրթական առաջին ֆորումն ավարտեց իր աշխատանքները, բայց շարունակվում է մարդկանց մտքերում, և թերթի էջերը բաց են դրանց առաջ:

Ֆորումի մասին նյութերը՝ տե՛ս 2-12-րդ էջերը

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՎԱՐԵՑ ՀԱՅՏՆԻ ԹԵՍԱԲԱՆԸ



ԱՐ կրթության, գիտության և սպորտի նախարարության հրավերով նույնքերի 6-10-ը հանրապետության ուսուցիչների, ԳԹԿ մասնագետների համար դասընթացներ վարեց հայտնի թեստաբան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մեր հայրենակից (արմատներով Հայդրուի շրջանի Ծամծոր գյուղից) Վաղին Ավանեսովը: Նա Ռուսաստանում և միջինասիական երկրներում իրավամբ մանկավարժական չափումների գիտության հիմնադիրն է: Իր հեղինակային դասընթացներով հանդես է եկել աշխարհի մի շարք երկրներում: «Թեստային ձևերի կիրա-

ռումը նոր կրթական և ատեստավորման տեխնոլոգիաներում» թեմայով Ստեփանակերտի «Վալբես գարդեն» հյուրանոցային համալիրի դահլիճում նա անցկացրեց դասախոսություններ ու պարապմունքներ: 5-օրյա դասընթացն էր ընթացքում ուսուցիչները սովորեցին կազմել թեստային ձևերով

այն, ինչ մինչև այսօր ներկայացվում էր ուսուցիչներին որպես թեստեր, ընդամենը թեստային առաջադրանքների ժողովածու էր: Թեստը բարդ համակարգ է, մանկավարժական չափումների մի տեսակը:

Վ. Ավանեսովի խոսքով՝ նպատակն է արցախցի ուսուցիչներին դնել մի ուղու վրա, որը կօգնի նրանց դուրս գալ նոր մանկավարժական ստեղծագործությունների ստեղծման՝ մանկավարժի կողմից ուսուցանման, իսկ աշակերտի կողմից՝ ուսումնասիրման, հետազոտման, ինքնուսուցման ժամանակակից ճանապարհ, որով այսօր գնում են աշխարհի լավագույն կրթական համակարգ ունեցող երկրները: Օրվա առաջին մասում դասընթացի մասնակիցները լսում էին դասախոսություն ժամանակակից մանկավարժական սկզբունքների մասին, իսկ երկրորդ կեսին՝ կատարում ուսումնասիրման աշխատանքներ: «Մինչև հիմա ուսուցիչը պատմում է, ցուցադրում, օգնում աշակերտին: Հիմա մենք պատրաստում ենք ուսուցիչներ, որոնք ի վիճակի են ոչ միայն պատմել,

այլև ստեղծել նոր մանկավարժական ստեղծագործություններ ուսումնական տեսքերի քվանտավորման միջոցով՝ թեստային առաջադրանքների ձևերով»,- ասաց գիտնականը: Նա դասընթացի մասնակիցներին է փոխանցել իր մանկավարժական սկզբունքների ու մեթոդների փաթեթը:

Ուսուցիչների առկա ուսուցմանը հետևել է մեկշաբաթյա հեռավար ուսուցումը: Նրանք պրոֆեսոր Ավանեսովին են ուղարկել իրենց քվանտավորած թեստային ձևերով առաջադրանքները:

ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանի հետ հանդիպման ժամանակ գիտնականը տեղեկացրեց, որ դրանք կստուգվեն, և լավագույնները կերաշխավորվեն տպագրության: Նախարարի խոսքով՝ կստեղծեն տարբեր առարկաների մասնագետներից կազմված աշխատախումբ, որը կբաղվի այդ նյութերի խմբագրմամբ ու հրատարակմամբ՝ այսպիսով ստեղծելով ուսումնական տեսքերի բանկ թեստային առաջադրանքների համար, ինչը կհեշտացնի ուսուցիչների աշխատանքը:

Պրոֆեսոր Վաղին Ավանեսովի մանկավարժական սկզբունքներին դեռ կանոնադրամանք «Լուսար» հաջորդ համարներում:

ԲԵՐԶՈՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՔՈՒՆԵՅԻ ՀԻՄՆԱՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԼԱՅՆ ԹԱՓՈՎ ԱՌԱՋ ԵՆ ԸՆԹԱՆՈՒՄ

Նոյեմբերի 15-ին ԱՐ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցությունը նվիրված էր Բերձորում գյուղատնտեսական թեքումով քուլեջի հիմնման աշխատանքներին: Ինչպես հայտնի է, ընթացիկ տարվա մայիսի 27-ին նախարարության և «Անուշավան Արահամյան» կրթական հիմնադրամի միջև ստորագրվել էր փոխընթաց հուշագրի Բերձորում գյուղատնտեսական թեքումով միջին մասնագիտական կրթական հաստատություն հիմնելու մասին: Հիմնադրամը ստեղծվել է 2004թ.: Այն ծնունդով պարսկահայ ամերիկացու և տիկին Անուշավան և Օֆիլ Արահամյանների ընտանեկան միջոցներով ֆինանսավորվող բարեգործական կազմակերպություն է: Նրա առաքելությունը Հայաստանում և Արցախում միջին

դատնեսական մեծ ներուժը դաշտավարության, այգեգործության, անասնապահության, մեղվապահության ոլորտներում և հարակից Սյունիքի մարզում պահանջված գյուղատնտեսական մասնագիտությունները»,- ասաց նա:

«Անուշավան Արահամյան» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկա-

թույնյանը: Նա վստահեցրեց, որ հիմնադրամը մինչև վերջ սատար է կանգնելու նոր հիմնադրվող քուլեջին, քանի որ Արցախի Հանրապետությունը ռազմավարական ուրույն մշակույթ ունի համայն հայության համար: Քուլեջը խնդիր չի ունենա ֆինանսավորման հետ կապված, խնդիրն ուղղակի ճիշտ ռազմավարության մշակումով լայնընդգրկում շրջանակով մասնագիտություններ ընտրելն է: Նրա խոսքով՝ ամենայն հավանականությամբ 2020թ. սեպտեմբերից կտրվի առաջին ակադեմիական տարվա մեկնարկը:

Սովորողների քանակի առումով էլ սահմանափակում չի լինի: Այստեղ ուսանելու կան ոչ միայն Արցախի շրջաններից, այլև Սյունիքի մարզից ցանկացողներ: Եվ քանի որ ուսանողների ներհոսք կլինի տարբեր վայրերից, հաշվի են առնվում նաև նրանց կացարանով, տրանսպորտային միջոցներով ապահովման հարցերը:

Շրջվարչականի ղեկավարը հավելեց, որ ներկայումս կադրային փնտրտվածների մեջ են: Ակնկալվում է տեղի ուժերով լուծել խնդիրը, սակայն հարկ կլինի նաև մասնագետներ հրավիրել: «Բայց դա էլ այն հրաշալի դեպքերից է, երբ կրթությունը, վերաբնակեցումը, տնտեսության զարգացումը միաձուլված են մեկ ծրագրի մեջ»,- ասաց Ստեփան Արագայանը:

Սեփ. լրատվություն



յացուցիչ Նորիկ Թունյանը տեղեկացրեց, որ հիմնադրամը Հայաստանում ունի 9 հովանավորյալ միջին մասնագիտական հաստատություն՝ ամեն մարզում մեկական, բացառությամբ Արագածոտնի մարզի, որտեղ պլանավորված է ստեղծել մյուս տարի: «Քանի որ Արցախն էլ հիմնադրամի շահառու է գլոբալ իմաստով, նախաձեռնություն եղավ նաև այստեղ ունենալ մեկ հովանավորյալ հաստատություն, Քաշաթաղի տարածաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված՝ Բերձոր քաղաքում»,- ասաց Ն.

ՖՈՐՈՒՄ

ՍԱՀՄԱՆԵԼՈՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ԱՆ ՆԱԽԱԳԱՆ ԲԱԿՈ ՍԱՀՄԱԿՅԱՆԻ ՈՒՂԵՐՉԸ ՖՈՐՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻՆ



ցահայտման հարթակ, այլև քննարկումների արդյունքում կոնկրետ առաջարկություններով հանգել այն հարցին, թե ինչպես բարելավել և փոփոխել կրթությունը, ստեղծել մի կրթական միջավայր, որտեղ ու-

«Հինգ քայլով դասի պլանավորում», «Նվաճման մշակույթ», «Ուսուցման կենտրոններ տեղափոխման մեթոդ համակարգի դասարաններում», «Կուրսված պատուհան», «Մեծ նպատակների սահմանում» խորագրերով, ինչպես նաև թեմաների վերաբերյալ տեսանյութերի դիտում ու դրանց քննարկում:

Երրորդ օրը տեղի ունեցավ ֆորումի փակման արարողությունը, որին ներկա էր ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը: Եզրափակիչ խոսքով հանդես եկան խոսնակները: Քառաթաղի շրջանի Արտաշակի միջնակարգ դպրոցի տնօրեն Վերա Խաչատրյանը ներակայացրեց համագործակցությունը ԴՀ-ի հետ և քաղված դասերը: Ֆորումի մասնակից աշակերտներն իրենց տպավորությունները հայտնեցին կրթական այս միջոցառումից և երախտագիտություն կազմակերպիչներին՝ աշակերտներին այդ կարևոր քննարկումներին հավասարի իրավունքով մասնակից անելու համար:

Եզրափակիչ ելույթներ ունեցան «Դասավանդիչ, Հայաստան»-ի զարգացման գծով տնօրեն Արթուր Մարտիրոսյանը, ԱՀ ԿԳՍ Նախարար Նարինե Աղաբալյանը, Աժ նախագահ Աշոտ Դուլյանը:

ԴՀ կազմակերպիչների և ԱՀ ԿԳՍ Նախարարության կողմից շնորհակալագրեր հանձնվեցին ֆորումի փորձագետներին ու խոսնակներին, հավաստագրեր՝ բոլոր մասնակիցներին:

Հարգելի՛ բարեկամներ:

Ի սրտե ողջունում եմ ձեզ՝ «Սահմանելով կրթության նոր տեսլականը» կրթական ֆորումի բոլոր մասնակիցներին:

Կրթության ոլորտը, իր առջեւ դրված խնդիրների յուրահատկությունից ելնելով՝ կապված մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության հետ, լուծում է ոչ միայն այսօրվա խնդիրները, այլ նաև մեծապես կանխորոշում է երկրի ապագան: Այդ իսկ պատճառով ոլորտն ունի առանձնակի դերակատարություն եւ նշանակություն մեր ժողովրդի ու պետության համար:

Հայ ժողովուրդը եւ նրա արցախյան հատվածը միշտ աչքի են ընկել իրենց մտավոր ներուժով: Մեր հայրենակիցները գիտության տարբեր ասպարեզներում հասել են մեծ բարձունքների, ճանաչում են ձեռք բերել ոչ միայն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս:

Այդ ներուժի բացահայտումը, զարգացումն ու կիրառումը պահանջում են համակարգված աշխատանք, սերտ փոխգործակցություն մայր Հայաստանի եւ Սփյուռքի միջև, տարբեր երկրների գիտակրթական հաստատությունների հետ գործնական կապերի հաստատումն ու խորացում, առաջավոր փորձի կիրառում:

Այս տեսանկյունից կարելի է պահանջված է գիտական համաժողովների, սեմինարների եւ քննարկումների կազմակերպումը, ինչը հնարավորություն է տալիս ավելի խորը եւ համապարփակ ձեռնով դիտարկել ոլորտում առկա խնդիրները, մշակել դրանց լուծման արդյունավետ տարբերակներ, մշտական կապ պահպանել ինստիտուցիոնալ եւ անհատական հարթություններում:

Մեկ անգամ ես ողջունում եմ ձեզ եւ մաղթում ակտիվ ու արդյունավետ աշխատանք: Հաջողություններ եւ ամենայն բարիք բոլորիդ:



սումնառությունը լինի հաճելի, և սովորողները գտնեն իրենց տեղը հասարակության մեջ, ինչպես նաև այդ ամենը տեղափոխել օրենսդրական դաշտ:

Լիագունար նիստում ԱՀ և ՀՀ հանրակրթության ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան ԱՀ ԿԳՍ Նախարար Նարինե Աղաբալյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդակցական Գոհար Մամիկոնյանը, «Դասավանդիչ, Հայաստան» կրթական հիմնադրամի Արցախի տարածաշրջանային ղեկավար Ար-

տում ենթախմբերում ընթացան թեմատիկ քննարկումներ:

Երկրորդ օրը հինգ ենթախմբերում զուգահեռ ընթացան քննարկումներ Համակարգի դասարաններ, Ավագ դպրոց, Ներառական կրթություն, Հայացք ներսից, ուսուցիչների, տնօրենների տեսանկյուն, Հայացք ներսից, աշակերտների տեսանկյուն, ենթախմբերում քննարկումներ փորձագետների ակտիվ ներգրավմամբ:

Նույն օրվա երկրորդ կեսին թեմատիկ խմբերում տեղի ունեցավ տեսական ներկայացում

ԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ ՆԱՐԻՆԵ ԱՂԱԲԱԼՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ «ԱՐՅԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ-2019»-ՈՒՄ

Հարգարժան պետական այրեր, հարգելի գործընկերներ, ֆորումի հարգելի մասնակիցներ:

Միտք ողջունում եմ բոլորիդ և շնորհակալությունս եմ հայտնում Արցախի կրթական ֆորումին մասնակցելու հրավերն ընդունելու համար: Ֆորումին, որը նախածեմել ենք «Դասավանդիչ, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ համագործակցությամբ, մասնակցում են կրթության կազմակերպիչներ, կրթության շահառուներ, ոլորտի փորձագետներ և շահագրգիռ անձինք: Այս ձևաչափով մենք առաջին անգամ ենք կազմակերպում մեր աշխատանքները և հուսով ենք, որ այս միջոցառումը հնարավորություն կտա նոր տեսանկյունից դիտարկել կրթության խնդիրները, և այն կանցնի բովանդակային, կառուցողական քննարկումներով ու հնարավորություն կտա սահմանել ԱՀ կրթության նոր տեսլականը: Ինչո՞վ էր պայմանավորված կրթական ֆորումի անցկացման անհրաժեշտությունը: Անշուշտ, կրթության դերի կարևորմամբ և արդի մարտահրավերներով: Կրթության ոլորտում պետական քաղաքականության հստակեցման և ռազմավարական ծրագրի մշակման անհրաժեշտությամբ: Իրավիճակային լուծումները, որոնք բնորոշ էին Ղարաբաղ-ադրբեջանական պատերազմի, խորհրդային հասարակագի փլուզման և ետպատերազմյան ժամանակաշրջաններին, արդարացիորեն չեն զարգացնում փուլ ապրող երկրների պահանջների տեսանկյունից: Մենք փորձությունների հաղթահարման դժվարին ճանապարհ ենք անցել. անկախության նվաճումից մինչև պատերազմի հետևանքների վերացում, մեր երկիրն ավերակներից բարձրացնելով և Արցախը դարձնելով համայն հայության հպարտության ու ոգեշնչման աղբյուր, հայոց հավաքական ուժի և ազգային իղծների իրականացման խորհրդանիշ: Նա, ով տեսել է Արցախը 20-25 տարի առաջ, անկաս-



կած, կգնահատի ձեռքբերումները, որոնց հասել ենք միասնությամբ ու պետական համակարգված քաղաքականության իրականացման շնորհիվ: Այդ փոփոխություններն ակնառու են նաև կրթության, հատկապես դպրոցաշինության ոլորտում: 1994թ. զինադադարի կնքումից հետո Արցախի կառավարությունը առաջնահերթության կարգով սկսեց ավերված դպրոցների վերականգնման ու նոր դպրոցների կառուցման աշխատանքները: Այդ տարիներին պետական միջոցներով և Սփյուռքի մեր հայրենակիցների ու ազգային կառույցների աջակցությամբ 100-ից ավել դպրոցներ են կառուցվել, վերականգնվել կամ նորոգվել: Դպրոցաշինության ծրագիրը շարունակվում է այսօր, և ամեն տարի մեր հանրապետությունում նոր կամ հիմնանորոգված դպրոցներ են բացվում՝ մեր երեխաների կրթության համար ապահովելով ժամանակակից շենքային պայմաններ: Այս ուսումնական տարում արդեն Քառաթաղի շրջանում շահագործման են հանձնվել Հայկազյանի նորակառույց դպրոցը և վերաբացվել է Մոշաթաղ համայնքի հիմնանորոգված դպրոցը: Իսկ հաջորդ շաբաթվա միջոցով իր դռներն է բացելու Թալիշի նորակառույց դպրոցը (արդեն բացվել է - իմք): Այդ, Թալիշի դպրոցը, որի շինարարությունը սկսվել է ապրիլյան պատերազմին հա-

ջորդած օրերին, լավագույնս վկայում է մեր հաստատականությունը և կրթության կարևորումն Արցախի իշխանությունների կողմից:

Կրթության ոլորտին պետական բյուջեից հատկացումները նույնպես շարունակական աճ են արձանագրում: Հենց պետական այսպիսի մոտեցումն է պարտադրում ոլորտի պատասխանատուներին սահմանել կրթության նոր տեսլականը նոր մարտահրավերների ու արդի խնդիրների հաշվառումով: Թեմաները, որոնք քննարկման նպատակով ներառվել են այս համաժողովի ծրագրում, բնութագրում են Արցախում հանրակրթության ոլորտում առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները:

Մեր դիտարկումներով կրթության զարգացման հիմնական խնդրանքներից է կրթության նպատակի հստակ ձևակերպման բացառությունը: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախում 12-ամյա կրթության անցումը պայմանավորված է եղել մեր կրթակարգը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Եվ որպես գլխավոր նպատակ սահմանվել է որակյալ կրթության ապահովումը: Սակայն որո՞նք են կրթության որակի մեր ընկալումն ու չափելի արդյունքը: Սրանք հարցեր են, որոնք մնացել են առկա: Արցախում ունենք գյուղեր, որտեղ կրթությունը միշտ հարգի է եղել, և դպրոցում աշխատել ու աշխատում են գործի նվիրյալներ, որոնք խոր գիտելիքներով են զինում իրենց աշակերտներին: Այդ գյուղերից ամեն տարի դպրոցի շրջանավարտները գնում են բարձրագույն կրթություն ստանալու ու այլևս չեն վերադառնում: Մի պարզ պատճառով. իրենց ընտրած մասնագիտությամբ գյուղում աշխատել չեն կարող և իրենց ապագան այդտեղ չեն տեսնում: Արդյունքում գյուղը տարեցտարի ծերանում է ու մարում, ինչպես, օրինակ, Ասկերանի շրջանի Դահիավ,

Սզնեք կամ Մարտունու շրջանի Կաղարծի գյուղերը: Այս ցանկը, ցավոք, շարունակելի է: Իսկ դա արդեն սպառնալիք է երկրի անվտանգությանը: Հետևաբար, կարևոր է հարցադրումը. ինչպիսի՞ վերջնադրույթ ենք ակնկալում մենք կրթություն իրականացնելով: Ինչպե՞ս կազմակերպել կրթությունը, որպեսզի այն լինի նաև արդյունավետ: Ինչպե՞ս համադրել որակյալ կրթությունը և երկրի անվտանգության ապահովումը: Առաջնահերթորեն կրթության բովանդակության մեջ կատարելով առարկայացանկի ընտրությունից մինչև դասագրքերի բովանդակության փոփոխություն, ժամանակի և երկրի պահանջներից բխող կողմնորոշիչների սահմանում, դասավանդման մեջ անհրաժեշտ հմտությունների զարգացման ներառում, դասաժամերի օպտիմալ բաշխվածություն և հաջորդականություն, կրթական արդյունքի գնահատման համակարգի կատարելագործում: Դասագրքերի ու առարկայական ծրագրերի ծանրաբեռնվածության մասին շատ է բարձրաձայնվել: Ֆորումի հայտադրման մեջ և ամենաշատը այս թեմային են անդրադարձել: Ֆորումի շրջանակներում թեման կքննարկվի հասկանալու համար, թե որոնք են բովանդակության հետ կապված հիմնական խնդիրները: Կամ ինչ փոփոխություններ են ակնկալում ուսուցիչներն ու աշակերտները: Արդյո՞ք միայն բովանդակությունն է խնդիրը, թե՞ նաև ուսումնական նյութի մատուցման ձևը, ուսուցման մեթոդը կամ դասաժամերի ոչ արդյունավետ բաշխումը: Մենք անընդհատ ահազանգում ենք աշակերտին չափից ավելի ծանրաբեռնելու մասին, բայց և շարունակում ենք ուսումնական պլանով սահմանված բաղադրիչների ժամաքանակի հաշվին էլ ավելի ծանրաբեռնել երեխային, որպեսզի ապահովենք ուսուցչի ծանրաբեռնվածությունը: Քիչ չեն այն դեպքերը, երբ դասացուցակը ևս հարմարեցնում ենք ուսուցչի զբաղվածությանը: Մենք աշակերտներին

ԽՆԴԻՐՆԵՐ

տալիս ենք գիտելիքներ, որոնք նա կարող է հաջորդ օրը մոռանալ, և դրանից նրա կյանքում ոչինչ չի փոխվի: Մինչդեռ բավարար գիտելիքներ չենք տալիս իր ինքնության մասին, այն մասին, թե ինչպես կարող է նա փոխել իր միջավայրը, ինչպես կարող է բարեփոխել իր կյանքը կամ երկրի կյանքը: Այսօր ուսուցչի առջև նստած է նոր սերնդի ներկայացուցիչը, որը բավարար չափով տիրապետում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին և ազատորեն օգտվում է տեղեկության այն անասման պաշարներից, որ ընծեռում է համացանցը: Եվ այդ իրողության մեջ դասավանդման նախկին մեթոդները չեն կարող արդյունավետ լինել:

Այս օրերի ընթացքում պիտի քննարկենք ու հասկանանք, թե ինչպես պետք է փոխվի ինքն ուսուցիչը, մասնագիտական զարգացման ինչ ճանապարհի պիտի անցնի: Բոլոր խնդիրները շարժառիթ են: Եվ անշուշտ, որակյալ ու արդյունավետ կրթության ապահովման խոչընդոտներից է նաև ուսուցչի ցածր աշխատավարձը: 2020թ. հունվարի 1-ից ինչպես ՉՀ-ում, Արցախում և 10%-ով կբարձրանա ուսուցչի աշխատավարձը: Մենք հասկանում ենք, որ ուսուցչի աշխատանքն ըստ արժանիքի զնախատելու համար այդ տոկոսային աճը հեռու է բավարար լինելուց: Սակայն պարզ է նաև, որ աշխատավարձի էական փոփոխությունը անհնար է առանց համակարգային փոփոխությունների: Այսօր մեր հանրապետությունում ուսուցչի աշակերտ հարաբերակցությունը 5:1 է: Սա՝ միջին տվյալներով: Երկու տասնյակից ավել գյուղեր ունենք, որոնցում դպրոցում աշխատողների թիվն ավելի է, քան աշակերտների: Եվ եթե մայրաքաղաքի դպրոցում մեկ աշակերտի վրա կատարվող տարեկան ծախսը կազմում է 150 հազարից 300 հազար դրամ, ապա փոքր համակազմ ունեցող դպրոցներում այդ թիվը տատանվում է 1-1,5 մլն դրամի սահմաններում: Ընդ որում, մի քանի անգամ գերազանցող ծախսը չի երաշխավորում որակյալ կրթություն: Այդ դպրոցներում, որպես կանոն, բնագիտական առարկաների և օտար լեզուների թափուր տեղերը չեն համարվում անհրաժեշտ մասնագետ չլինելու պատճառով: Արդյունքում աշակերտները տվյալ առարկաները չեն անցնում կամ ստանում են ոչ լիարժեք գիտելիքներ: Փոքր համակազմ ունեցող դպրոցների խնդիրը մեր համակարգի ամենախնդրելի կետն է: Եվ առանց այս խնդրի լուծման հնարավոր չէ բարեփոխել կրթության համակարգը: Դպրոցը գյուղ է պահում. այս պնդումն էր պատճառը, որ անցնելով 12-ամյա կրթության՝ մենք ճանապարհի կեսից տեղի տվեցինք ու հրաժարվեցինք շրջաններում ավագ դպրոց ունենալու գաղափարից: Արդյունքում ավագ դպրոց ունենք միայն մայրաքաղաքում, իսկ գյուղերում ունենք միջնակարգ դպրոցներ, որտեղ կա 1-2 աշակերտ: Նման դպրոցներում հասկանալի պատճառներով մասնագետների խնդիր կա: Ստեղծվել է փակ շրջա. մասնագետ չկա, որովհետև դասաժամերը քիչ են, և հետևաբար, ցածր է վարձատրությունը, դասաժամերը քիչ են, որովհետև աշակերտներն են քիչ, իսկ աշակերտները քիչ են, որովհետև ծնողները չեն ուզում, որ իրենց երեխան 21-րդ դարում զրկված լինի ֆիզիկական անզվերեն սովորելու հնարավորությունից, և թողնելով գյուղը՝ տեղափոխվում են այլ բնակավայր:

Փոքր համակազմ ունեցող դպրոցներում մեկ կամ երկու աշակերտների տեղաշարժը կարող է դասարան-կոմպլեկտի ավելացման կամ նվազման հանգեցնել: Իսկ դա իր հերթին ազդում է ուսուցչի աշխատավարձի վրա: Դա է պատճառը, որ այդ դպրոցներում ուսուցիչները փորձում են խոչընդոտել աշակերտի մասնագիտական կողմնորոշմանը, երբ վերջինս որոշում է 9-րդ դասարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել արհեստագործական ուսումնարանում կամ մասնագիտական քոլեջում: Դպրոցները գյուղում առկա սոցիալական խնդիրներին ծառայեցնելով՝ մենք սկանայից նպաստում ենք ավելի մեծ խնդիրների առաջացմանը: Գյուղերից մարդկանց արտահոսքի պատճառ է դառնում գյուղի դպրոցում ոչ լիարժեք կրթությունը: Մասնագետների խնդիրը լուծելու պետականորեն մշակված մեխանիզմը՝ ուղեգրման կարգը, թեև մասնակիորեն լուծել է խնդիրը, բայց առաջ է բերել նոր խնդիրներ: 30 կմ և ավելի

հեռավորությամբ գյուղ ուղեգրվող ուսուցչին պետությունը աշխատավարձի 50%-ի չափով հավելավճար է տալիս, փոխհատուցում տան վարձը: Լինում են դեպքեր, սակայն, երբ այս արտոնությունից օգտվելու նպատակով փաստացի նույն համայնքում ապրող ուսուցիչը փոխում է գրանցումը կամ օգտագործում այլ հնարքներ: Այսօր փոքր դպրոցների մասնագետների խնդիր լուծման տարբերակներից մեկը կարող է դիտարկվել հեռավար ուսուցումը: Դա հնարավոր կլինի իրագործել որակյալ ինտերնետային կապի առկայության պայմաններում, ինչը նույնպես խնդիր է: Սակայն խնդիրը կարևոր է դիտարկել նաև այլ տեսանկյունից: Ինչքան փոքր է դպրոցը, այնքան սահմանափակ է հաղորդակցության և հատկապես կենդանի շփման հնարավորությունը: Դպրոցում, որտեղ սովորում է 10 աշակերտ երեք կամ հինգ ընտանիքից, հաղորդակցությունը շրջանակը շատ սուղ է: ԱՅ-ի՝ դեռևս դե յուրե չճանաչված լինելու և Աղբեջանի կողմից տասնամյակներ շարունակ Արցախը մեկուսացման մեջ պահելու հանգամանքները խոչընդոտում են ԱՅ քաղաքացիների հիմնարար իրավունքների, այդ թվում՝ կրթական իրավունքի իրացմանը: Եվ զրկված լինելով միջազգային կամ եվրոպական որևէ կառույցի, կազմակերպության, Համաշխարհային բանկի կողմից կրթության ոլորտում իրականացվող ծրագրերից օգտվելու հնարավորությունից՝ մենք առայժմ ստիպված ենք ինքներս միջոցներ հայթայթել Արցախում կրթության մեծ ու փոքր խնդիրները լուծելու համար: Եվ եթե չլիներ ՀՀ կառավարության և Սփյուռքի ազգային կառույցների ու հայրենակիցների մշտական աջակցությունը, շատ խնդիրներ անհնար կլինեին լուծել: Բայց և այնպես, ուզում են ընդգծել, որ մեր կրթության և Արցախի ընդհանուր զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը, ըստ իս, անձի սոցիալականացման, հաղորդակցման հնարավորությունների սակավությունն է, համայնքների մերփակվածությունն ու մեկուսացումը և վերջապես գլոբալ մտածելակերպի բացակայությունը: Եվ ինչքան փոքր է համայնքը, այնքան ավելի ընդգծված են այդ խնդիրները: Հետևաբար, մենք պետք է հստակեցնենք նաև այդ ուղղությամբ մեր հետագա անելիքները:

Ֆորումի շրջանակներում կքննարկվի կրթական արդյունքի գնահատման թեման: Գնահատման համակարգի փոփոխման անհրաժեշտության մասին ևս շատ է խոսվում: Քննարկումների արդյունքների և աշակերտների ինքնադասնախնդարի անհամապատասխանությունը չի կարող չհանգստացնել, և այս խնդրի լուծումն ուղղակիորեն առնչվում է քվարկածա բոլոր խնդիրներին:

Դպրոցի կառավարման խնդիրներն. «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ուսումնական հաստատության կառավարման կարգը այդպես էլ կիրառում չգտավ Արցախի դպրոցներում: Կոլեգիալ մարմինը՝ խորհուրդը, չկայացավ: Ու թեև խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության կարգ հաստատվեց, տնօրենների ընտրությունը չեղավ: 2014թ. կառավարության որոշմամբ ստեղծվեցին «Շրջանների պետական հանրակրթական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ներ՝ դպրոցների ֆինանսատնտեսական գործունեությունը համակարգելու նպատակով: Կառավարման այդ մոդելը, սակայն, չապացուցեց իր արդյունավետությունը: Ընդհակառակը, այսօր ակնհայտ են խնդիրները շրջանների վարչակազմի ԿՍ բաժինների և այդ ՊՈԱԿ-ների միջև: Կենտրոնացված կառավարման այս մոդելը, կարելի է ասել, չարդարացվեց: Նաև տեղի ունեցավ հետևյալը. այսօր մենք նախադպրոցական կրթության հնարավորություն ենք ստեղծում նաև գյուղական համայնքներում, և ստացվում է, որ գյուղում ստեղծվում է մանկապարտեզ, որն ունի ՊՈԱԿ-ի կարգավիճակ, իսկ դպրոցը ենթարկվում է «Պետական հանրակրթական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ին: Սա նույնպես խնդիր է, և ներկայումս մեր կողմից ուսումնասիրվում է գյուղական համայնքներում այդ ուսումնական հաստատությունների կենտրոնացված կառավարումը շրջակայքում համայնք տեղափոխելու խնդիրը:

Մեր ֆորումի ծրագրում ներառված է նաև ավագ դպրոցի թեման: Եվ այստեղ նույնպես խնդիրներն ակնհայտ են: Դրանք կապված

են նպատակադրման, հնարավորությունների արդյունավետ օգտագործման և հոսքային ուսուցման ու մասնագիտական կողմնորոշման հետ:

Ֆորումի հայտադիմումներում առանձնացված խնդիրների շարքում հաճախակի կրկնվողներից է ներառական կրթության թեման: Այստեղ նույնպես մեր քայլերը թերի են, որովհետև հայտարարելով ընդհանուր ներառական կրթության անցման մասին, մենք բավարար չափով նախապատրաստական աշխատանք չենք տարել: Եվ ուսուցչին թողել ենք մենակ իրեն անձանոթ խնդրի հետ: Մի կողմից ձգտելով սահմանել ընդհանուր ներառական կրթություն և խնդիրներ ունեցող երեխաներին ինտեգրել հասարակությանը՝ մենք նրանք բերել ենք դպրոց ու ավելի ընդգծել նրանց առանձնահատուկ լինելը: Իհարկե, դպրոցներում ներդրել ենք մասնագետների հաստիքներ, բայց չենք վերապատրաստել ուսուցիչներին, տնօրեններին: Այս ուղղությամբ վերջին ժամանակներս սկսել ենք համագործակցել «Հույսի կամուրջ» ՀԿ-ի հետ և արդեն մի քանի դասընթաց կազմակերպել ու աշխատանքներ ենք իրականացնում Ստեփանակերտում Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Բայց մենք պետք է անպայման ներառական կրթությունը ներառենք մեր ընդհանուր մանկավարժական կրթության մեջ՝ նախապատրաստելով արդեն բոլոր նրանց, ովքեր պատրաստվում են մանկավարժ դառնալ, հենց մասնագիտական կրթության ժամանակ տալ այդ գիտելիքները:

ՀՀ-ում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիքը, որը մեզանում նույնպես նախատեսված է ծրագրով, բայց դա կապված է շատ մեծ ծախսերի հետ, և առայժմ չենք կարողանալու գտնել խնդրի լուծումը:

Մենք ֆորումի աշխատանքներին ներգրավել ենք նաև աշակերտների, քանի որ մեզ համար կարևոր է նաև նրանց կարծիքը: Եվ շատ հետաքրքիր է համադրել այն խնդիրներն ու լուծումները, որոնք ներկայացրել են աշակերտները, և որոնք ներկայացրել են տնօրեններն ու ուսուցիչները: Մենք այդ հայտադիմումներն ստանալով՝ կուտակել ենք ահռելի նյութ ուսումնասիրության համար և իհարկե, մեր աշխատանքները շարունակելու ենք այս ֆորումից հետո ու խնդրելու ենք, որ լրացնեք գնահատման թերթիկներ՝ նրանցում նշելով ձեր կարծիքը, տպավորությունները՝ նորից վերագնահատելով ձեր պատկերացումները կրթության խնդիրների ու լուծումների մասին: Այս ամենը մեզ հնարավորություն է տալու գնահատելու ինչպես այս ֆորումի արդյունավետությունը, այնպես էլ հասկանալու, թե իրականում ինչպես պետք է փոխվեն մեր պատկերացումներն ու որոշումները կրթության վերաբերյալ:

Ես ուզում եմ հատուկ ընդգծել «Դասավանդիչ, Հայաստան» կրթական հիմնադրամի մասնակցությունը Արցախում կրթության զարգացմանը, նրա խնդիրների լուծմանը, և պատահական չէ, որ հենց այդ հիմնադրամն ենք ընտրել որպես կրթության գործընկեր այս ֆորումի կազմակերպման համար, քանի որ վերջին տարիներին հենց նրանց միջոցով ենք կարողացել էական փոփոխություն մտցնել մի շարք համայնքներում, գյուղական դպրոցներում: Եվ այսօր ունենք 30 ուսուցիչ, որոնք «Դասավանդիչ, Հայաստան»-ի ծրագրով եկել և դասավանդում են Արցախի հեռավոր գյուղերում ու ոչ թե պարզապես դասավանդում են, այլև ոգեշնչում երեխաներին, կարողանում են բացահայտել նրանց ներուժը և նպաստել համայնքի զարգացմանը՝ գուցե նաև պահովելով նրա ապագա վերածնունդը: Մենք շահագրգռված ենք այս համագործակցությունը ընդլայնելու հարցում, և ուզում են շնորհակալություն հայտնել ֆորումի կազմակերպման նախաձեռնությանը միանալու համար «Դասավանդիչ, Հայաստան»-ին: Նաև ուզում են շնորհակալություն հայտնել մեր փորձագետներին, որոնք կարևոր դերակատարներ են կրթության ոլորտում: Եվ ակնկալում ենք նրանց մասնակցությունը ոչ միայն այս ֆորումի աշխատանքներին, այլև հետագա համագործակցություն մեր կրթության խնդիրները լուծելու, ավելի որակյալ և ավելի արդյունավետ կրթություն ունենալու համար:

Պարզևատրում

ԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ԱՐՃԱՄԻ ՀԵՏ ԿՆԱՐՈՒՆԱԿՎԵՆ



Արցախի կրթությանը և գիտությանը մասնագետ ծառայությունների համար Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի (ՀԳԱ) նախագահ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մինասյանը ԱՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով: Նոյեմբերի 13-ին լրացավ գիտնականի ծննդյան 70-ամյակը: Պետական բարձր պարգևը նույն օրը Ս. Մինասյանը ստացավ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում նախարար Նարինե Աղաբալյանի կողմից: Ներկա էին ՀԳԱ Արցախի մասնաճյուղի ղեկավար, Աժ պատգամավոր Արամ Ավանեսյանը, Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը, նախարարության աշխատակիցները:

Շնորհավորելով Ս. Մինասյանին հոբելյանի և բարձր պարգևի համար՝ Ն. Աղաբալյանն ընդգծեց գիտնականի կյանքի հետաքրքիր ճանապարհը, պատասխանատու առաքելությունները, որոնցից դուրս չի մնացել Արցախը. «Բոլոր այն խնդիրները, որոնցով Դուք զբաղվում եք, անմիջականորեն կապ ունեն Արցախի տնտեսության հետ, և մենք Ձեզին գիտական թե խորհրդավորական դեռ մեծ ակնկալիքներ ունենք: Եվ հիդրոէներգետիկական, և ռազմարդյունաբերությունը մեր տնտեսության կարևորագույն ուղղություններ են, և Ձեր մասնագիտական ու ակադեմիական գիտելիքները օգտակար կարող են լինել մեր երկրի զարգացմանը»:

Երախտագիտություն հայտնելով Արցախի իշխանություններին բարձր պատվի արժանացնելու համար՝ Ս. Մինասյանն ասաց, որ հետապու էլ Հայաստանի ճարտարագիտական ակադեմիան օգնության ձեռք կնեկնի Արցախի կրթության և գիտության, ինչպես նաև արդյունաբերության զարգացմանը:

Արպատ Ավանեսյանը հոբելյարի հետ գործընկերային երկար ճանապարհ է անցնել: Օրվա խորհրդից խոսելուց առաջ նա երև գնաց ավելի քան 30 տարի՝ դեպի Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի կողմից նրա ռեկտոր Յուրի Սարգսյանի նախաձեռնությամբ Արցախում նոր կրթական համակարգ ստեղծելու աշխատանքները: «Այդ պարագայում դարձյալ մենք նորից մեր հայացքն ուղղեցինք դեպի պոլիտեխնիկական ինստիտուտ և Հայաստանի ազգային ակադեմիա, թե էլ ովքեր և ինչ կարգավիճակով կարող են համոզել գալ Արցախում», - վերհիշում է Ա. Ավանեսյանը, որն այդ տարիներին ակտիվորեն զբաղված էր այդ հարցերով: Բնական է, որ առաջինը դիմեցին հայաստանյան ընկերներին, որոնք պատրաստ էին գալ Արցախ և ռեբակոնստրուկցիայի նպատակով, ստեղծել լաբորատորիաներ, որոնք ըստ օրվա պահանջի աշխատում էին:

Արցախի հետ Ս. Մինասյանի գիտական կապերն ավելի խորացան այստեղ Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի մասնաճյուղի բացելով, որն արդեն տասը տարի է, ինչ գործում է:

Ս. Մինասյանը, որը եղել է քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի գլխավոր տնօրեն, ներկայումս՝ գլխավոր խորհրդական, ասաց, որ հեկտերի և հանքարդյունաբերության ոլորտում նույնպես ուսումնասիրություններ են կատարում՝ սխալ նախագծեր թույլ չտալու նպատակով:

Առաջիկա տասը տարվա կտրվածքով գիտնականը ծրագրեր ունի կապված Արցախի համար:

Սեֆ. լրատվություն

ՖՈՐՈՒՄ-ԵՆՈՒՅԹՆԵՐ

ՕԳՏԱՎԵՏ ԲՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱԿՆԿԱԼԵՆՈՎ



Գոհար ՄԱՍԻԿՈՆՅԱՆ, 37 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդակցական

Բոլորս միասին՝ աշակերտ-ուսուցիչ-կրթության փորձագետ, կրթության ոլորտում որոշում կայացնող՝ անցնելու ենք սեփական անձի վերափոխման ճանապարհ, որի ընթացքում փոփոխվելու են խնդիրների ընկալումներն ու հնարավոր լուծումների շրջանակները: Մենք համոզված ենք, որ անհատի վերափոխման ճանապարհը համարյա վերափոխման կարևորագույն գործոն է: Յուրաքանչյուր ոք կարող է սկսել հանրային վերափոխման գործընթաց՝ սեփական անձի վերափոխումը համարելով իր առաջնային անելիքներից մեկը: Անհատի զարգացման ուղղությամբ պետության հիմնական գործառնությունը քաղաքացիների ստեղծարար ունակությունների զարգացման և կիրարկման համար հնարավորություններ ստեղծելն է հանրային կյանքի բոլոր բնագավառներում: Կարող է, արդյոք, պետությունը բարեփոխել կրթական համակարգը, որպեսզի նպաստի այդ հնարավորությունների ու կարողությունների ձևավորմանը: Ինչ էլ լինի պատասխանը, մեկ բան հստակ է՝ հաջողության հասնելու բանաձևը կրթությունն է, աշխատասիրությունը, կրթական մակարդակի և մասնագիտական հմտությունների շարունակական զարգացումը: Այնինչ այսօր ահագնացող արագությամբ փոփոխվող աշխարհը նոր մարտահրավերներ է ներկայացնում, առաջ են գալիս կյանքին համաքայլ, երբեմն նույնիսկ ավելի առաջանցիկ փոփոխվելու կարողության հրամայականը, չփոփոխվող պայմաններում կողմնորոշվելու ծեռք բերած գիտելիքն ու հմտությունը նորացնելու և համարժեք կիրառելու ունակությունը: Տարբեր իրավիճակներում ինքնուրույն որոշումներ կայացնելու, հասարակական պատասխանատվություն ստանձնելու, ժամանակակից աշխարհի քաղաքացիական արժեքներ կրելու կարողությունը կր-

թության համակարգի առաջնագիծ են բերվում՝ փոխակերպելով կրթական ողջ գործընթացի տրամաբանությունը: Հույս ունեն, որ այս քննարկումների ընթացքում կբախվեն բազմաթիվ կարծիքներ, փորձագիտական մտտեցումներ, և ի վերջո այդ բախման արդյունքում կծնվի բոլորի կողմից ընդունելի տեսակետ, ու մենք կսկսենք առաջնորդվել այդ տեսակետով: Արցախի բոլոր խնդիրները արդիական են նաև Հայաստանի կրթական համակարգի համար, ու այդ խնդիրները վերացնելու և բարեփոխում սկսելու գործընթացը թավշյա հեղափոխությունից հետո սկսել է նաև 2018թ. ձևավորված նոր կառավարությունը: Ոլորտային նախարարությունը սկսել է վերափոխել կրթական պետական չափորոշիչը, մշակում է 2019-2025թթ. կրթության ռազմավարությունը, որն անդրադառնում է բարձրագույն բոլոր խնդիրներին: Բայց մինչ իրավական վերջնական փաստաթղթերի ստեղծումը ավելի առարկայական, գործնական քայլեր ենք փորձել անել և փոփոխություն մտցնել արժեքային համակարգում: Ստեղծվում են պայմաններ, որ կրթությունը աշակերտի և ուսուցչի համար լինի ոչ թե պարտադիր կատարման ենթակա, այլ հաճելի գործընթաց: Ըստ էության Հայաստանն ու Արցախը կրթական բարեփոխման ճանապարհին չեն կարող միջանցիկ անկախ գործել: Սա առաջին անգամն է, երբ այսպես ուսուցիչներ հավաքվել են ու որոշում կայացնողներին պետք է ներկայացնեն այն խնդիրները, որոնք իրենք տեսնում են կրթական գործընթացն իրականացնելիս:



Արմեն ՀՈՎՀԱՆՆԻՅԱՆ, «Դասավանդիր, Հայաստան» Արցախի տարածաշրջանային ղեկավար

«Դասավանդիր, Հայաստան»-ը իր ներդրումն է անում հանրակրթական ոլորտի զարգացման ու բարելավման գործում՝ հավաքագրելով համապատասխան մասնագետներ

և երկու տարով գործուղելով Հայաստանի կամ Արցախի ամենակարիքավոր համայնքները: Ակնկալում ենք, որ այս օրերի ընթացքում կունենանք օգտավետ քննարկումներ, փորձի փոխանակման հնարավորություն, կկարողանանք գտնել համագործակցության նոր ուղիներ ու կրթական ոլորտում առկա մի շարք հարցերի պատասխաններ և էլ ավելի կաշխատենք արդյունավետ լուծումներ գտնելու ուղղությամբ: Խորապես համոզված են, որ այս ֆորումը հաջողվելու դեպքում կկրի շարունակական բնույթ և թույլ կտա մեր բոլորիս ուշադրության կենտրոնում պահել համակարգի փոքր ու մեծ խնդիրները: Արցախում ծավալած 2-3 տարիների ընթացքում մենք գործ ենք ունեցել որոշակի խնդիրների հետ, որոնք հիմնականում բաժանվում են երկու խմբի. ծրագրային և տեխնիկական: Խնդիրներից որոշները խնդիր են ոչ միայն «Դասավանդիր, Հայաստան»-ի համար, այլև քարտեզագրված են և պետական ապարատի ուշադրության կենտրոնում են: Տեխնիկական խնդիրներից է համայնքների հեռավորությունը: Ինչքան էլ «Դասավանդիր, Հայաստան»-ը ձգտում է ապակենտրոնացված կառավարման, միևնույն է, Արցախի մեր գործընկեր դպրոցների ցանկում ունենք դպրոցներ, որոնք շատ հեռու են, և որտեղ գործուղված ուսուցչին Ստեփանակերտ գալուց անհրաժեշտ է իրավիճակից հրավերել կապակցված է երկար ժամանակի ու ծախսերի հետ: Կամ անձամբ դասախոսում կատարելու, ասել է թե՛ մեր կողմից գործուղված ուսուցչին անհրաժեշտ օժանդակությամբ և մենթորությամբ ապահովելու համար պահանջվում է ամբողջ մեկ աշխատանքային օր: Որակյալ և անվտանգ ճանապարհների բացակայությունը նույնպես խնդիր է պարբերաբար այցերի, հատկապես ծնունդ ամիսներին դասախոսներ կատարելու և, ինչու չէ, միջամայնքային փոխայցեր կազմակերպելու համար: Համացանցի առկայություն, արագություն և որակ: Կերը նշված խնդիրների որոշակի լուծում կարող է լինել համացանցի առկայությունը, և հնարավոր կլինեն դասախոսներ կատարել հեռավար տարբերակով: Մինչդեռ այս անգամ կրկին բախվում ենք դժվարությունների. դեռ կան դպրոցներ, որոնք համացանցով ապահովված չեն, կամ էլ համացանցի արագությունը որակից այնքան ցածր է, որ հնարավոր չէ տեսակապ հասնալու կամ տեսաֆայլեր ուղարկել միմյանց: Տների ու դասարանների բացակայություն:

Ամենից շատ կարևորում ենք այս կետը որպես խնդիր, քանի որ գործնականում երբ հայտարարվում է, որ այսինչ դպրոցում կա այսինչ մասնագետի կարիք, առաջին հարցը, որ բարձրացնում են, կացարանի առկայությունն է: Կացարան ասելով չենք հասկանում տուն, որն ապահովված է տաք ջրով, լոգարանով կամ եվրապատուհաններով: Մենք հասկանում ենք չորս ապահով պատ, տանիք, հոսանք և մոտիկ ինչ-որ տեղ ջրի առկայություն: Տարբեր միջազգային կազմակերպությունների բացակայությունն Արցախում: Ցանկացած առաջընթացի բանաձևը համագործակցությունն է: Համագործակցությունը տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, որոնք իրենց փորձը, ներուժը, ռեսուրսները, ծրագրերը կարող են բերել Արցախի և ծառայեցնել ի շահ բնակիչների: Բայց Արցախի աշխարհաքաղաքական սահմանափակումներից ելնելով՝ շատ կազմակերպությունների համար անհնար է դառնում մուտք գործել և աշխատել այստեղ: Շրջանի դպրոցների, ինչպես նաև համայնքների համագործակցության պատրաստակամություն և շահագրգռվածություն: Այսօրվա դրությամբ Քաշաթաղի շրջանում ունենք 21 մասնակից ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ ուսուցիչների սուր կարիք կա, այլ նաև նրա համար, որ իրենցից է եկել «Դասավանդիր, Հայաստան»-ի հետ համագործակցությունը: Ծրագրային խնդիրներից է՝ բազմազավակ ընտանիքների տեղաշարժ: Լինում են դեպքեր, երբ մի փոքր դպրոցում սովորում է ընդամենը 12 աշակերտ, և նրանցից 7-ը մի ընտանիքից է, ու հանկարծ այդ ընտանիքը տեղափոխվում է մեկ այլ համայնք, և պլանավորվածը տակնուվրա է լինում: Ձևավորվում են նոր համակազմ դասարաններ, ինչն ինքնին ենթադրում է նոր գործընթաց սկսելու անհրաժեշտություն: Ծրագրային խնդիրներից են՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ ոչ ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն, բազմակուսակետ դասարաններ, որակյալ մասնագետների, առհասարակ ուսուցիչների բացակայություն: Խնդիրները բազմազան են և շոշափում են գրեթե բոլոր ոլորտները՝ սկսած ենթակառուցվածքներից մինչև սոցիալական ոլորտ: Այս խնդիրները վերահանդերձ են և լուծումներ առաջարկողները պետք է լինենք բոլորս միասին: Այդ իսկ պատճառով ստեղծվել է երկխոսության այս հարթակը:

ԱՄՓՈՓՈՒՄ Է ՓՈՐՁԱԳԵՏ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԸ Քննարկումներ ենթախմբերում



Մենք խոսում էինք կրթության նպատակի մասին: Ի սկզբանե երբ քննարկում էինք, թե ով է կրթության պատասխանատուն, ով է ձևավորում կրթության նպատակը, ունեինք տարբեր կարծիքներ: Կար կարծիք, թե կրթության պատասխանատուն կամ կրթության նպատակադրություն իրականացնողը պետությունն է: Ունեինք կարծիք, որ կրթության պատասխանատուն անհատն է, որովհետև ի վերջո կրթությունը նրա իրավունքն է, և ինքն է իր կյանքի տերը: Կարծիք կար նաև, որ պատասխանատուն հասարակությունն է: Ո՞րն է իրական ճշմարտությունը: Վերջում եկանք համաձայնության այն կետի վրա, որ կրթության նպատակը պետք է բավարարի այդ երեքի շահե-

րը միաժամանակ: Քանի որ կրթությունը, այո, անհատի իրավունք է, բայց միաժամանակ կրթությունը պետության կայացման, զարգացման, ինքնուրույնության, միասնականության հիմքն է: Եվ այստեղ պետությունը մեծ դերակատարում ունի որպես կրթության պատասխանատու, ու հենց այն, որ կրթությունը վճարվում է նաև հարկատուների հաշվին և պետական քաղաքականության մաս է, դրա վառ ապացույցն է: Հետագա մեր բոլոր աշխատանքները կառուցում էինք հենց այն բանի շուրջ, որ այս երեք շահառուների շահերի մեկտեղումը գերնպատակ է, ու այդ երեքի՝ անհատի, հասարակության և պետության միջև հավասարակշռությունը պետք է կարողանանք գտնել: Պայմանավորվեցինք այն բանի շուրջ, որ այս երեք շահառուներից մեկի գերադասումը, մյուսներից առանձնացնելը բերում է ծայրահեղության, ու եթե, ասենք, պետությունն է դառնում միանձնյա պատվիրատուն, կարող ենք ունենալ Հյուսիսային Կորեայի օրինակը: Եթե մենք առանձնացնում ենք անձին ու անպետում ենք մնացած շահառուներին, ապա կարող ենք ունենալ պարզապես կոսմոպոլիտ մարդ՝ անհայտ քաղաքացիությամբ: Բավարարվեցինք այն բանի շուրջ, որ ի վերջո կրթության արդյունքը քաղաքացի ձևավորելն է: Աշխարհում կան շատ կրթական ծրագրեր,

բայց չկա գեթ մեկ կրթական ծրագիր, որը նպատակ ունի ձևավորել Արցախի քաղաքացի: Ու դա նշանակում է, որ ցանկացած պետություն, ուզի թե չուզի, գումար ունի թե չունի, ցանկություն ունի թե չունի, պարտավորված է իր ազգային կրթական համակարգն ստեղծել իր առաջնահերթություններից, իր առանձնահատկություններից, մարտահրավերներից ելնելով և իր ինքնությունը պահելու, վերարտադրելու, լինելությունը, շարունակականությունը ապահովելու համար: Դրանից հետո աշխատանքները գնացին աշխատանքային խմբերում: Եվ այս հարցի պատասխանը հասկանալու համար հարցը մասնատեցինք 5 թեմայի ու փորձում էինք հասկանալ, թե ինչպիսին պետք է լինի կրթությունն Արցախում. ինտելեկտուալ՝ գիտելիքների չափանշների տեսանկյունից (ինչ գիտելիքներով պետք է օժտված լինի քաղաքացին դպրոցն ավարտելուց հետո), մշակութային (այս բաղադրիչը կրթության բարձրագույն գործոններից մեկն է, ինքնության պահպանումը և շարունակականությունը) և արժեքային, որի համացանցի շուրջն այդ ամենը հավաքվում է, այսինքն՝ հանուն ինչի ենք այս ամենը անում: Չորրորդ խումբն աշխատում էր հմտությունների ուղղությամբ. ինչ հմտություններ են պետք մեր առջև դրված այդ մարտահրավերները կյանքի կոչելու համար: Հինգ-

րորդ խումբը կենտրոնացած էր այն հարցի շուրջ, թե որն է այն հիմնական տարբերությունը, որը կառանձնացնի Արցախի քաղաքացի ձևավորող կրթական համակարգը այլ երկրների կրթական համակարգից: Ի վերջո խմբում ձևավորվեց հիմնական պատկերացում (տարածայնություններով և տարակարծություններով հանդերձ), ընդհանուր նպատակ՝ հանուն ինչի է պետք աշխատել: Քանի որ խոսեցինք արժեքներից, պարզ է, որ մեզ մոտ ազգայինը, պետականը շատ հաճախ էին հնչում: Բայց ուզում ենք այն բանի մասին խոսել, որն ինձ համար շատ գնահատելի է: Այսպես, երբ խոսում էինք ազգային մշակույթի տարածման ու զարգացման մասին, դա ասվում էր համաշխարհայինի հետ համադրելու, համաշխարհայինի հետ բաց լինելու ենթատեքստում: Սա շատ կարևոր է, քանի որ դրա մասին էլ խմբում բարձրաձայնեցին, որ ինչքան էլ ասում ենք ազգային կրթություն, այդ ազգայինը արտահայտվում է նպատակի մեջ: Ազգային կրթություն՝ նշանակում է, որ քունը չմոռանալով՝ կարողանում են հարդոր լինել աշխարհի հետ, ու այդ արժեք-համակարգային առաջընթացը թե՛ք թույլ է տալիս հասկանալ, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, ինչը պետք է դեմ նետես, ինչը չվերցնես, ինչը զարգացնես ու ինչի դեմ պայքարես:

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖՈՐՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇԵՏ ԶԵՊԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

Արթուր ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, «Դասավանդիր, Հայաստան»-ի զարգացման գծով տնօրեն



Վստահ եմ, որ այստեղ բարձրացված հարցերը մաս են կազմելու ԱՀ կրթության ապագայի տեսլականում և հիմք են դառնալու կրթության ոլորտում պետական քաղաքականության: Դա շատ երկար ամփոփման կարիք ունի և մի աշխատանք է, որը տևական ժամանակ ու բոլորիս հետագա մասնակցությունն է պահանջելու: Կարծում եմ՝ ֆորումը ոչ միայն կարևոր դեր կունենա կրթության քաղաքականության մշակման առումով, այլ նաև կլինի շատ կոնկրետ, պրակտիկ կողմնորոշիչ հնարավորություն ուսուցիչների կողմից իրենց դասավանդման ընթացքում կիրառելու համար: Մեր կողմից՝ որպես «Դասավանդիր, Հայաստան» կազմակերպություն, անչափ շնորհակալ ենք նման համագործակցության համար: Դա յուրաքանչյուր պատիվ է մեր կազմակերպության համար, որովհետև գործելով Արցախի Հանրապետությունում՝ մենք զգում ենք բացառիկ համեմատություն: Մի երկիր, որը տարբեր հանգամանքների բերումով դեռ չի ճանաչվել որպես անկախ պետություն, և շատ միջազգային կառույցներ չեն կարող այստեղ աշխատել: Մենք ուզում ենք լրացնել այդ բացը և շարունակելու ենք:

Արտաշես ՏՈՐՈՋՅԱՆ, փորձագետ. -Երեխաները ուսումնառության ժամանակ շատ են հոգնում. 6 ժամ առարկաներ, հավելյալ 6 ժամ՝ տնային առաջադրանքներ: Մեր հեռանկարն այն է, որ տնայինները լինեն շատ քիչ: Երեխաներին պետք է հնարավորություն տալ զբաղվելու ստեղծագործական ու հետազոտական աշխատանքներով և ոչ թե դասից դաս տեղափոխվելու այս ձևը: Այսօր միջին և ավագ դպրոցի մեր աշակերտները գրեթե չեն զբաղվում հասարակական աշխատանքներով՝ իրենց հետաքրքրությունները բավարարելու համար, հաճախում արտադպրոցական խմբակներ, որովհետև ժամանակ չունեն, առարկաներ են պարսպում, և այսօր արդյունքում ունենք քաղաքացիական պասիվ դիրքորոշում ունեցող, կամավորություն չկատարող, թիմային աշխատանքի հմտություններ չունեցող աշակերտներ, որոնց ամբողջ ուշք ու միտքը առարկաներ ուսանելն է, նպատակը՝ բուհ ընդունվելը: Ժամանակն է, որ այս մոտեցումից հրաժարվենք և աստիճանաբար տեղափոխվենք իսկապես երեխայակենտրոն դաշտ, նպաստենք, որ երեխաները երկար մանկություն ունենան, կարողանան ստեղծագործել, ակտիվ կյանքով ապրել, այն համայնքը, որտեղ իրենք ապրում են, զգան իրենցը: Մենք հետո հետևանքներից ենք բողոքում, որ օրի համայնքներում երեխաների թիվը պակասում է, համայնքին օգնող չկա: Իսկ մենք



ի՞նչ ենք անում, որ երեխան սիրի իր համայնքը, կապվի իր համայնքի հիմնախնդիրների հետ, լուծի դրանք՝ սկսած դպրոցական տարիքից: Պարզվում է՝ շատ քիչ բան ենք արել: Դրա համար էլ առանց ետ նայելու նրանք թողնում-հեռանում են համայնքից: Բայց մենք պետք է ստեղծենք այդ գործիքակազմը և մեթոդաբանությունը, որը կօգնի մեզ, թե ինչ անենք, որ երեխաները սիրեն իրենց երկիրը, իրենց համայնքը և կրթությունը, որը պիտի ստանան, նորից բերեն ծառայեցնեն իրենց համայնքին:

Այն ժամանակ մենք կասենք, որ ունենք շատ լավ կրթական համակարգ, և իրոք մենք մեր նպատակին հասել ենք:

Մեր երեխաները ուսումնական գործընթացից հաճույք չեն ստանում: Մենք դպրոցը դարձրել ենք մի միջավայր, որ անընդհատ սթրես է պատճառում մեր երեխաներին: Ու անընդհատ փորձում ենք կապեր պահել կամ նրանց մեթոդություն անել, ինչ-որ չափով մեղմել այդ գործընթացները: Բայց որտեղի՞ց են առաջացել դրանք՝ ծնող աղբյուրները, ինչպե՞ս կարող ենք այդ համակարգի վրա ազդեցություն թողնել, որպեսզի մեր երեխաները հաճույքով գնան դպրոց: Այստեղ կան մի շարք հանգամանքներ, և կարծում եմ՝ այս ֆորումն էլ կնպաստի այդ խնդիրների լուծմանը, որ ունենանք ավելի լավ կրթական համակարգ, որ երեխաները ավելի հաճույքով գնան դպրոց, ծնողները հանգիստ լինեն, ծնողն իր դերը և մասնակցությունն ունենա կրթական գործընթացում, իր կամավորությունն անի դպրոցում, այլ ոչ թե կողքից դիտորդի դերում լինի:

Էդգար ԹԱԹԻՎՅԱՆ, Քաշաթաղի շրջանի Հալուայի միջնակարգ դպրոցի ռուսերենի և օտար լեզվի ուսուցիչ.



- Այս երկու օրվա ընթացքում բազմաթիվ կարծիքներ հնչեցին: Ուզում եմ մի քանի դրական բաներ առանձնացնել: Մարդիկ սկսեցին արտահայտվել: Այն, ինչ տարիներով կուտակված էր, վերջապես դուրս եկավ: Սա պետք է ամրագրել ու չթողնել մի կետում և տանել առաջ: Երկրորդ ուրախացնող բանը մեր աշակերտներն են: Ես ուղղակի կառաջարկեմ դպրոցները փակել, նրանց երազանքի դպրոցը բացել, որովհետև սովորողը իրենք են: Մի քանի բան էլ եկեք չվախենանք սուր հարցադրումներից: Շատ հարցերի պատասխաններ՝ ինչպես անել, մնացին օդում կախված: Եվ երկի թե դա լավ է, որովհետև ամեն մեկիս պետք է մտածելու տեղիք տա, թե ինչ անենք: Կուզեի դիմել տիկին նախարարին.

- Տիկին Աղաբալյան, ես վստահ եմ, որ Դուք ունեք այնքան խոհամտություն և լայնամտություն, կամք և հնարավորություններ՝ այստեղ եղած այնքան մեծ ինֆորմացիան շատ արագ վերլուծելու և համապատասխան քայլեր ձեռնարկելու, ու վստահ եմ, որ ես շատ շուտով կտեսնեմ Ձեր քայլերի արդյունքը:

Նելլի ԱՎԱՆԵՍՅԱՆ, «Պոլ Էյուարի տուն ֆրանկոֆոնիայի կենտրոն» հիմնադրամի ուսումնական գծով տնօրեն.



- Շատ հագեցած և արդյունավետ օրեր էին: Խոսեցինք այնպիսի խնդիրներից, որոնք ամեն օր բարձրաձայնվում են, քննարկվում ուսուցիչների կողմից, և բոլորն էլ սպասելու են լուծումների: Միաժամանակ ուզում եմ ասել, որ կան այնպիսի հարցեր, որոնց լուծում տվողները հենց մենք ենք՝ ուսուցիչներս, եթե չասենք՝ բոլոր հարցերին լուծում տվողները: Դրանք այնպիսի հարցեր են, որոնք որոշ դեպքերում ֆինանսական աջակցություն չեն պահանջում: Մենք պետք է հասկանանք, որ պետք է շարժվենք ժամանակակից պահանջներին համընթաց: Ու դրանից բացի ուզում եմ ողջունել մեր աշակերտներին, որոնք ներկայացրին իրենց երազանքի դպրոցը:

Մարիամ ՓԻԼՍՅԱՆ, Հահույանի շրջանի Եղեգնուտի դպրոցի դասվար.



- Ֆորումը շատ դրական լիցքեր տվեց: Լսեցինք փորձագետներին, սովորեցինք մեր մոտեցման ձևեր, որ կարելի է դասընթացքում կիրառել, ուսուցիչներին հետ փորձի փոխանակել: Ես հաճախ եմ մասնակցում վերապատրաստումների, բայց սա իր ձևաչափով և մակարդակով տաքերվում էր: Շատ ուսուցանող բաներ կային, հոգնածություն ամենկիմ չէինք զգում: Միշտ ձգտում եմ նորովի դասավանդել, հիմա ավելի համարձակորեն կմոտեցնամ չվախենալով չընդունվելուց, քանի որ միշտ չէ, որ նորարարությունն ընդունվում է: Հիմա ավելի համարձակ կմոտեցնամ՝ տեսնելով, որ սահմանափակումներ չկան մեթոդների, դասավանդման ձևերի հարցում՝ գաղափարական և երևակայական հնարքներ օգտագործելու համար:

Սիրվարդ ԹԱՄԱՋՅԱՆ, Քաշաթաղի շրջանի ԿՍ բաժնի մասնագետ, դասվար.



- Նախադեպը չունեցող միջոցառում էր, որն ուսուցիչներին համար բացեց մի ուրույն աշխարհ: Մենք մեր մտադրություններով կմտնենք դասարան: Ինքներս մեզ արժևորում ենք, թե որն է մեր դերը ուսուցման գործընթացում, որը՝ սովորողի: Փորձագետների նորովի մոտեցումները լսելով՝ մենք կկառուցենք Արցախի Հանրապետության կրթության մեր տեսլականը: Ապագայի դպրոցի, ուսուցչի և աշակերտի մեր տեսլականի ձևավորումն ենք մշակում ֆորումի ընթացքում: Նախադրյալներն արդեն ունենք: Կարևոր է, որ սա վերևից ներքև իջեցված չէ, սովորողից գնում ենք դեպի չափորոշիչ, դասագրքեր: Ոչ թե երեխային պետք է հարմարեցնենք ծրագրերին, չափորոշիչներին, այլ դրանց պահանջները պետք է հարմարեցնենք երեխաների կարիքներին: Երբ մենք կարողանանք սովորողակենտրոն դպրոց ստեղծել, որտեղ երեխան կսովորի կյանքում իր տեղը ճիշտ գտնելու աստղծը, այդ ժամանակ կարող ենք ասել, որ հասել ենք հաջողության: Շատ կարևորում եմ նաև մարդկային շփումները: Փոխադարձ շփումների ընթացքում մեր գաղափարներ են ծնվում, մտքեր, մեր ընկերներ ենք ձեռք բերում, և համագործակցությունը տալիս է իր դրա-

կան արդյունքը: Շահում է երեխան, շահում է կրթությունը:

Նելլի ԱՎԱՆԵՍՅԱՆ, Առաջածորի միջնակարգ դպրոցի տնօրեն.



- Նման քննարկումներն անհրաժեշտ են բոլոր ուսուցիչների, կրթական համակարգում աշխատողների, ոլորտը ղեկավարողների, աշակերտների համար: Ուղղակի ինձ թվում է, թե մենք ուշացել ենք, և մեր մտածողություն է եկել: Համակարգին մեր մտածող մարդիկ են պետք: Գտնում եմ, որ հնարավորություն ունենք վերափոխվելու, և աշխատանքի հիմքում պետք է դրվի լավ մարդ ստեղծելու գաղափարը:

Ճիշտ է, միշտ էլ դպրոցի նպատակը լավ քաղաքացի դաստիարակելն է եղել, բայց ինձ թվում է՝ մենք մի քիչ հեռացել ենք այդ նպատակից այս անցումային շրջանում: Պարզապես շատ ուշադրություն չդարձնենք երեխաների ակադեմիական գիտելիքներին, գնահատենք բոլոր երեխաների կարողությունները, գնահատենք ըստ իրենց կարողությունների: Խորհրդային կրթական արդյունքի չափանիշներից մեկը եղել է աշակերտների բուհ ընդունվելը: Հիմա գնահատման չափանիշը պետք է լինի, թե դպրոցի թողարկած շրջանավարտն ինչքանով է ծառայում հայրենիքին, ինչքանով է կարողանում դիմագրավել մարտահրավերներին, ինչքանով է նպաստում հայրենիքի շենսցմանը:

Ինձ առավել հիացրին մեր աշակերտները: Ես մոտեցա նրանց և շնորհակալություն հայտնեցի ասելով՝ դուք ավելի ճիշտ եք մտածում, քանի որ ձեր երազանքի դպրոցի ենթակառուցվածքների մեջ «նկուղ» հասկացությունը չկար, ուրեմն մեր երկրի ապագան դուք տեսնում եք խաղաղ ու բարգավաճ:

Մարիամ ԱՏԵՓԱՆՅԱՆ, Տաթևիկ ՆԵՐՍԻՍՅԱՆ, 12-րդ դասարանի աշակերտներ.



- Մեզ էլ են հուզում այն խնդիրները, որ քննարկում են ուսուցիչները, որովհետև մենք էլ ենք դրանց մեջ գտնվում: Շատ կարևոր է կազմակերպել նման ֆորումներ, որպեսզի աշակերտների ծայրը նույնպես լսելի լինի, քանի որ այլ բան է, երբ կրթության կազմակերպիչներն իրենց աշխատասեյակներում են քննարկում՝ այդ պահին չմտածելով աշակերտի հայացքի մասին: Բայց այսպիսի միջոցառումների ժամանակ նաև աշակերտների կարծիքն է հաշվի առնվում:

- Հնարավորություն ունեցանք շփվելու ոլորտի ավելի զարգացած մարդկանց հետ: Մենք ծանոթանում ենք նրանց տեսակետին, և դրա շնորհիվ մեր աշխարհայացքը փոխվում է, լայնանում: Հավատում ենք, որ մեր ծայրը նույնպես կարող է հասնել նրանց, և փոխվի մեր ապագան:

ՖՈՐՈՒՄ-ԱՅՈՒԿԵՐՏ

ԵՐԱՋԱՆՔԻ ԴՊՐՈՑ

Աշակերտները ոչ միայն ակտիվորեն մասնակցեցին ֆորումի քննարկումներին, առաջարկություններ արեցին այս կամ այն թեմայի վերաբերյալ, այլև առանձին ներկայացրին պատրաստեցին, որում պատկերված է իրենց երազանքի դպրոցը: Այն տեղակայված է անտառում՝ ծառերով շրջապատված, ունի կինոդահլիճ, արհեստների և արվեստների սենյակներ, ճաշարան: Դպրոցում անցնում են էթիկայի դասեր: Դասասենյակները միացված են հատուկ կամուրջով, որն ապակեպատ է: Հարկերի միջև տեղակայված են շարժասանդուղքներ հենաշարժային խնդիրներ ունեցողների համար: Տանիքի տակ գրադարանն է, որտեղ նաև աստղադիտակ է տեղադրված: Դպրոցը էներգիան ստանում է արևային պանելներից: Տարածքում գտնվում է այթի կենտրոն: Ճաշարանում երեխաները սնվում են այն մթերքներով, որոնք իրենք են աճեցրել ջերմոցներում:

կան թեքումով դասարան, և աշակերտների ստեղծած երաժշտությունն է հնչում զանգի փոխարեն, որն ամիսը մեկ փոխվում է: Կան երկար դասամիջոցներ: Կան պարտադիր դասեր և խմբակներ: Աշակերտը կարող է զբաղվել ինքնակրթությամբ: Աշակերտներն ազատ արտահայտում են իրենց կարծիքը: Դպրոցն ունի լաբորատորիաներ, դասասենյակները կահավորված են ժամանակակից տեխնոլոգիաներով: Դպրոցի

Երեխաների երազանքի դպրոցն ամենևին էլ անհասանելի չէ: Նրանք ներկայացրին դպրոցի միջավայրը և շենքային պայմանները: Աստղադիտարան, հանգստի սենյակ, բնության հետ շփում, արվեստի և արհեստների, երաժշտության սենյակներ այսօր էլ ունեն մեր առանձին դպրոցներ:

Կան երազանքներ, որ հիմա էլ կարելի է իրականացնել: Ստեփանակերտի «Պոլ Էյուլարի տուն-ֆրանկոֆոնիայի կենտրոնի» ուսումնական գծով տնօրեն Նելլի Ավանեսյանն ասաց, որ կառուցվում է Ֆրանկոֆոնիայի կենտրոն-դպրոցը, որտեղ աշակերտները կարող են գտնել իրենց նշած երազանքներից մի քանիսը: Օրինակ, դահլիճ՝ կինոթատրոնի հնարավորությամբ, սրճարան՝ նաև խոհանոցային դասընթացներ անցկացնելու համար, դասասենյակներ, որտեղ նրանք կարող են սովորել աուդիո և վիդեո ձևով և նույնիսկ՝ փոքրիկ այգի ու բանջարանոց:

Իսկ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանն ասաց, որ աշակերտների երազանքի դպրոցն ընդունել է որպես առաջադրանք: Ստեփանակերտի Թունմանյան փողոցի վրա՝ Ֆրանկոֆոնիայի կենտրոնի հարևանությամբ արդեն նախագծված է նոր դպրոց՝ տեղեկատվական տեխնոլոգիաների թեքումով, որտեղ նրանց երազանքի դպրոցից որոշ բաներ կան: Երազելը լավ բան է, միշտ պետք է երազել բարձր նպատակի մասին և ձգտել հասնել դրան:



Երեխաները դպրոց են գալիս հեծանվով, քանի որ դպրոցին կից կա կենդանաբանական այգի, որտեղ ամեն աշակերտ պահում է իր կենդանին: Դպրոցն ունի իր խորհրդանիշ-կենդանին: Դասերը տարբեր տևողության են՝ ըստ առարկայի ծանրաբեռնվածության:

հարակից տարածքում մարզադահլիճ է, լողավազանը, որտեղ աշակերտներն ու ուսուցիչները դասերից հետո պարապում են:

Դպրոցն ունի հանրակացարան: Շրջանավարտներն իրենց աշխատավարձից մաս են հատկացնում դպրոցին՝ նրա կարիքները հոգալու համար:

Աշակերտը գիտի, թե ինչի համար է գալիս դպրոց: Ուսուցիչը նվիրված է իր գործին և աշակերտներին:

Գնահատման համակարգ չկա: Ամեն ամիս դպրոցի որևէ դասարան կազմակերպում է թատերական կամ համերգային ծրագիր: Դպրոցն ունի երաժշտա-

ԽՈՍՔ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Մենք՝ Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի աշակերտներս, մեր խորին երախտագիտությունն եք հայտնում ԱԶ կրթության, գիտության և սպորտի նախարարին՝ նախադեպը չունեցող կրթական ֆորումին մեզ մասնակցելու հնարավորություն ընձեռելու համար, շնորհակալություն, որ մենք նույնպես հնարավորություն ունեցանք արտահայտելու մեր կարծիքը, ներկայացնելու մեզ հուզող խնդիրները: Ընդհանրապես, մենք «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամին և ֆորումին մասնակցող բոլոր փորձագետներին՝ իրենց անգնահատելի աշխատանքի համար, որի արդյունքում բոլորիս մեջ արթնացավ ցանկություն շարժվել միայն առաջ՝ սահմանելով կրթության նոր տեսլականը:

րացնել, որ այն այսպիսի ազդեցություն կունենա ավագ դպրոցի աշակերտներին վրա: Ֆորումի աշխատանքներին մասնակցությունը հնարավորություն տվեց կոնկրետացնել, հստակեցնել այն խնդիրները, որ կան աշակերտների շրջանում և որոշակի լուծումներ առաջադրել: Հնարավոր է՝ մեր կողմից առաջարկվող լուծումները մի փոքր այլ են, ստանդարտ ձևաչափերից դուրս թվան, սակայն կարծում ենք, որ 21-րդ դարում խելահեղ արագությունը համաշխարհային զարգացումներում դժվար է ստանդարտ մեթոդներով առաջ շարժվել և օգնության ենք հասնում մենք՝ նոր սերնդի ներկայացուցիչներս, ձևաչափից դուրս լուծումներով:

Արցախի կրթական ֆորումը մեզ հնարավորություն տվեց հնարավորինս պատկերացնել ԱԶ կրթական իրողությունները և առաջարկել երկու շատ

կարևոր հանգամանք.

առաջին՝ ես 21-րդ դարի ազգային պետության քաղաքացի եմ, երկրորդ՝ ես 21-րդ դարի Երկիր մոլորակի բնակիչ եմ:

Յուրաքանչյուր միջոցառում կայացած կարելի է համարել, եթե նոր գաղափարների իրացման հնարավորություն է ստեղծվում, և առաջարկում ենք ԱԶ ավագ դպրոցների աշակերտական միջավայրում ձևավորել համապատասխան կառույց, որը կառավարվում է հենց անմիջապես դպրոցի կողմից և համակարգվում ԿԳՍ-ի կողմից: Առաջարկում ենք պարբերաբար քաղաքացիական գիտակցությանը վերաբերող միջոցառումներ կազմակերպել: Մեր շնորհակալությունը ֆորումին, որը մեզ հնարավորություն տվեց նոր լիցքեր ստանալու և մոտիվացվելու:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Իսկ դասարանում կռիվ անողները, չսովորողները շատ դեպքերում դարձան օլիգարխներ, խոշոր մարդիկ, գործիչներ և այլն՝ առանց բարձր իդեալների, բայց կյանքի իմաստությամբ: Պիտի հակառակը լինի. իդեալներ ունեցողները, այսինքն՝ նրանք, ովքեր ավելի արթուն են գլխով, պիտի կյանքի հետ կապվեն: Իսկ նրանք, ովքեր ավելի կյանքի մարդիկ են, պիտի գիրք կարդան. այս դեպքում մենք կունենանք շատ ավելի առողջ հասարակություն:

Արցախում կա երջանիկ հնարավորություն կրթության մեջ երկու բան ունենալու. մեկը՝ երեխաներին անընդհատ կապել հողի, գյուղատնտեսական աշխատանքների, կենդանիների հետ: Նման աշխատանքի հետ կապված երեխան ձեռք է բերում վստահություն կյանքի հանդեպ, հանգստություն, ժամանակը լրիվ այլ կերպ է հոսում նրա համար, շատ ավելի դանդաղ, նա ավելի ամուր մարդ է լինում: Եվ նույնիսկ եթե հետո ինքը դառնում է ֆիզիկոս կամ պատմաբան, նա շատ ավելի խոր կապված է կյանքի իմաստությամբ հետ:

Մյուսը արհեստներն են: Ամեն արհեստ ինքնին արժեք է՝ մշակութային, ազգագրական և այլն: Բացի դրանից, երբ մարդը ձեռք է բերում որոշակի հմտություն որևէ արհեստի մեջ, նրա արժեքը բարձրանում է: Դրա համար ամեն շրջանավարտ առնվազն մեկ արհեստ պետք է դպրոցից տանի, անկախ նրանից, թե որ ուղղությամբ է հետազայում գնալու: Ել չեն ասում, որ հիմա մենք կամզանած ենք այն կետում, երբ ընդհանրապես կարող ենք ավանդական արհեստները կորցնել, և շատ տխուր կլինի: Պատմական առումով՝ շատ տխուր: Բայց հիմա ես խոսում եմ ամեն առանձին երեխայի ձևավորման համար շատ կարևոր գործընթացի մասին: Մարդու ձևավորման համար դա շատ կարևոր է: Եվ նաև արվեստը, որովհետև այն մարդուն տալիս է մերքին ազատություն, անկաշկանդ ստեղծագործելու և ինքնուրույն մտածելու հնարավորություն: Հարցն այն չէ, որ երեխան դպրոցից դուրս գալով անպայման պետք է դառնա քանդակագործ կամ նկարիչ:

Մանկավարժության մեջ ուղիղ չէ ճանապարհը, այն նման է ոլորանների: Ամփոփելով՝ ասենք՝ այդ ամենի համար պետք է վերանայենք ուսուցչին պատրաստելու եղանակը: Գործնական առարկաները պետք է կազմեն 90%: Դրանց մեջ շատ կարևոր են արվեստները, կապ չունի՝ կերպի ուսուցիչն իր դասարանում, թե չէ, կդասավանդի նկարչություն, թե չէ: Դա նրան սովորեցնում է ստեղծագործաբար մտածել ցանկացած առարկայի գծով: Եվ քանի դեռ նա ուսանող է, քանի դեռ երիտասարդ է, դա հնարավոր է անել շատ ավելի արդյունավետ կերպով: Եվ 2-րդ՝ ինչը մենք կարող ենք անել, ինչը հույս ունեն, որ մի օր տեղի կունենա ՀՀ-ում, ունենալ այնպիսի կրթահամակարգ, որտեղ տարբեր տեսակի դպրոցներ կարող են գոյատևել և լավ պայմաններ ունենալ, որը միանշանակ չունի վերջնական ճշմարտության վերին աստիճան:

Մտածել, թե որևէ կառավարություն կարող է ունենալ իդեալական պատկերացում կրթության մասին, կարծում եմ՝ որևէ մեկը նման բան չի մտածի: Ի վերջո, ո՞րն է պետության խնդիրը. խթանել ստեղծագործական աշխատանքը: Պետք է օազիսներ ստեղծել այն դպրոցների, այն մարդկանց շուրջ, որոնք ի վիճակի են հետաքրքիր նոր գաղափարներ բերել կրթության ոլորտ:



ԵԶՐԱՓՈՒԿ

ՀԱՐՄԱՐ ԶԵՎԱԶԱԾ՝ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԱՐՏԱԶԱՅՏԵԼՈՒ, ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԱՆԵԼՈՒ



Ա շ ո տ ՂՈՒԼՅԱՆ, ԱՅ Ա Ջ Գ Ա Յ Ի Ե Ժ Ո Ղ Վ Ի Լ ԱՆԱԳԱԿ

Ես այն տպավորությունն ունեմ, որ մեր երկրում տեղի է ունեցել մի շատ կարևոր իրադարձություն, և դա վերաբերում է...

Պետական հաստատություններն առում են, որ ներքևից պիտի այս նախաձեռնությունը գա, ներքևում սպասում են, որ պետությունը պետք է անպայման ինչ-որ մի կտորով բան անի, փոխի, և իսկապես այս դեպքում մենք պետք է կարողանանք ի մի բերել մեր ուժերը: Եվ սա արդեն վերաբերում է ոչ միայն մեր կրթական համակարգի բոլոր նվիրյալներին, վերաբերում է երիտասարդներին, որոնք նոր ավյուն ու եռանդ են բերում մեր համակարգին, վերաբերում է մեր երկու հայկական հանրապետություններին, որ իսկապես միասնական կրթական դաշտ ունենալով՝ փորձում են այնպիսի կրթական տեսլական ունենալ, որ ոչ թե ետ չմնա ուրիշ երկրների կրթական համակարգից, այլ լինի օրինակ ուրիշ երկրների համար: Այս իմաստով մենք դժգոհելու քիչ բան ունենք: Այն, ինչ ունեցել ենք խորհրդային և մեր անկախության առաջին տարիներին, շատ կարևոր բարձրության կրթական համակարգ էր: Եթե այդպես չլիներ, մենք դժվար թե հաջողվեինք մեր ազատագրական պայքարի ժամանակ, դժվար թե կարողանայինք հաղթանակով դուրս գալ մեզ պարտադրված պատերազմից: Մեր ունեցած համակարգն է մեզ բոլոր տվել դիմակայել և հաջողությամբ դուրս գալ: Բայց այսօր բոլորովին ուրիշ պահանջներ են, և այսօրվա աշխարհն ապրում է բոլորովին ուրիշ պատկերացումներով: Համակարգն ավելի լավ դարձնելու համար մենք պահանջում ենք ձևավորվում է ամենալավը լինելու ոչ միայն մեր ներքին պահանջից, դա գալիս է նաև մեր տարածաշրջանի աշխարհաքաղաքական խնդիրներից, միայն առաջադեմ, ժամանակակից, մրցունակ կրթական համակարգ մեզ կարող է բերել այնպիսի մի դիրքի, երբ մենք ոչ մի բանից պետք է վախենանք կամ մտահոգություններ ունենանք,

այլ մեզանից պետք է վախենան: Միտքը, ուղեղը, գիտակցությունը ինչքան էլ փորձենք տանել գիտահետազոտական հաստատություններ և բարձրագույն ուսումնական համակարգ, այնուամենայնիվ, բջիջը ձևավորվում է այստեղ՝ հանրակրթական դպրոցում: Համոզված եմ, որ Արցախի Հանրապետությունն իր պետական կառավարման համակարգով ամեն ինչ անելու է, որ նպաստի այդ ձևավորված տրամադրության շարունակմանը: Առօրյա խնդիրները չեն վերանալու, դրանք միշտ լինելու են մեզ ուղեկից, բայց մեր մտածողությունը, մեր աշխարհընկալումն իրոք պետք է փոխվեն: Մենք չենք կարող քարտեզի վրա այդպիսի դիրք ունենալով՝ մտածել, որ մենք միայն կղզյակ ենք: Մենք պետք է կարողանանք այդ գլոբալ մտածողությունը տարածել ոչ միայն մեր դպրոցում, տարածել ամբողջ Արցախ աշխարհում, տարածել հայկական միասնական տարածքում: Եվ այս գործընթացի ժամանակ շատ կարևոր է, որ մեր ազգային դիմագիծը կարողանանք պահել, որովհետև միայն այսպես կարող ենք ունենալ հաջող հիմքով կրթական համակարգը, որը ոչ մի բանով չի զիջում աշխարհի որևէ երկրի կրթական համակարգին, արդեն լինելու է նորություն՝ գրավիչ, հետաքրքիր և ուսանելի նաև մյուս երկրների կրթական համակարգերի համար: Խորհրդարանում գոնե վերջին տարիներին անընդհատ խոսում էինք, թե ինչ պիտի անենք: Կարծում եմ՝ հարցերի պատասխանը այսպես պետք է ստանալ, այն միջավայրում, որտեղ մեր վաստակաշատ մանկավարժները, «Դասավանդիր, Հայաստան»-ի

երիտասարդ մտածողները, ովքեր իսկապես էնտուզիազմով գալիս են դպրոց ու նաև մեր աշակերտները, որոնք ոչ թե միայն սովորում են, այլ արդեն դպրոցում փորձում են մեզ հասկացնել, թե ինչպես են ուզում են սովորել: Հակադարձ այդ կապ էլ պետք է շատ ճիշտ հասկանալ, որպեսզի այդ իմպուլսները ճիշտ օգտագործվեն: Այսօրվա տրամադրությունը կարևոր է, որպեսզի մենք ամրագրենք և փորձենք առաջ գնալ արդեն այս հիմքը ունենալով: Վստահ եմ, որ պարբերական կառուցման մասն ձևաչափով հավաքները, որովհետև մեկ անգամ հավաքվելով չենք կարող լուծումներ գտնել: Մենք կարող ենք լուծել խնդիրը առաջիկա մեկ տարվա համար: Բայց հաջորդ տարի բոլորովին ուրիշ պահանջներ են լինելու: Ես չեմ էլ կասկածում, որ և՛ ՀՀ-ում, և՛ ԱՀ-ում պետությունն ամեն ինչ անելու է, քանի որ սա էլ է շատ մեծ համալիր խնդիր, ամեն ինչ անել՝ նշանակում է նաև մտածել ուսուցչի հեղինակության, նրա սոցիալական պաշտպանվածության մասին: Բայց այստեղ ուրախանալու շատ քիչ բան ունենք, չնայած պետք է փորձենք, որ այս տրամադրությունը կարողանանք բերել: Երկար տարիների փնտրտուքից հետո կարծես թե գտել ենք ձևաչափ մեր խնդիրների մասին ոչ միայն խոսելու, այլև այդ լուծումները տեսանելի դարձնելու: Քննարկումների ձևաչափերը կարող են փոխվել, բայց ընդհանուր առմամբ հիմնական գաղափարախոսությունը, փիլիսոփայությունը կպահանջեն, որ ստեղծենք մի հարթակ, որտեղ բոլորս միասին կխոսենք, կխորհենք, կերազենք, ինչու չէ, նաև իրատեսական առաջարկներ կանենք ավելի լավ և ավելի որակյալ կրթություն ստեղծելու համար:

ՏԵՍԱԿԱՆՈՒՑ ՄԻՆԶԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Կան անհերքելի ճշմարտություններ, որոնք չեն կարող շրջանցել, և կան անելիքներ, որոնցից չեն կարող խուսափել: Անվիճելի է այն փաստը, որ այսօրվա դպրոցը մեր պետության հզորության գրավականն է մոտ ապագայում և ընդհանրապես: Եվ այն, որ այս ասպարեզում բավական շատ աշխատանք պետք է կատարենք ինչն ենք մենք՝ ուսուցիչներս, օրվա պահանջ է, հրատապ անելիք և անհրաժեշտություն: Այսօր կրթության տեսլականի մասին խոսելիս մենք պետք չունենք վարդազույն ակնոցի, ոչ էլ պատրաստվում ենք օդում ամրոցներ կառուցելու, պարզապես անհրաժեշտ է ասպազայի դպրոցն ու կրթությունը մտապատկերում գծագրել և ամբողջացնել ավելի հստակ գույներով, ավելի շոշափելի ու իրական: Հենց սրան էր միտված Արցախում կրթական ֆորումի նախաձեռնումը: Եվ այն կայացավ: Սա փաստ է և որևէ ապացույցի կարիք չունի, քանի որ ֆորումը վերահանց այն հզոր ներուժը, որն ի գործ է երազելու և երազանքը իրականություն դարձնելու, նախաձեռնելու և հետևողական լինելու, խնդիրներ առաջարկելու և լուծման ուղիներ որոնելու: Կրթական ֆորումի եռօրյա աշխատանքը ոգևորեց շատերին՝ ուսուցիչներին, աշակերտներին, համակարգի

մյուս աշխատողներին, հնարավորություն ստեղծեց չփվելու կրթության լավագույն փորձագետների և հետազոտող ուսուցիչների հետ, սովորելու նրանց հետաքրքիր ու նորարար վերլուծություններից, լսելու փորձառու դասընթացավարների համակարգող խորհուրդները և ուղղորդումները: Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարության նախաձեռնությամբ և «Դասավանդիր, Հայաստան» կրթական կազմակերպության ակտիվ համագործակցությամբ կազմակերպված ֆորումը անմախաղեպ միջոցառում էր թե՛ ձևաչափով, թե՛ բովանդակությամբ, թե՛ իր խորախորհուրդ կարգախոսով՝ «Սահմանելով կրթության նոր տեսլականը»: Կրթության գործընթացը ուսուցչի և աշակերտի միջև երկկողմանի համագործակցություն է, որն անպայման պետք է կառուցված լինի սիրո, հարգանքի և վստահության հիմքի վրա: Նրանք՝ դասավանդողն ու սովորողը՝ պետք է ունենան համուղված մպատակներ և փոխկապակցված ծրագրեր: Ուստի բավական պատճառաբանված և տրամաբանական էր ուսուցիչների և աշակերտների համատեղ աշխատանքը ապագայի դպրոցի համապատկերը ներկայացնելիս: Ապագայի դպրոցի տեսլականի սահմանման առանցքը ուսուցչի և աշակերտի արդյունավետ աշխատանքի կարևորումն էր: Եվ կրթության գործընթացում ինչ կենտրոնացվածությամբ էլ տարվի դասավանդումը, այնուամենայնիվ գլխավոր դերը ուսուցչինն է: 21-րդ դարի ուսուցիչը պետք է լինի հետազոտող ու վերլուծող, համակարգող ու հանկարծաստեղծ, լայնախոհ և ինքնամղված: Նա պետք է տիրապետի ինքնամշակույթի տարակման և ինքնագնահատման հմտություններին, կարողանա կառավարել ամենագոր ժամանակը և այդ ժամանակի մեջ կատարված աշխատանքը՝ կիրառելով և համադրելով գնահատման տարբեր ձևեր: Ուստի միմիայն բազմահմուտ, պատասխանատու մարդիկ իսկապես իրենց ուսերին կտանեն ապագայի քաղաքացուն կր-

թելու, դաստիարակելու դժվարին ու պարտավորեցնող «բեռը»: Ուսուցիչը պետք է սիրի իր դիմաց նստած մարդուն՝ աշակերտին, պետք է հայտնաբերի նրա նախասիրությունները, հասկանա ուժեղ և թույլ կողմերը, համակարգի նրա ուսումնառությունը, զարգացնի ստեղծագործականությունը՝ հաշվի առնելով ինչն ենք նրա՝ աշակերտի, նաև հասարակության շահն ու պահանջը: Միայն կլինեն ներկայացնել կրթության տեսլականը առանց աշակերտի բնութագրման: Ուստի փորձենք ներկայացնել նրան, ում շուրջը ծավալվում են կրթական ոլորտի բոլոր իրադարձությունները: Նա պետք է իմանա և հասկանա ուսումնառության նպատակները, կարողանա ներկայացնել հարցադրումներ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ: Աշակերտն ինքն էլ պատասխանատու պիտի լինի իր աշխատանքի հանդեպ, չտկուններ կատարի՝ հաշվի առնելով ուսուցչի հեղինակությունն ու հմտությունները: Ֆորումի աշխատանքներին ակտիվորեն մասնակցող աշակերտները ապացուցեցին, որ ունենք վերոհիշյալ որակներն ունեցող սովորողներ, քանզի նրանք ուսուցիչներից ու մյուս մասնակիցներից ոչ պակաս կարողանում էին կատարել ինքնուրույն և խմբային աշխատանքներ, պատմել ու արտահայտվել, վերլուծություններ կատարել և ոգևորվել նորը ստեղծելու գաղափարով: Եվ պետք է խոստովանենք, որ նորի դրսևորման մեր կարևոր խնդիրներից մեկն էլ այն է, որ աշակերտները երբեք չհասկանան կենսական կարևորություն ունեցող խոչընդոտները հաղթահարելիս, որ նրանց սովորած գիտելիքը դառնա ամօտարելի կապիտալ, ինչպես նշվեց ֆորումի պարապմունքներից մեկի ժամանակ: Դժվար է ներկայացնել այն չափորոշիչները, առարկաների համադրությունը կամ մասնագիտական կողմնորոշումը, որ առաջիկայում լավագույն արդյունք կապահովեն, որովհետև կյանքի խելախելը ընթացքը

հնարավորություն չի ընձեռում նախապես որոշելու, թե 3-4 տարի հետո որ մասնագիտություն է լինելու ամենապահանջվածն ու կարևորը: Ուստի մերօրյա դպրոցի առաքելությունը չի սահմանակալվում միայն գիտելիքների սահմանված պաշար փոխանցելով և մասնագիտական ընտրություն ապահովելով. այն պետք է իր սահման սովորեցնի լինել «առաջագակա» և ճկուն, պետք է սովորողների մոտ զարգացնի այնպիսի հմտություններ, որոնք նրան հնարավորություն կտան հարմարվելու ցանկացած իրավիճակի, լինելու կարևոր և փնտրված մասնագետ անենուրեք և ամենժամ: Ի մի բերելով ֆորումի եռօրյա հազցած աշխատանքները՝ ամփոփենք: Արդյունավետ կրթություն իրականացնելու համար հիմնարար են համարվում մի քանի սկզբունքներ, որոնցով էլ նախանշվում են կրթության տեսլականի շրջանակները: 1. զարգացած կրթական համակարգում անմիտելի է ճկուն և լայնախոհ ուսուցչի դերը. նա պետք է կարողանա մշակել ճիշտ ռազմավարություններ և հմտություններ, ունենա դատողություն անելու և երկնտրանքներին ճիշտ լուծում տալու կարողություն: 2. դպրոցը դեռահասին պետք է նախապատրաստի կյանքին, և նա պետք է ստանա համապատասխան գիտելիքներ բոլոր ոլորտների վերաբերյալ: 3. բացի հանրակրթական առարկաներից՝ դպրոցական ծրագրերում պետք է ընդգրկվեն առարկաներ նաև արհեստի և արվեստի տարբեր ճյուղերի, գործարարության և այլնի մասին: 4. անհրաժեշտ է վերանայել «Կրթություն» քննությունների հանձնման համար՝ տարածված տեսակետը և առաջնորդվել այն պարզ տրամաբանությամբ, որ այսօրվա շրջանավարտին բավարար չեն պատրաստի սերտած հասկացություններն ու ձևակերպումները, որոնք որոշ ժամանակ անց մոռացվում են:

5. անհրաժեշտ է սովորեցնել սովորել ու սովորածը կիրառել տարբեր իրավիճակներում և տարբեր բնագավառներում: 6. հրատապ խնդիր է մարդուն նախապատրաստել կյանքի տարբեր իրադրություններում հստակ լուծումներ գտնելուն և ճիշտ կողմնորոշվելուն: 7. անհերքելի է հետադարձ կապի շարունակականության առկայությունը դասավանդման և ուսումնառության ընթացքում: 8. առաջնահերթ անհրաժեշտություն է ուսուցչական համայնքների ստեղծումը, վկայությունների հավաքագրումը և ակտիվ համագործակցություն ծավալելը, որը հիմնված կլինի, ինչպես ամերիկյան Դյուքսի մանկավարժ-հետազոտող Դ. Ուիլյամսն է ասել, «օժանդակող հաշվետվողականության» սկզբունքի վրա: Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարությունը, կրթական մասն լայնամասշտաբ միջոցառում կազմակերպելով, կարևոր քայլ է կատարել հանրապետությունում դպրոցաշինության զարգացման ասպարեզում: Այս պարագայում կարևոր էր նաև ճիշտ գործընկերոջ ընտրությունը. վստահորեն կարող ենք ասել, որ «Դասավանդիր, Հայաստան» կազմակերպության փորձառու թիմը ֆորումի մասնակից ուսուցիչների և աշակերտների կողմից արժանացավ ամենաբարձր գնահատականի: Եթե կա նպատակ ու կամք, տեսլականից մինչև իրականություն մի քանի քայլ է կարևոր այն է, որ բոլորս հստակ պատկերացնենք մեր կատարելիք աշխատանքների վերջնարդյունը և ամբողջ թիմով շարժվենք առաջ, քանզի «ավելի հեշտ է գործով շարժվել դեպի նոր մտածելակերպ, քան մտովի շարժվել դեպի նոր գործելակերպ» (Մ. Ֆուլեր):

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ
Սպեցի. Վ. Զինագիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ՖՈՐՈՒՄԻՑ ԱՆԱԶ

ԼԻՆԵՆԲ ՃԻՇՏ ՈՒՍՈՒՑԻՉ



Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

1. Ուսուցիչը նոր ժամանակներում ապրում է հին մտածողությանը, առաջնահերթ է դառնում ուսուցիչներին վերապատրաստել նոր կրթությանը, որը նպատակ ունի ձևավորելու մտածող և ազատ աշակերտ:

Եթե նորոյա կրթությունն առաջարկում է, որ դպրոցն ավարտող աշակերտը լինի մտածող, վերլուծող, ազատ քաղաքացի, պետք է հիշենք, որ այսօրվա ուսուցիչների մեծամասնությունը խորհրդային կրթական համակարգն է ժառանգած, որտեղ կրթության որակը կուտակված գիտելիքի ծավալով է գնահատվում:

Աշակերտի համար շատ ընդունելի ու մատչելի է այն կրթությունը, որը նախադրյալներ է ստեղծում նրա ազատ մտածելակերպի համար, առավել ևս, երբ զուգակցվում է գիտելիքներին: Բայց որքանով է ուսուցիչը պատրաստ այդ նոր կրթությանը: Որքանով է նա ուսուցչին հասանելի դառնում աշակերտի ապրումները, նրա զգացողությունը, որն անտեսվում է, ու գերակա է դառնում նրան գիտելիքներով զինելու ուսուցչի մեծագույն նպատակը:

Ահա այստեղից է ծնվում հակասությունը, թե որքանով է հասկացված աշակերտը, իսկ նա, տեղեկատվական աշխարհում խորացած, երբեմն կարող է ավելի իրանցնել, քան ուսուցիչը, որն աշակերտի մոտ օրվա դասի մի քանի տող սերտելն ավելի նախընտրելի է համարում:

Յեռնաբար, անհրաժեշտ են ուսուցիչներ, որոնք կգտնվեն աշակերտի հետ նույն հարթակում՝ նույն ուղղորդվածությամբ, նորոյա մանկավարժությամբ, որտեղ աշակերտն ազատ է, այնինչ ուսուցիչը նոր ժամանակներում ապրում է հին մտածողությանը, ու ծնվում է հարցը՝ աշակերտին առաջ ենք մղում դառնալու ազատ քաղաքացի՞, թե՞ խոչընդոտում ենք նրա առաջընթացին:

Սովորելը միայն աշակերտի համար չէ, պետք է ուսուցիչը նոր սովորի (խոսքը հաջորդ օրվա դասը սերտելու մասին չէ), իսկ եթե նա չի ցանկանում կատարելագործվել, նրան պետք է սովորեցնել, նույնիսկ եթե անհրաժեշտ է, նա երբեմն իր գիտելիքների արքայական պատվանդանից պետք է իջնի, իր մանկավարժությունը հարմարեցնի աշակերտին, որի հաջողվածությանը չեն կասկածում, երբ ինքս վաղուց այդ ճանապարհին եմ՝ ուսուցիչ-աշակերտ շղթայում: Ո՞վ է մտածել, թե վերոնշյալ գրավորներից քանի աշակերտ է ամեն անգամ բացակայում: Ո՞վ է մտածել, թե վերոնշյալ գրավորներով նշված ժամկետում: Բայց ո՞վ գիտեր, թե մեզ մոտ ծնունդ վայտի վառարաններով տաքացրած դասարաններում ամեն օր քանի աշակերտ է բացակայել, և դրա արդյունքում պարտադիր քանիսին պետք է նորից թելադրություն տալ վեցերորդ կամ յոթերորդ դասաժամից հետո:

Մի՞թե պակաս որակ էր արձանագրվում նախորդ տարիներին, երբ այդքան գրավոր աշխատանքներ չէին հանձնարարվում: Արհեստականորեն իր աշխատանքում ծանրաբեռնված ուսուցիչը նույն ծանրաբեռնվածությունը փոխանցում է աշակերտին, իսկ նրանից անցնում է ծնողին: Բայց այդ գերբեռնված աշխատանքը արդյունք է բացակայում և կրթության համակարգում ամեն տարի չնայած նոր «փորձարկումներ են» կատարվում, բայց արդյունքում բուհերի դռներն ավելի լայն են բացվում բոլոր դիմորդների համար՝ արժեզրկելով ուսուցիչներին տքնաջան աշխատանքը:

Ընդամենը մեկ օրինակ ուսուցչի ծանրաբեռնված աշխատանքից՝ գրավորների մասին: Հայոց լեզվի և գրականության ուսուցողական, թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ գրավորների ծանրաբեռնվածությունը յուրաքանչյուր կիսամյակում նկատելի է մեզ՝ մասնագետներին, չնայած մեծապատիվ իրավիճակ մասնակիորեն նկատվում է մյուս առարկաներ դասավանդող ուսուցիչների մոտ:

Մեկ կիսամյակի ընթացքում 5-րդ դասարանում նվազագույնը մայրենիից, ծրագրի 7 դասաժամի համաձայն, նախատեսվում է ուսուցողական ու թեմատիկ 14 (7-ական) գրավոր և 1 կիսամյակային, ընդամենը՝ 15 գրավոր, ամբողջ ուստարում՝ 30՝ նախորդ տասնամյա դպրոցի մեկ ուստարվա 10-12 գրավորի փոխարեն:

Որ գրավորների քանակի ավելացումը մի նոր որակ է հաղորդում կրթությանը՝ չեն կարող հաստատակամորեն համաձայնել այդ կարծիքին: Որ աշակերտի մոտ ձգտում է առաջանում գրավորից գրավոր ավելի գեղեցիկ շարադրել իր մտքերը, նույնպես չեն կարող համաձայնել այդ կարծիքին: Որ աշակերտի միջոցով աշակերտը գիտակցում է իր գրավոր խոսքի նվազ իմացությունը և խոսակցում հետագայում բուհ ընդունվելու իր մտադրությունից, նման բան չկա:

2. Ուսուցիչը չափազանց ծանրաբեռնված է, երբեք նրա աշխատանքի արհեստական ծանրաբեռնվածությունը որակ չի ապահովի, անհրաժեշտ են վերափոխումներ, որով կթեթևանա ուսուցչի աշխատանքը:

Կրթության որակի բարելավումը չպետք է ուղեկցվի ուսուցչի աշխատանքի արհեստական ծանրաբեռնվածությամբ: Այն երբեք որակ չի ապահովի: Միշտ էլ բարձրաձայնել եմ, որ ուսուցչի ձեռքի տակ եղած թղթաբանությունն օր օրի ավելացվում է, կրթության համակարգում ամեն տարի չնայած նոր «փորձարկումներ են» կատարվում, բայց արդյունքում բուհերի դռներն ավելի լայն են բացվում բոլոր դիմորդների համար՝ արժեզրկելով ուսուցիչներին տքնաջան աշխատանքը:

Մեկ կիսամյակի ընթացքում 5-րդ դասարանում նվազագույնը մայրենիից, ծրագրի 7 դասաժամի համաձայն, նախատեսվում է ուսուցողական ու թեմատիկ 14 (7-ական) գրավոր և 1 կիսամյակային, ընդամենը՝ 15 գրավոր, ամբողջ ուստարում՝ 30՝ նախորդ տասնամյա դպրոցի մեկ ուստարվա 10-12 գրավորի փոխարեն:

3. Պետք է բարձրացնել ուսուցչի հեղինակությունը, երբ հասարակության լայն շերտեր են ընդգրկված այդ ոլորտում՝ աշակերտ, ով երկրի ապագա քաղաքացին է, ուսուցիչ, ով նպատակ ունի ձևավորելու հասարակության լիարժեք անդամ:

Ամենախոցելիին է դարձել կրթության ոլորտը, առավելապես՝ ուսուցիչը, երբ վերջին տարիներին համակարգի տարբեր պատասխանատուներ իրենց տեսլական են ներկայացրել՝ երբեմն մոռանալով, որ ուսուցիչը բացի պարտականություններից ունի նաև իրավունքներ: Իսկ մենք դարձել ենք երբեմն նորամուծությունների գերի, ու անտեսվել է ուսուցիչների նվիրյալ աշխատանքը: Մի՞թե ուսուցիչը խորհրդարանի վայ պատգամավորի չափ էլ չկա, արդյո՞ք երկրի կայացման գործում իր արժանվույն գործունեության, այդ մեծ դերակատարության համար ուսուցիչն արժանի չէ բարձր աշխատավարձի, այնինչ երբեմն ընկճվածություն ենք նկատում անգամ մանկավարժական երկար տարիների վաստակ ունեցող ուսուցիչների մոտ, առավել ևս նրանց, ովքեր տարիքային հանգստի են անցել նվաստացուցիչ թոշակով: Կայուն երկիր ստեղծելու լավագույն գրավակներից մեկն ուսուցչին գնահատելը և նրան իր գործունեության բարձունքում տեսնելն է, որի իրականացումը պետք է կրթության համակարգի համար գերխնդիր դառնա: Դա միայն աշխատավարձ չի որոշվում, պետք է ոգևորել, թևավորել ուսուցչին: Յուրաքանչյուր ոք պետք է հասկանա, որ ուսուցչի մասնագիտությունը բարձր ու անչափելի վեհ կոչում է, մեր հոգու ջերմությունը, մեր նվիրվածությունը կրթության ու դաստիարակության գործին: Այն արդարություն է, բարի գործի նվիրում, գեղեցիկի զգացողություն, դժվարություններին դիմակայելու անհողողող կամք: Ուսուցիչ լինելը պետք է զգալ հոգով, սրտով, միշտ պետք է հպարտ լինել հենց նրա համար, որ ուսուցիչ ենք:

Ասում են՝ աշխարհում աշակերտները բնակչության ընդամենը 20 տոկոսն են կազմում, բայց 100 տոկոսով նրանք մեր ապագան են: Առերեսվում ենք մեծ ճշմարտության... Ուրեմն, համուն 100 տոկոսանոց ապագայի ուսուցիչը դառնում է այն հիմնաքարը, ումից կախված է ապագան: Նաև ուզում են մեզանից յուրաքանչյուրը միշտ լինի ճիշտ ուսուցիչ, իր անցնելիք ճանապարհին այդ հիմնաքարի իմաստն արտահայտող այլ հոմանիչներ ավելացնի իր հոգում. չէ՞ որ առանց ուսուցչի սերունդը չի դառնա ապագայի ստեղծարար:

Ուսուցիչը տարիներ շարունակ դուրս է մնացել «բանակցային կողմից», նրան դարձրել են ամենագետ, բայց չեն ցանկացել նրա հետ հաշվի մատել: Հրամայող մատչելի ու ոչ մատչելի դասագրքեր, քիզեմի աղբյուր դարձած շտեմարանների հատորներ, ծրագրային անհարկի չափորոշիչներ, գնահատման բազմաշերտ համակարգ, անհարկի ավելացրած դրույքաչափ, 12-ամյա անհիմն կրթություն... Մեզ թելադրել են, երբեմն՝ պարտադրել են, մենք դարձել ենք կատարողներ, դասընթացների ենք մասնակցել՝ դարձել սովորողներ, դասավանդել ենք՝ դարձել ուսուցանողներ, ու երբեք մեզ չհարցրին, թե վերևից թելադրած անհարկի թերություններն ինչպես ենք հանդուրժում: Ու այսպես կոփվեց ուսուցիչը ձեռք բերած բազմաշերտ «մասնագիտություններում»՝ հրամաններ կատարելով, թերություններ պարտակելով, հարուստ փորձով, հավերժ սովորելով, սովորածն ուսուցանելով...

Ուսուցչի հեղինակության բարձրացմանը միտված են համարում նաև այս նախաձեռնությունը, երբ Արցախի կրթական ֆորումում հնարավորություն է ընձեռվել ընդգրկել ուսուցիչներին, նմանապես՝ աշակերտներին: Հուսանք, որ այս նոր «բանակցությունը» արդյունավետ կլինի, երբ ինքս էլ հակված եմ իմ փորձը փոխանակելու և նորը սովորելու տրամադրվածությամբ:

Նախաձեռնող ՊՈՂՈՍՅԱՆ Մարտիկերտի Վ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

Երբ ես գնացի դպրոց, ինձ հարցրին, թե ինչ եմ ուզում դառնալ, ես ասացի՝ ԵՐՋԱՆԻԿ: Ինձ ասացին. «Դու չես հասկացել հարցը»: Ես պատասխանեցի. «Դուք չեք հասկացել կյանքը»:

Նորոյա կրթության մասին բնաբան են ընտրում Ջոն Լենոնի տողերը. «Երբ ես հինգ տարեկան էի, մայրս ինձ ասում էր, որ կյանքի իմաստը երջանիկ լինելն է:

ИМЕТЬ ДРУГА - ВЕЛИКОЕ БЛАГО



Есть такое выражение: "Жизнь - это не те дни, что прошли, а те, которые запомнились".

Мне особенно запомнились дни, когда мне доводилось общаться с Балаян Жанной Аршавириной, учителем с большой буквы, которую я считаю своим другом. Мне кажется, такие люди и есть соль нашей земли, на их самоотверженности и преданности своему делу держится наш Арцах.

В начале своей деятельности в качестве инспектора Министерства образования я параллельно работал и в школе N 1, где многие годы действовали классы с углубленным изучением русского языка. Именно в эти годы мне посчастливилось поближе познакомиться с деятельностью Жанны Аршавириной и узнать ее как человека. Она прошла путь от простого учителя до заслуженного учителя НКР, долгие годы была завучем школы, а потом и директором.

Неоценим вклад Жанны Аршавириной в становление деятельного и наделенного большим потенциалом коллектива школы. Учителя методического объединения русского языка школы всегда активно участвовали во всех городских и республиканских мероприятиях, не раз давали открытые уроки. И во всем чувствовался почерк Жанны Аршавириной, во многом именно благодаря ей школа стала одной из лучших в республике.

Во время инспектирования школы бросались в глаза организованность и сплоченность как учительского, так и ученического коллективов - и это одно из важных достижений в работе Жанны Аршавириной. Она всегда отличалась ответственностью и трудолюбием, добротой и требовательностью, скромностью и добропорядочностью.

Работая завучем, директором, Жанна Аршавириная была хорошим наставником для молодых учителей. К ней всегда шли за советом, ей было чем поделиться, ведь она отличалась начитанностью, грамотностью, интеллектом.

Жанна Аршавириная воспитала не одно поколение детей, она старалась уделять внимание каждому ученику, учила их не только русскому языку, она личным примером учила их быть человечными. При поступлении в ВУЗы ее ученики всегда показывали хорошие результаты. Многие из них выбирали профессию учителя русского языка, как это сделала она сама, продолжив путь своей учительницы - Айрапетян Офелии Арсеновны.

Уважаемая Жанна Аршавириная! От всей души поздравляем Вас с юбилеем. Желаем крепкого здоровья, отличного настроения, оптимизма. Долгие годы и лета!

Осипов Рубен, государственный инспектор Министерства образования, науки и спорта

ՖՈՐՈՒՄ-ՆԱԲԵՏԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ԱՄԵՆ ԳԿԱՅԱԿԱԾ ԵՐԵՒԱՅԻ ՀԱՍԱՐ ԴՊՐՈՋԻՑ ԴԵՏՔ Ե ՊԱՀԱՆՑԵՆՔ»

Մեր հարցազրույցը փորձագետ, «Այր» դպրոցի գործադիր տնօրեն Արամ ՓԱՆՉԱՆՅԱՆԻ հետ



- Պարոն Փախչանյան, նախ՝ Չեր տեսակետը ֆորումի և ընդհանրապես նման հավաքների վերաբերյալ: Դրանք անհրաժեշտ են, թե՛ ժամանակի զուտ վատնում է:

- Ես կասեի՝ եթե անգամ շատ վատ կազմակերպված լինեիր, խոսակցություն չլինեիր, ուսուցիչները բոլորն իրար ծանաչեին ու ոչ մի հետաքրքիր բան չասեին, էլի շատ կարևոր կլինեիր: Դա մի հարթակ է, որտեղ մարդիկ սովորում են միմյանց հետ համագործակցել և կիսվել գաղափարներով, շփվել իրար հետ և այլն: Բայց քանի որ շատ լավ էր կազմակերպված ու լավ մտածված, շատ սրտանց էր արված, և կար պետական աջակցություն ու նախարարի անմիջական մասնակցությունը, ես կասեի՝ լավ, եզակի միջոցառում էր:

- Որպես միջոցառում՝ այո, իսկ ի՞նչ արդյունք կտա: Այդ երեք օրվա ընթացքում լսեցինք հարցադրումներ, որոնք կարծես թե նորություն էին: Տարիներ շարունակ ասում, խոսում, լսում ենք նույն խնդիրների մասին...

- Մենք միայն խնդիրների մասին չենք խոսել: Այս քննարկումների նպատակադրությունն էր ասել, թե ինչ ենք ուզում, որ լինի: Մենք շատ հաճախ խոսում ենք խնդիրներից, բայց երբ մարդուն ասում ենք՝ ի՞նչ ես առաջարկում, ասում է՝ չգիտեմ, թող ուրիշներն ասեն, դրա համար կան համապատասխան գերատեսչություն, մարդիկ: Նա այդպես է ասում ոչ թե նրա համար, որ ինքը չի ուզում անել որևէ բան, այլ որովհետև ուղղորդում է ուզում՝ ուր ենք գնում, ինչ է լինելու վաղը, որ իմանա իր անելիքը: Երբ վաղվա պատկերն անորոշ է, մարդը այսօր կանգնած է շվարած, չգիտի ինչ անի: Իսկ երբ այդ վաղը որոշակի ուրվագծվում է, այսօրվա անելիքները շատ ավելի հստակ են դառնում: Եվ կարծում եմ, այս միջոցառումից հետո ուսուցիչները կվերադառնան իրենց աշխատատեղերը՝ գիտակցելով, թե դեպի ուր ենք մենք շարժվում: Եվ նրանք գիտակցում են, որ այդ վաղը դեռ մշուշոտ է, շատ նախնական, բայց նախարարությունը հնարավորություն կունենա իր կողմից ծրագրեր մշակել սեփական ընկալումների վրա՝ հաշվի առնելով ուսուցիչների ընկալումը և պազայի վերաբերյալ, թե նրանք ինչպես են տեսնում իրենց աշխատանքը: Գուցե դա շատ պահերով մի քիչ հում է, մշակված չեն այդ մտքերը, շատ պահերով ինչ-որ տեղ չափից դուրս են հիմնված իրենց նախկին փորձի վրա, և այդ տեսլականը մի քիչ սահմանափակ է հորիզոնի առումով: Բայց դա խնդիր է, գլխավորը՝ որ ուսուցիչների տեսակետն ընդհանուր ռազմավարությանը համահունչ լինի, որպեսզի վաղը երբ ներկայացնեն իրենց, չասեն՝ այդ ի՞նչ եք ասում,

մենք դա չենք պատկերացնում, այլ ասեն՝ մենք էլ ենք այդպես մտածում, ինչ-որ բաներ ավելի լայն տեսանք և համաձայն ենք ուղղորդի ղեկավարության տեսլականին:

- Դուք Ձեր զեկուցման մեջ ասացիք, որ լավ դպրոց հեշտ է ստեղծել, եթե առկա են ֆինանսական միջոցներ, դժվարը լավ համակարգ ստեղծելն է: Ո՞վ պետք է ստեղծի այդ համակարգը և ինչքա՞ն ժամանակում:

- Ինչո՞ւ է դժվար: Եթե համակարգը լիներ ժամացույցի նման, ապա ցանկացած ժամագործ այդ համակարգը կստեղծեր: Համակարգը կենդանի մարմին է, որ իր մեջ պարունակում է մարդկանց, որոնք մեկ օրում չեն փոխվում, շաղկապված են բազմաթիվ հարաբերություններով, կապերով, իրողություններով ու պատմական հիշողությամբ: Եվ ընդհանրապես, այն փոխելու միակ միջոցը այդ մարդկանց հետ համատեղ գործելն է, նրանց այդ փոփոխությունների մաս դարձնելը: Այստեղ է դժվարությունը: Դժվարությունն այն է, որ ունենք որոշ կարգի մարդկանց մեծ համախումբ, որի հետ պետք է ճանապարհ անցնել: Գնապարհ անցնելու համար բացի Մովսես լինելուց պահանջվում է հասկանալ, թե ուր ես գնում, ուր ես տանում մարդկանց և մարդկանց աջակցությունը: Որ չըջվեն, չասեն՝ այս ո՞ւր ես մեզ տանում, Մովսես, մենք վերադառնում ենք մեր Եգիպտոս: Ոչ, մենք գնում ենք առաջ, որովհետև համոզված ենք, որ ճիշտ բան ենք անում: Եվ Աստված մեզ հետ է: Այդ ընկալումը համընդհանուր, ամենադժվար բանն է, որ պետք է ստանալ: Պատրաստ չեղանք՝ ոչինչ չի փոխվի:

- Բոլորի ընդհանրացումն այն էր, որ որքան էլ լավ համակարգ ստեղծենք, ինչքան էլ նոր տեխնոլոգիաներ ներմուծենք, գլխավոր դեմքը ուսուցիչն է, գալիս համագում ենք նորից ուսուցչին:

- Եվ այո, և՛ ոչ: Ասեմ՝ ինչու: Այո, որ իսկապես ամեն պահ կրթության արդյունքը կախված է ուսուցչից: Կարող ես ունենալ վատ կրթական համակարգ, որտեղ աշխատում են լավ ուսուցիչներ, բայց երբեք չես ունենա լավ կրթական համակարգ վատ ուսուցիչներով: Բայց մյուս կողմից այդ ուսուցիչն իր գործունեության, առօրյայի ու մոտեցումների զգալի մասով սերտորեն կապված է համակարգի հետ: Նա ինքնուրույն չէ, միայնակ չէ, նա, որպես այդպիսին, երևույթ չէ, որ առանձին է ամեն ինչից: Նրա մտածելակերպը և շատ բաներ թելադրում է համակարգը, որում նա գտնվում է, որում գոյատևում է կամ որում աշխատում է: Նկատի ունեն, որ համակարգը պայմանավորում է ուսուցչին, ինչպես որ ուսուցիչն է պայմանավորում համակարգը: Դա փոխադարձ է, գատել, ասել, թե ուսուցիչն առաջնային է, մնացածը երկրորդական, եկեք կենտրոնանաք ուսուցչի վրա, իսկ մնացածն ինքնուրույն իր տեղը կընկնի, չի ընկնի: Ուսուցչի մասնակցությունը համակարգի ձևավորման գործում շատ մեծ է: Եվ թե ինչպես նա կկառուցի իր շրջապատը, այնպիսին էլ ինքը կլինի վաղը: Եթե ես այսօր համագործակցող մարդ եմ, վաղը կունենամ բազմաթիվ աջակիցներ, որոնք կօգնեն ինձ փոխվել: Իսկ եթե պարփակված եմ իմ մեջ և ոչ մեկի հետ չեմ ուզում

համագործակցել, բոլորից թաքցնում եմ ամեն բան և միայն դասարանում եմ աշխատում, վաղը կլինեմ միայնակ, չեմ ունենա աջակցություն ու հետևապես՝ զարգացում:

- Դուք նաև այսպիսի միտք արտահայտեցիք, որ մեր կրթական տարածքը չտանք ոչ մեկին, չթողնենք որևէ մեկը մեզ թելադրի: Ասել է թե՛ ուսուցիչն է դրության տերը:

- Ուսուցիչը որպես հավաքական կերպար՝ այո: Բայց ես ասացի՝ միավորվենք: Եվ պետք է միավորվենք որպես համայնք: Իսկ համայնքն ունի արժեքներ: Այդ արժեքները մեզ պարտադրում են, և դրանց ծառայելը կարևոր գործ է: Դա նույնպես հեշտ չէ: Դա պահանջում է նվիրում և աշխատանք: Բայց այս դեպքում դուք չեք ասի՝ ես ուսուցիչ եմ, ես վեհ նպատակներ ունեմ, ես սերունդ եմ դաստիարակում: Դուք կասեք՝ ես ուսուցիչ եմ, որը ծառայում է մի կարևոր գործի, որը մեր ընդհանուր գործն է, և մենք՝ ուսուցիչներս, այդ գործն անելով՝ հպարտանում ենք: Մենք հպարտանում ենք մեկս մյուսով, հպարտանում ենք, որ լավ գործ ենք անում: Իսկ հիմա այդպես չէ: Այդ մտածողությունը՝ ես, ես ասելով առաջ գնալը, շատ սովորական է տեսնել, մրցակցությունը ուսուցիչների միջև. ով է վերին արտի ուսուցիչը, ով՝ ստորին: Սա վաղեմի խոսակցություն է, որ պետք է դադարի: Չկա ուսուցիչ, որ աջակցության կարիք չունենա:

- Մենք այդ օրերին պահանջներ լսեցինք, թե ինչպիսին պիտի լինեն ուսուցիչը, աշակերտը. ոչ թե նեղ, այլ բազմակողմանի զարգացածություն և այլն, որոնք կային խորհրդային դպրոցում...

- Խորհրդային պետությունը կառուցել էր բավականին լավ կրթական համակարգ, որն իր նպատակին ծառայում էր քիչ թե շատ լավ: Բայց խորհրդային կրթական համակարգի առաձեռնահատկություններից մեկն այն էր, որ չէինք զլանում խաչ դնել երեխայի վրա, հրաժարվել որոշ երեխաներից՝ ասելով՝ սրանք թող գնան բանվոր դառնան, լավերին առաջ էինք տանում, վատերի վրա աչք փակում: Շատ ջանք չէինք գործադրում, ուսուցչին չէին մեղադրում, որ դասարանում «2» ստացող երեխա կա: Ուսուցիչը «2»-ներ էր շարունակում, ծնողին էլ կանչում, նախատում, որ երեխային ուշադրություն չի դարձնում, երեխան չի սովորում, նրան տեր կանգնի: Այդ առումով ուսուցիչը բավականին արտոնյալ վիճակում էր: Հիմա մի քիչ վիճակը փոխվել է: Հիմա դա ուսուցչի հոգսն է, ամեն երեխա պետք է հասնի իր նպատակին: Մենք փոքր ազգ ենք, իրավունք չունենք ունենալ երեխաներ, որոնք չեն կայացել: Մենք ամեն չկայացած երեխայի համար պետք է դպրոցից պահանջենք՝ ի՞նչ պատահեց, ինչո՞ւ այդ երեխան չկայացավ, ի՞նչ մեծ սխալ է ունեցել: Նախկինում բավականին շատ աշխատատեղեր կային, որտեղ կարող էր աշխատել չկրթված բազմություն: Հիմա նման տեղեր չկան. եթե մարդը վատ է կրթվել, տեղ չի գտնի, և գնալով դա ավելի է սրվելու: Նշանակում է՝ կրթության նկատմամբ մեր վերաբերմունքը պետք է փոխվի, և ներառականության գաղափարը պետք է դառնա առաջնային: Ամեն երեխա առանձնահատուկ է, ամեն երեխա ունի աջակցության կարիք, ամեն երեխայի հետ պետք է աշխատել: Կան բազմատաղանդ երեխաներ, որոնք մեծ աջակցության կարիք ունեն, որ կարողանան հասնել իրենց նպատակին, կան մի քիչ ավելի պարզամիտ, մի քիչ ավելի էնոցիոնալ երեխաներ, որոնք գուցե կրթական մեծ ձգտումներ չունեն, բայց կարող են հզոր մարդկային հատկանիշներ ձեռք բերել, փայլուն հանդես գալ այլ ոլորտներում: Ամեն երեխա կայանալու հնարավորություն ունի, և ուսուցչի նպատակն է երեխային կայացնել:

տուկ է, ամեն երեխա ունի աջակցության կարիք, ամեն երեխայի հետ պետք է աշխատել: Կան բազմատաղանդ երեխաներ, որոնք մեծ աջակցության կարիք ունեն, որ կարողանան հասնել իրենց նպատակին, կան մի քիչ ավելի պարզամիտ, մի քիչ ավելի էնոցիոնալ երեխաներ, որոնք գուցե կրթական մեծ ձգտումներ չունեն, բայց կարող են հզոր մարդկային հատկանիշներ ձեռք բերել, փայլուն հանդես գալ այլ ոլորտներում: Ամեն երեխա կայանալու հնարավորություն ունի, և ուսուցչի նպատակն է երեխային կայացնել:

- Այսպիսի տեսլական կա, որ մոտ ապագայում շատ պահանջված մասնագիտություններ շարքից դուրս կգան, մասնավորապես՝ ծրագրավորողի մասնագիտությունը: Ի՞նչ է սպասվում մանկավարժի մասնագիտությանը:

- Ծրագրավորման աշխատանքի զգալի մասը հեշտությամբ ենթակա է ավտոմատացման արհեստական բանականության միջոցով: Այնպես չէ, որ ծրագրավորողներ ընդհանրապես չեն լինի, բայց այն սուր պահանջարկը, որ հիմա կա, կտրուկ կնվազի: Մարդիկ հիմա համակարգեր են ստեղծում, որ այդ պահանջարկը չլինի, և շատ մասնագիտություններ իրենց տեղը կգիշեն: Բայց այդ վտանգը չի սպառնում ուսուցչի մասնագիտությանը: Այն մարդաբանակի հետ աշխատելու կաճի, բայց նրա աշխատանքի բնույթն է փոխվելու: Ուսուցչի գործիքաշարի մեջ գնալով ավելանալու է, օրինակ, արհեստական բանականությունը: Դա անխուսափելիորեն լինելու է մոտակա 10-15 տարվա ընթացքում: Մեծ է այդ ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը, և մեծ աշխատանքներ են տարվում այդ ուղղությամբ: Հիմաստանում, օրինակ, աշակերտների հետ անհատական աշխատանքը տանում է արհեստական բանականությունը, որը շատ ավելի արդյունավետ է տեսնում երեխայի թերությունները, կարող է խորհուրդներ տալ, թե ինչի վրա նա աշխատի, ինչպես վարժվի, որ հաղթահարի դժվարությունները: Դա, իհարկե, երբեք չի փոխարինի ուսուցչին, բայց բավականին կհեշտացնի նրա աշխատանքը և թույլ կտա ավելի շատ կենտրոնանալ երեխայի բարոյահոգեբանական ոլորտի վրա, նրան տրամաբանական աջակցություն ցուցաբերել, ավելի խորը ընկալումներ փոխանցել և այլն:

- Մի քանի խոսք Ձեր «Այր» դպրոցի առանձնահատկությունների մասին:

- Մեր դպրոցի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ամեն կերպ ձգտում ենք տարատեսակ կրթական նորարարություններ կիրառել, փորձարկել և տարածել: Լինի ծրագիր, թե չլինի, մեր նպատակները չեն փոխվում, մեր աշխատանքը միշտ լինելու է այն, որ նորանոր արդյունավետ կրթական մոտեցումները, որոնք կիրառվում են աշխարհում, հասանելի լինեն մեր կրթական հանրությանը՝ փորձարկված, Հայաստանում տեղայնացված: Մենք անգամ ձեռնարկում ենք այնպիսի մոտեցումներ, որոնք աշխարհում դեռ չկան, մեզ մոտ են ստեղծված, և դրանք զարգացնում ու տարածում ենք ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում:

ՖՈՐՈՒՄ-ՆԱԲԱՋԱՂՈՒՅՑ

«ԱՐՑԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԸ ՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԶԿՐԿՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ»

Մեր գրուցակիցն է «Արեգնագան» կրթահամալիրի ուսուցիչ, Երևանի պետական համալսարանի դասախոս Արա ԱՅԹԱՆԸ



- Պարոն Աթայան, ըստ Ձեզ ի՞նչ կտա այս ֆորումը:

- Չեմ կարող ասել, որովհետև ապագան կախված է բոլորիցս: Առաջին հերթին՝ ձեզանից, բայց մեզանից էլ՝ թե որքանով կկարողանանք շարունակել այս գործը: Նման ֆորումների անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դա խաչմերուկ է, որտեղ մարդիկ հանդիպում են իրար, և որտեղ հնչում են նոր գաղափարներ ու բողոքակազմում սրտեր: Եթե այդ կրակը հետո չի մարում, այլ վերածվում է մշտապես գործող բարի կամքի, արդյունքը լինում է շատ մեծ, և ես հույս ունեմ, որ այսպիսի հանդիպման շարունակություն պիտի լինի:

- Ուրեմն դրանք պարբերաբար պետք է լինեն, որ բոցը չհամզի՞:

- Անկասկած, կրակը ցախ է պահանջում: Բայց ոչ միայն պարբերականության մասին է խոսքը, այլև շատ կարևոր է զարգացումը, այսինքն՝ ոչ թե նույն բանը կրկնելու միտումը, այլ խորացումը: Ոչ թե ամենամյա, այլ ամենօրյա պիտի լինի այդ կապը: Ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, որ սա դառնա տարին մեկ անգամ տեղի ունեցող միջոցառում, այլ պիտի բոլորիս կամքը միացնենք, որպեսզի դառնա ինչ-որ մի մեծ, նոր փուլի սկիզբ: Շատ գործ արված է մինչև այսօր: Այնպես չէ, որ մենք եկել ենք դատարկ տեղ, և ես վստահ ասում եմ նաև մի բան. Արցախի շահագրգռությունը հնարավորություն ունի չկրկնել ուրիշներին, չնայել միշտ նույնիսկ շայտադանի շահագրգռության կրթահամակարգին, որովհետև ՀՀ կրթահամակարգն ունի իր առանձին իրականությունը, իր առավելություններն ու թերությունները, որոնցից մեկն այն է, որ այն շատ մեծ է, ինքնուրույն շատ մեծ է և շատ ծանր է տեղից շարժվում, մինչդեռ այստեղ հնարավոր է շատ արագ հասնել արդյունքի, հնարավոր է փոքր մասշտաբի մեջ կառուցել մանկավարժական նոր տիպի համակարգ, որը նաև ՀՀ համակարգին կօգնի:

- Այսինքն՝ միևնույն կրթական դաշտում լինելով հանդերձ կարող ենք լինել նաև առանձին՞:

- Ի՞նչ է նշանակում լինել միևնույն կրթական դաշտում: Ինձ համար դա նույն լեզուն է, նույն մշակույթը: Մենք ունենք տարբեր օրենսդրություններ և պիտի ունենանք, մենք կարող ենք ունենալ վերջնական նույն չափորոշիչը, որով շարժվում ենք, բայց կարող ենք ունենալ լրիվ տարբեր տիպի դպրոցներ, և ի վերջո՝ տարբեր կրթահամակարգեր: Արցախում ես տեսնում եմ մեծ ներուժ: Ես կուզեմայի, որ նաև ՀՀ ամեն մարդ ունենար հնարավորություն սեփական կրթակարգ ունենալու: Ո՞վ է ասում, թե Գյումրիում նույնը պետք է լինեն դպրոցները, ինչ Երևանում են, կամ ո՞վ է ասում, թե Երևանի երկու դպրոցներ պիտի իրար նման լինեն: Առավել ևս Արցախը կարող է տարբերվել:

- Նույնը ասելով հասկանում ենք պարտադիր ինչ-որ բաներ, որ բոլորը պետք է ունենան:

- Այդ պարտադիր բոլորի համար պետք է լինի նվազագույն ընդհանուր ձևակերպված պահանջը՝ չափորոշիչը: Սակայն ճանապարհները, որոնցով դպրոցները հասնում են վերջնարդյունքին, որ իրականում վերջնարդյունք չէ, այլ դպրոցի ավարտ, որից հետո սկսվում է արդեն մեծահասակների կյանքը, պետք է լինեն շատ տարբեր: Եվ որքան տարբեր լինեն, այնքան՝ լավ: Այդ իմաստով եթե Հայաստանում յուրաքանչյուր մարդ դեռ այդ հնարավորությունը չունի, դեռ ի վիճակի չէ սեփական ճանապարհները փնտրել, Արցախն ունի, քանի որ առանձին պետություն է և ոչնչով պարտավորված չէ անպայման կրկնել այն, ինչ կա Հայաստանում: Հայաստանում շատ լավ բաներ են կատարվում, բայց, նորից եմ կրկնում, ՀՀ կրթահամակարգը շատ ավելի մեծ լինելով՝ շատ ավելի դժվար է տեղից շարժել:

- Այդ առումով Ձեր «Արեգնագան» դպրոցն առանձնահատուկ է, ունի իր սեփական կրթահամակարգը:

- Իրականում մեր դպրոցը 100-ամյա պատմություն ունի աշխարհում որպես դպրոցի տեսակ՝ վալդորֆյան դպրոց: Երկու բառով դժվար է խոսել նրա առանձնահատկությունների մասին: Մենք փորձում ենք բնության, արվեստի, մշակույթի՝ մեր ժողովրդի հոգևոր ակունքներից եկող ավանդույթների, բանասիրության, հեքիաթների, լեգենդների, դիցաբանության հետ երեխաների կապը պահել շատ երկար:

- Այսինքն՝ մարդկության մանկության հետ:

- Ամեն մարդ իր տարիքային զարգացման ընթացքում անցնում է նույն փուլերով, որոնցով անցել է ամբողջ մարդկությունը: Հետևաբար, փոքր երեխաներին միանգամից ժամանակակից գիտական լեզվով չորացնելը մենք սխալ ենք համարում: Մեր դպրոցն ապացուցել է գոյություն ունենալու իր իրավունքն աշխարհում և 25 տարվա ընթացքում՝ Հայաստանում: Ընդհանրապես ես կարծում եմ, որ կրթահամակարգն այնքան առողջ է և այնքան մեծ իմունիտետ ունի, որքան բազմազան է իր ներսում, որքան ստեղծագործող մարդկանց է տեղ տալիս, որովհետև կրթահամակարգի համար կարևորագույն խնդիր է երիտասարդներին բերել դպրոց: Իսկ վառ, ստեղծագործող երիտասարդները գալիս են դպրոց, միայն եթե նրանց համար հետաքրքիր է: Իսկ հետաքրքիր է, երբ նրանք ոչ թե զուտ կատարող են, այլև ստեղծագործող:

Արվեստները, արհեստները մեզ մոտ մինչև 12-րդ դասարան են սովորում՝ քանդակագործություն, երաժշտություն, թատրոն, նկարչություն: Փայտամշակում ունենք, գորգագործություն, կազմարարական գործ, այգեգործություն: Բայց մենք արվեստի թեքումով դպրոց չենք: Թեև ցածր ու միջին դասարաններում մենք երեխաներին համակարգիչներից հեռու ենք պահում, մեր դպրոցից ծրագրավորողներ դուրս են գալիս շատ ավելի մեծ տոկոսով, քան ուրիշ դպրոցներից, քանի որ հենց այդ բանի շնորհիվ մեր երեխաներն ունեն անկաշկանդ մտածողություն, վառ երևակայություն: Ոչ թե սպառողներ են, պասիվ օգտագործողներ, որոնք զոմբիանում են, իրենց ազատ ժամանակը և ստեղծագործական ներուժն անհիմաստ վատնում էլրանի առաջ, այլ հակառակը՝ ոլորտում լուրջ աշխատողներ են դառնում ու հասնում մեծ հաջողությունների: Շատ կարևոր է հասկանալ, որ ցանկացած գործիք, և համակարգիչը՝

առավել ևս, պետք է սպասարկի արդեն կայացած ընդունակություններին, իսկ ժամանակից շուտ այն պարզապես փոխարինում է դրանց՝ հարվածելով մարդու լիարժեք զարգացմանը: Հիշեք՝ դպրոցում մեզ չէին տալիս հաշվիչներ, որպեսզի մենք ինքնուրույն հաշվել սովորենք: Իսկ ամենապարզ հեռախոսը այսօր հարյուրավոր անգամներ ավելի շատ ընդունակությունների ձևավորմանն է խանգարում, էլ չեմ ասում ճաշակի, մարդկային շատ կարևոր այլ որակների մասին: Ամեն բան իր ժամանակն ունի, մի շտապեք երեխաներին կապել համացանցին:

- Ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ն պետք է լինի ուսուցիչը:

- Ուսուցիչը, ինչ նեղ մասնագետ էլ լինի, տարվա ընթացքում պետք է զբաղվի արվեստով և արհեստով, որովհետև դա մեր մեջ շարժում է ստեղծագործական ուժերը, մենք դառնում ենք ավելի ստեղծագործող, ու մեր երևակայությունը սկսում է աշխատել: Մանկավարժի համար կա չորս կարևոր սկզբունք:

Առաջին՝ մանկավարժը պետք է լինի նախաձեռնող և բացարձակ պատասխանատու այն ամենի համար, ինչ ինքն անում է, և՛ մեծ, և՛ փոքր գործերի: Մանկավարժի ժեստը, հագուստը, քայլը, ձայնի երանգը, խոսքն առհասարակ դառնում են երեխայի ճակատագիր: Մանկավարժի համար չկա մանրուք:

Երկրորդ՝ մանկավարժը ցանկացած ստի հանդեպ պետք է լինի անհանդուրժող: Սուտը չպետք է ներխուժի մանկավարժության, մեթոդիկայի, դասավանդման մեջ:

Երրորդ՝ մանկավարժը պետք է անընդհատ հետաքրքրվի ամեն ինչով, ոչ միայն սեփական գյուղի, քաղաքի, երկրի կյանքով, այլև ընդհանրապես նրանով, ինչ կատարվում է աշխարհում: Եվ իհարկե, այն ամենով, ինչով հետաքրքրվում է աշակերտը: Որովհետև եթե ես չգիտեմ, թե ինչով են շնչում իմ աշակերտները, ուրեմն կորցնում եմ իմ կապը նրանց հետ, իրականության հետ:

Չորրորդ՝ ինչն ավելի հեշտ է ասել, քան անել հատկապես մեր ժողովրդի պարագայում. մանկավարժը երբեք չպետք է չորանա կամ թփի: Իսկ դպրոցներում շատ հաճախ կարելի է տեսնել ուսուցիչների, որոնք ունեն կամ չոր՝ առանց ուժեղ, վառ զգացմունքների, կամ էլ թթված, հոգնած, հանգած դեմք, որին, կարծես, գրված է. որքան ծանր է բեռն իմ ուսերին: Դա ամբույլատրելի է, անկախ նրանից, թե որքան դժվարություններ կան առօրյա կյանքում, կենցաղում: Սովորական մարդու համար սա հանցագործություն չէ, այնինչ մանկավարժի դեպքում դա այդպես է: Այդ դեպքում նա պետք է ուրիշ աշխատանք փնտրի:

Ուսուցիչն իմ պատկերացմամբ ոչ այնքան հովիվ է, որն իր գառներին ինչ-որ տեղ է տանում, այլ այգեպան, որի այգին լավն է, երբ այնտեղ կան շատ տարբեր բույսեր, և բոլորը՝ առողջ: Լավ այգեպանը արմատահան չի անի բույսերը, որոնք այդ տարի շուկայում չեն գնահատվում, բազմազան այգին չի վերածի ջերմոցի, որտեղ միամասն, քիմիական պարարտանյութով արհեստականորեն արագ աճեցրած, «շուկայական» պահանջին համապատասխանող, բայց ներսում հիվանդ մի բույս կա միայն: Ամեն մի երեխա պետք է գնա դեպի ինքն իրեն, դեպի սեփական անհատականություն: Եվ մանկավարժական արվեստին տիրապետող ուսուցչի գործն այն է, որ հող ստեղծի դրա համար:

Ֆորումի նյութերը պատրաստեց Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Շնորհավորանք ԻՐ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԸ



Լրացավ Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ալվինա Բաղդասարյանի ծննդյան 60-ամյակը: Համեստ մի անձնավորություն, որ ծնվել է միայն ուսուցիչ դառնալու համար:

Ծնվել է 1959թ. հոկտեմբերի 31-ին Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը և ստացել հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

Ալվինա Բաղդասարյանը մեծ ներդրում ունի մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում: Սիրում է իր աշխատանքը, կապված է երեխաների հետ, առանց դպրոցի չի պատկերացնում կյանքն ընդհանրապես:

Իր գործի գիտակը դասերը վարում է հմուտ և նպատակասլաց, ուշադրություն է դարձնում ուսումնական նյութի մատուցման բազմազանությանը: Բժախնդրորեն ընտրում է գիտելիքների հաղորդման տարբեր, ոչ ստանդարտ մեթոդներ:

Կարողանում է աշակերտների մեջ սեր առաջացնել գրքի նկատմամբ՝ նպատակ ունենալով հայոց լեզվի ճոխ գանձերը դարձնելու աշակերտների սեփականությունը:

Մեծ ուշադրություն է դարձնում լեզվի անաղարտությանը, անընդհատ ուղղորդում է, որ աշակերտները սիրեն մայրենին՝ ասելով. «Այդ լեզվով են գրվել հայոց երգերը՝ միշտ տուն կանչող, միշտ սիրտ գերող»:

Հարգարժան գործընկեր Ալվինա Բաղդասարյան, սրտանց շնորհավորում ենք քեզ 60-ամյակի կապակցությամբ: Ցանկանում ենք ևս 60 տարվա կյանք, ամուր առողջություն, հաջողություններ, արևաշատություն և խաղաղ երկինք:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՐՊՀ-50

ԿԵՍ ԴԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՃԱՆԱԴԱՐՇԻՆ

ԱրՊՀ գիտական խորհուրդը 2019-2020 ուսումնական հոշակել է մայր բուհի 50-ամյակին նվիրված միջոցառումների տարի: Զորեյանական միջոցառումների մեկնարկը նույնպես 4-ին տրվեց ԱՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճից՝ ուսանողական միջազգային գիտաժողովով, որին մասնակցում էին պետական այրեր, ԱրՊՀ, ՀՀ և արտերկրի բուհերի ուսանողներ, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, մայր բուհի կայացման ու զարգացման ակունքներում

առաքելություն ունի՝ օրեցօր կատարելագործել բարձրագույն կրթության մակարդակը Արցախում, պատրաստել մրցունակ և բարձր որակավորման մասնագետներ, որոնք պետք է երաշխավորեն մեր հայրենիքի կայուն զարգացումը: «Ավելի քան կես դար Արցախի մայր բուհը նախկին ԼՂԻՄ-ի, ապա նորանկախ Արցախի բարձրագույն կրթության և գիտության, հասարակական, տնտեսական ու քաղաքական բնագավառներում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի: Խորհրդային բավա-

Այդ օրերին ԱրՊՀ-ում տարիներ առաջ ստորագրված Հուլիանոսի շրջանակում դասախոսություններով իր աջակցության առաքելությունն էր իրականացնում ԵՊՀ իրավագիտության ամբիոնը, որի նպատակն Արցախում իրավագիտություն մասնագիտությունը կայացնելն ու զարգացնելն է: Այդ համագործակցության նախանձախնդիր՝ ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ԱրՊՀ մեծ բարեկամ Գագիկ Ղազինյանն իր շնորհավորանքներն էր բերել: Տարին հոբելյանական է նաև Հայաստանի մայր բուհի համար: ԵՊՀ-ն նշում է իր հիմնադրման 100-ամյակը: Գ. Ղազինյանը ԵՊՀ 100-ամյակի միջոցառումների կապակցությամբ հրատարակված գրքեր նվիրեց ԱրՊՀ-ին:

2007-ից գործում է նորանկախ հանրապետությունների համալսարանների ասոցիացիան, որի մեջ մտնում են Արցախի, Հարավային Օսիայի, Աբխազիայի և Մերձդնեստրի Շևչենկոյի անվան պետական համալսարանները: Միության ղեկավար՝ Մերձդնեստրի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ստեփան Բերիլի շնորհավորանքի ուղերձը ներկայացրեց այդ բուհի ուսանող Յուրի Կասունյանը:

Գիտաժողովում ներկայացվեց ԱրՊՀ ուսանողների և լրատվության բաժնի պատրաստած տեսաֆիլմը համալսարանի մասին:

«Արցախի մայր բուհի 50-ամյա գործունեությունը» թեմայով զեկուցումով հանդես եկավ ԱրՊՀ



կանգնած մտավորականներ:

Ողջույնի խոսք ասաց Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը: Բաբվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ, Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, դրան զուգընթաց՝ Հայաստանի ճարտարագիտության և Հինարարության պետական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ և վերջապես դրանց միավորումով՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան, 1993 թվականից՝ Արցախի պետական համալսարան. ահա Արցախի մայր բուհի անցած ուղին, որը ռեկտորի բնութագրմամբ փառապանծ ճանապարհ է՝ լի դժվարություններով, խոչընդոտներով, հաջողություններով ու նաև թերացումներով:

Հորեյանի առթիվ ԱրՊՀ-ականներին և նրա բոլոր տարիների շրջանավարտներին շնորհավորեց ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը: Նրա խոսքով՝ 50-ամյակը ոչ միայն պատկանելի և գեղեցիկ հոբելյան է, այլև անցած ճանապարհը վերաբերելու և ապագայի տեսլականը ուրվագծելու իսկական ժամանակ: «Դժվար թե 50 տարի առաջ հիմնադրվելով որպես Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ, կարելի էր պատկերացնել, որ մի օր այն կդառնա անկախ Արցախի մայր բուհը, գիտակրթական օջախը, ավելին, ծանրակշիռ դերակատարություն կունենա ազգային-ազատագրական պայքարի հենց առաջին օրերից: Համալսարանը դարձավ 88-ի փետրվարյան օրերին ու նաև դրանից առաջ մեր ազատագրական պայքարի թե՛ ընդհատակյա և թե՛ արդեն հրապարակային պայքարի գիտական օջախը», - մասնավորապես ասաց նա: Անդրադառնալով նրա ներկայիս գործունեությանը՝ Աժ խոսնակն ասաց, որ այսօր ԱրՊՀ-ն այլ

կանին բարդ ժամանակահատվածում ուսանողական հասարակությունը եղել է ազգային արժեքների պահպանման կարևորագույն կենտրոն: Այնտեղ միաբանված հայ մտավորականությունը և ու-



սանողությունը պատվով են դիմակայել Բաբվի իշխանությունների գիտակրթական դավադիր քաղաքականությունը: Արցախյան շարժման տարիներին բարձրագույն հաստատությունը գաղափարական կենտրոններից էր, որտեղ կենտրոնացված էր երիտասարդության շարժիչ ուժը», - ողջույնի իր ելույթում ասաց ԱրՊՀ խորհրդի նախագահ Գրիգորի Մարտիրոսյանը՝ շարունակելով, որ մայր բուհն այսօր դիտարկվում է որպես ոչ միայն հանրապետության մասնագիտական ներուժի հիմնական մատակարար, այլ նաև գիտակրթական կարևորագույն կենտրոն, բայց և 50 տարին մեծ թիվ չէ իբրև բարձրագույն կրթության, գիտության ճանապարհը լուսավորող ուսումնական հաստատություն և կայանալու տեղ ունի, ու այդ առաջընթացի հաջողությունը միջազգային փորձն ու ժամանակակից պահանջները հնարներն օգտագործելու մեջ է, որին էլ ուղղված են բուհի ջանքերը:

ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը: Նշվեց, որ տասնյակ մասնագիտությունների գծով բուհը թողարկել է շուրջ 23 հազար մասնագետ՝ խոշորագույն դերակատարություն ունենալով Արցախի գիտակրթական, մարզամշակութային, սոցիալ-քաղաքական և հանրային կյանքում:

Լիագումար նիստում թեմատիկ զեկուցումներ ունեցան Շուշան Ներսիսյանը (Վանաձոր), Ամժելիկա Առուշանյանը (ՀՌՀ), Թամար Գրիգորյանը (ԱրՊՀ):

Գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց ԱրՊՀ մասնաշենքերում՝ յոթ մասնախմբերում:

Հաջորդ օրը Մատենադարան-Գանձասարում տեղի ունեցավ ուսանողական ֆորում՝ «Բարձրագույն կրթության հիմնախնդիրները» թեմայով:

Ս. ԳԱՐԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱԳԻՐ ԱՐՊՀ-Ի ԵՎ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ



Նոյեմբերի 15-ին Մատենադարան-Գանձասար գիտամշակութային կենտրոնում Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Արցախի պետական համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է ապահովել համագործակցության շրջանակ և օժանդակել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում երկու կողմերի գործակցությանը: Հուլիանոսի կյանքի, որ հայագիտական հետազոտությունները մատչելի դառնան հանրության առավել լայն շերտերին, հատկապես երիտասարդ ուսումնասիրողներին: Երևանի Մատենադարանի թվային ֆոնդն այսուհետ հասանելի կլինի նաև Արցախում:

Հուլիանոսի ստորագրմանը և գրադարան-ընթերցասրահի բացման արարողությանը ներկա էին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը և այլք:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Նոյեմբերի 18-ին Ուսանողների միջազգային օրվա առթիվ Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանի հրամանով պարզևատրվել են մի խումբ ուսանողներ:

Պատվոգրերով և մասնագիտական գրքերով պարգևատրվել են «Տարվա լավագույն ուսանող», «Դատախաղ» և Ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ անցկացված մրցույթներում «Լավագույն գեղանկար», «Լավագույն լուսանկար», «Լավագույն թղթակից», «Սեղանի թեմիս», «Ինտելեկտուալ մրցույթ», «Հրաձգություն» անվանակարգերում հաղթող ճանաչված, ուսման բարձր առաջադիմություն և պատշաճ վարքագիծ դրսևորած, ներհամալսարանական ու արտահամալսարանական ակտիվ գործունեություն ծավալած, հասարակական բարձր ակտիվություն ցուցաբերած, ուսանողական ինքնակազմ կառույցների աշխատանքը լավագույնս կազմակերպած, ուսումնագիտական, մշակութային, մարզական տարաբնույթ միջոցառումներին ակ-



տիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողները:

Համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորել է ուսանողներին տոնի առթիվ՝ նշելով, որ ներկայումս աշխարհում բարձրագույն կրթության ասպարեզում մեծ բարեփոխումներ են կատարվում, որոնց հիմնական սկզբունքներից մեկը միտված է ուսանողակենտրոն համալսարանների կայացմանը: Ռեկտորը նաև ընդգծել է, որ վերջին տարիներին ուսանողներն ակտիվ մասնակցում են համալսարանի բոլոր աշխատանքներին:

Օրվա առթիվ շնորհավորանքի խոսք են ասել նաև պրոռեկտորները՝ կարևորելով ուսանողների ունեցած դերը երկրի տարբեր ոլորտների զարգացման գործընթացում: Համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Լիլիթ Սարգսյանը և շնորհավորել է ուսանողներին օրվա առթիվ՝ մատչելի անսպառ եռանդ, գիտելիքների հարուստ պաշար, մասնագիտական ձեռքբերումներ և հաջողություններ ուսման ասպարեզում: «Ուսանողներիս հիմնական առաքելությունը կրթությունն է, և մեր պարտքն է մեր գիտելիքներով նպաստել մեր երկրի բարօրությանը»:

ԱրՊՀ լրատվություն

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՊԱՐԱՊՄՈՒՔՆԵՐՆ ԱՆՎԱՅՐԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶՄԱՐ ԴՊՐՈՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը 2020 թվականը հայտարարել է ֆիզիկայի տարի: Առաջին արձագանքողներից էր ԵՊՀ-ի անդամ Ս. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը, որն աշնանային արձակուրդի օրերին՝ հոկտեմբերի 28-31-ը սեմինար-պարապմունքներ անցկացրեց Ստեփանակերտի իր մասնաճյուղում, որին մասնակցում էին հանրակրթական դպրոցների ուսուցիչներ մայրաքաղաքից և հանրապետության շրջաններից:

Այդ առնչությամբ Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի տնօրեն Սուսաննա Ներսեյանը մեզ հետ զրույցում ասաց.




- ԵՊՀ-ին անդամ Ս. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի կողմից տնօրեն Հայկազ Նավասարդյանի նախաձեռնությամբ անցկացվեցին բառարյա դասընթացներ մաթեմատիկայից, ֆիզիկայից, հայոց լեզվից: Դասընթացներն իրենց դրական արդյունքներն անպայման կտան, որովհետև Երևանի ֆիզմաթ դպրոցից ժամանել են բարձրակարգ մասնագետներ՝ անուն համաժամանակ մաթեմատիկոսներ, ֆիզիկոսներ, որոնց աշակերտները փայլուն են միջազգային օլիմպիադաներում: Նմանապես և՛ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն, ՀՀ վաստակավոր մանկավարժ, առարկայի փայլուն գիտակ Աննա Մանուկյանը:

Սեզ առանձնապես անհասկանալի էր ֆիզմաթ դպրոցում լաբորատոր գույքի սղության մասին նրա տեղեկատվությունը: Անգամ Երևանի ամուսն համաժամանակ այդպիսի խնդիր կա, և դրանով հանդերձ այդտեղ միջազգային օլիմպիադաներում հաղթողներ են լինում:

- Այո, դա բավական թանկ գույք է, Հայաստանում չի արտադրվում, պատվիրում ենք Ռուսաստանից, Չինաստանից, - շարունակեց նա:

Մեր դպրոցներում եղածները, որ անվանում ենք ֆիզիկայի կամ քիմիայի լաբորատորիաներ, փաստորեն ցուցադրական կոմպլեքսներ են: Իսկ ճիշտն այն է, որ ամեն երկու աշակերտի համար կոմպլեքս լինի, որն անգամ ֆիզմաթ դպրոցի համար է դժվար ապահովել: Այդ պատճառով ուսուցիչները դիմում են տարբեր հնարքների: Մեր գրուցակիցը բացատրեց, որ հաջորդ օրվա փորձի համար տնտեսական ապրանքների խանութից գնելու է այլուհիմն անկյունակ, որը տներում վերանորոգման ժամանակ օգտագործում են, ու դրանով փորձերի շարք է անելու: «8-րդ և 10-րդ դասարաններում դրանով կարելի է 3-4 փորձ անել: Արցախից մեր գործընկերներին էլ ենք ուզում սովորեցնել նման հնարանություններ: «Լինուլեումից էլ ենք փորձ անում՝ ծանրության կենտրոնը, զանգվածը որոշելու համար, - ասաց նա ու պարզաբանեց, թե ինչպես. «Լինուլեումը անկանոն ձևի կտոր է, որի զանգվածը պետք է որոշենք՝ ունենալով ընդամենը 20 գրամանոց կշռաքար: Փորձում ենք հետաքրքիր դարձնել դասը»:

Իսկ այն հարցին, թե ինչ են անում, որ ամեն տարի միջազգային օլիմպիադաների հաղթողներ են ունենում, հարգարժան ֆիզիկոսը պատասխանեց, որ առաջին հերթին ֆիզմաթ դպրոցից են պետք խմբակների համար, քանի որ ընտրյալ երեխաների հետ հատուկ պարապմունքներ են անցկացնում. «Մեր դպրոցում միայն ֆիզիկայից կա երեք խմբակ, մաթեմատիկայից՝ չորս: Ինչ-Ֆորմատիկայի, ռոբոտաշինության խմբակներ էլ կան: Մենք կարողանում ենք այդ ծախսերը հոգավ պետության տված միջոցների հաշվին ու մեր մասնագիտական հստակություններով հասնել բարձր արդյունքների»:




Առաջին հերթին մենք գործնական և լաբորատոր աշխատանքների մասին խոսեցինք: Ներկա ժամանակաշրջանում դպրոցական գույքը բավականին սուղ է, աղքատիկ, և հարց է առաջանում, թե լաբորատոր և գործնական աշխատանքներն ինչու փոխարինենք, ինչ կարելի է ձեռք բերել սովորական տնտեսական խանութից, ինչ կարելի է ձեռքով պատրաստել ու օգտագործել,

որպեսզի ոչ թե մի-մի ցուցադրական, այլ լաբորատոր կոմպլեքսներ ունենանք: Օրինակ, վերջին լաբորատոր աշխատանքի ժամանակ մեր ձեռքի տակ եղել են ընդամենը բժշկական ներարկիչ և ճնշաչափ, որոնք կան բոլորի տներում, ու դրանցով մենք շատ կարևոր բեմա՝ Բոյլ-Մարիոտի օրենքը ստուգեցինք: Երևանի մեր դպրոցում դրանցով փորձեր արել ենք, լրակազմը բերել են այստեղ, միասին փորձ ենք արել ու հոյակապ արդյունք ստացել: Շատ հաճելի է, որ ուսուցիչներն այդպիսի հետաքրքրությամբ են հարցին մոտենում: Նաև խնդիրներ ենք լուծում դպրոցական թեմաներից, բայց՝ մի քիչ ավելի խորացված: Մասնավոր ֆիզմաթ դպրոցում միշտ էլ երեխաների մտքով կանցնի, թե այս կամ այն հավասարումը եթե ինչ-որ պայմաններում տեղի ունի, բայց մյուս պայմաններում տեղի չունի, ապա ո՞րն է դրա ֆիզիկան: Ինչ-որ օրինակափոխությունների սահմանափակումներ, օրինակափոխություններն ավելի ընդարձակելով՝ իրավիճակներ ենք բնորոշում:

Ուսուցիչները բավականին ակտիվ են մասնավոր խնդիրների լուծման ժամանակ և իրենց տեսակետն են հայտնում: Կարծում են՝ փորձի փոխանակումը շատ ձեռնառու է և՛ իրենց, և՛ մեզ: Ինչու չէ, մենք էլ սովորելու բան ունենք, - ասաց Ս. Հայրապետյանը:

Մաթեմատիկայի ուսուցիչների համար երկու դասարաններում պարապմունք էին անցկացնում Կիրակոս Գասպարյանն ու Նիկիտա Պողոսյանը:

Կիրակոս ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ֆիզմաթ դպրոցի ինֆորմատիկայի ամբիոնի վարիչն է:



- Կար նախաձեռնություն Արցախի ուսուցիչներին վերապատրաստելու, և մեծ սիրով համաձայնեցինք: Շատ կուզեմայի, որ սա շարունակական լինի: Դա կլինի նախարարների, տնօրենների, թե վարչության պետերի մակարդակով կազմակերպվող միջոցառում՝ լավ կլինի, որ դառնա ավանդական: Որքան հնարավորություն, ջանք ունեն, ինքն էլ կփորձեն նպաստել դրան: Բացի նրանից, որ ուսուցիչներին է օգուտ, մեզ բոլորիս է օգուտ, ավելի լավ կճանաչենք իրար, սուբյեկտիվ երևույթներից հեռու կմնանք, - ասաց նա:

Մեր գրույցն այնուհետև շարունակվեց բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների պակասի ուղղությամբ. ինչ անել այդ առարկաների նկատմամբ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու և ուսուցիչներ պատրաստելու ուղղությամբ:

- Մենք մաթեմատիկա սովորող ազգ ենք, մեր գեներտիկ ապարատում մաթեմատիկան դրված է: Բայց այսօր այդ գենը կարծես քնած է: Եվ ուսուցիչներ էլ չկան արդեն: Խոսքը ֆիզմաթի մասին չէ, հարցը գյուղական սակավակազմ դպրոցներին է վերաբերում, - մեր մտահոգությունը կիսեց նա:

Խնդրի լուծումը նա տեսնում է արմատական փոփոխություններ կատարելու մեջ: Կոնկրետ երիտասարդներին այս ուղորտում ընդգրկելու համար նա առաջարկում է

խառանք են տանում աշակերտների հետ: Ոչ միայն դասերն են անցնում բավական բարձր մակարդակով, այլև խմբակները, որոնցում աշակերտները խորացնում են իրենց գիտելիքները: Ս. Հայրապետյանից իմացանք, որ իրենց դպրոցի ուսուցիչները խնդիրներ են առաջադրում նույնիսկ միջազգային օլիմպիադաների համար, ու հանձնաժողովը հաճույքով ընդունում է: Միևնույն ժամանակ նա ասաց, որ Ստեփանակերտի դպրոցում էլ կան խմբակներ, բայց երեխաների հետաքրքրությունը պակաս է դրանց նկատմամբ: Ուսուցիչները բավականին ծանրաբեռնված են: «Մենք գրեթե դասաժամ չունենք, մեկ հոգի ունի ընդամենը 6 ժամ, մյուս երկուսը ժամեր ունեն համալսարանում: Նրանց համար դա կարծես հորբի լինի, ու չեն հոգնում: Երեք խմբակավորներից երկուսը երիտասարդներ են: Մեր դպրոցի շրջանավարտներն են գալիս մեզ մոտ դասավանդելու: Ես նույնպես ֆիզմաթն եմ ավարտել, համալսարանն ավարտելուց հետո եկել աշխատում եմ», - ասաց նա:

Ս. Հայրապետյանը մեծ կարծիք ունի Ստեփանակերտի մասնաճյուղի իր գործընկերների մասին: Նշեց, որ իրենց դպրոցում մեկշաբաթյա վերապատրաստման ծրագիր կար, որից հետո տրվել է գրավոր աշխատանք: Լավագույններից մեկը Ստեփանակերտի ֆիզմաթի ուսուցիչ Աշոտ Ապրեսյանն էր, որը մրցանակ ստացավ:

Մաթեմատիկայի ուսուցիչների համար երկու դասարաններում պարապմունք էին անցկացնում Կիրակոս Գասպարյանն ու Նիկիտա Պողոսյանը:

Կիրակոս ԳԱՍՊԱՐՅԱՆԸ ֆիզմաթ դպրոցի ինֆորմատիկայի ամբիոնի վարիչն է:



- Կար նախաձեռնություն Արցախի ուսուցիչներին վերապատրաստելու, և մեծ սիրով համաձայնեցինք: Շատ կուզեմայի, որ սա շարունակական լինի: Դա կլինի նախարարների, տնօրենների, թե վարչության պետերի մակարդակով կազմակերպվող միջոցառում՝ լավ կլինի, որ դառնա ավանդական: Որքան հնարավորություն, ջանք ունեն, ինքն էլ կփորձեն նպաստել դրան: Բացի նրանից, որ ուսուցիչներին է օգուտ, մեզ բոլորիս է օգուտ, ավելի լավ կճանաչենք իրար, սուբյեկտիվ երևույթներից հեռու կմնանք, - ասաց նա:


Մեր գրույցն այնուհետև շարունակվեց բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցիչների պակասի ուղղությամբ. ինչ անել այդ առարկաների նկատմամբ աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու և ուսուցիչներ պատրաստելու ուղղությամբ:

- Մենք մաթեմատիկա սովորող ազգ ենք, մեր գեներտիկ ապարատում մաթեմատիկան դրված է: Բայց այսօր այդ գենը կարծես քնած է: Եվ ուսուցիչներ էլ չկան արդեն: Խոսքը ֆիզմաթի մասին չէ, հարցը գյուղական սակավակազմ դպրոցներին է վերաբերում, - մեր մտահոգությունը կիսեց նա:

Խնդրի լուծումը նա տեսնում է արմատական փոփոխություններ կատարելու մեջ: Կոնկրետ երիտասարդներին այս ուղորտում ընդգրկելու համար նա առաջարկում է

ծեռնարկել մի շարք միջոցներ. «Պետք է աշխատավարձ բարձրացնել, գյուղում աշխատող երիտասարդի համար արտոնություններ սահմանել, ուսուցիչների բնակարանի հարց լուծել հիպոթեքի ցածր տոկոսով, բանակում երկու տարվա ծառայությունը փոխարինել գյուղում առնվազն հինգ տարվա աշխատանքով. գուցե այդ երիտասարդը հետո բախտը կապի գյուղին և այլն: Մինչև այսպիսի բաներ չանեն, լավ ուսուցիչ չենք ունենա: Մեր բոլոր երեխաները մաթեմատիկական բնածին ընդունակություններ ունեն, մնում է լավ ուսուցիչ լինի: Լավ դպրոց սարքել չի նշանակում լավ շենք սարքել: Լավ դպրոց լավ ուսուցիչ է, իսկ լավ ուսուցիչ ունենալու համար նրան պետք է արժանապատիվ աշխատավարձ տալ: Նա իր աշխատանքը դպրոցում պետք է տեսնի, ոչ թե աշակերտի հետ մասնավոր պարապմունքում»:

Ֆիզմաթ դպրոցից վերապատրաստող մաթեմատիկայի մյուս ուսուցիչը Նիկիտա ՊՊՈՍՅԱՆԸ է:



Նա լրացուցիչ դասագրքերի հեղինակ է: Այդ գրքերը որպես այլընտրանքային դասագիրք ուսուցիչներն օգտագործում են դպրոցում: «Ուսուցիչը պետք է շատ ավելի բան իմանա, քան դասագիրքն է, որպեսզի նրա համար հեշտ լինի աշխատել», - ասաց նա:

Նրա կենսագրական տվյալներից պարզեցինք, որ ծնունդով Մարտակերտի շրջանի Մեծ շեն գյուղից է, ծնողները մանկավարժներ են եղել, հայրը ֆիզիկայի ուսուցիչ էր, մայրը՝ քիմիայի: Բուհն ավարտելուց հետո սկզբում աշխատել է «Էլեկտրոն» գործարանում, ապա՝ Մերգելյանի անվան ինստիտուտում՝ որպես ծրագրավորող, բայց երեկոյան դասավանդել է բուհում: Դպրոց մտել է անկախությունից հետո և մինչև օրս աշխատում է մեծ սիրով:

«Հիմա տեխնոլոգիայի դար է, իսկ բանալին մաթեմատիկան է, ֆիզիկան: Անկախ նրանից, թե երիտասարդն ինչ կդառնա՝ մաթեմատիկոս, ֆիզիկոս կամ մեկ այլ մասնագետ, վերլուծական մտածողություն պետք է ունենա, ինչի համար մաթեմատիկական գիտելիքներ են անհրաժեշտ», - ասում է նա:

Նրա կարծիքով այստեղ պետությունն էլ շատ բան ունի անելու, հատկապես չափորոշիչների մշակման առումով: «Գործող չափորոշիչները շատ շուտ են մշակվել, երկու տասնամյակ առաջ, կարելի է ասել՝ անկախության տարիներին և մի քիչ էլ հապճեպ են ստացվել: 20-25 տարի անցել է, ինչ-որ բաներ փոխվել են, բայց ժամանակները շատ արագ են փոխվում, պետք է այնպիսի չափորոշիչներ մշակել, որ սովորելը և՛ հաճելի լինի ու ցանկալի, և՛ ձգտելու մղում լինի: Պետք է մտածել թերիամալրված դպրոցների հարցն ինչպես լուծել, այդ քիչ երեխաների կրթությունն ինչպես կազմակերպել, որ և պետության ծախսերն արդարացվեն, և՛ նրանք ստանան որակյալ կրթություն: Տեխնոլոգիայի մեր դարում կոնկրետ պետք է մտածել ինչ մշակումներ անել, որ Ստեփանակերտում նստած ուսուցիչը կարողանա գյուղերի երեխաների հետ աշխատել: Տեխնոլոգիական հնարավորությունները կան, պետք է օգտագործել: Նման բաներ պետք է անել, որ

սալը տեղից շարժվի», - ասաց նա: Ամենակին էլ զարմանալի չէր, որ ժամանած ուսուցիչների թվում կար նաև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Ամենա ՆԱԶԱՐԵՅԱՆԸ Երևանի ֆիզմաթ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրենն է, հայերենի մասնագետ, վաստակավոր մանկավարժ:



Նրա հետ մեր զրույցը սկսեցինք հենց այդ կետից: Մի դպրոցում, որտեղ աշակերտները, ինչպես ասում են, օր ու գիշեր ֆիզիկա, մաթեմատիկա են սովորում, և թվում է՝ առաջին պլանում հենց այդ առարկաները պետք է լինեն, հայոց լեզուն, հայ գրականությունը նույնպես՝ լավ են ուսումնասիրվում:

Ա. Նազարեյանը պատասխանեց, որ ֆիզմաթ տարիներ շարունակ կենտրոն դպրոց է, դասավանդողների մեծ մասը վերապատրաստող ուսուցիչներ են: Տարբեր տեղերից ուսուցիչները թե իրենք են գալիս վերապատրաստվելու, թե՛ ֆիզմաթիցներն են գնում նրանց մոտ, ինչպես այս դեպքում էր: Ֆիզմաթի ուսուցիչները տարբեր առարկաներից մեթոդական, առարկայական, ծրագրային, չափորոշչային սեմինարներ են անցկացնում հանրապետության ուսուցիչների համար: Ֆիզմաթում չկան երկրորդական առարկաներ:

- Լեզուն ինքը մտածողություն է: Հնարավոր չէ լավ ֆիզիկա կամ մաթեմատիկա իմանալ առանց լեզվի հետ կապված տրամաբանական այդ ամբողջ շրջան չունենալու: Բոլոր լավ ֆիզիկոսները, մաթեմատիկոսները և ընդհանրապես բոլոր լավ մասնագետներն այդպիսին են դառնում նաև ընթերցանության միջոցով, - պարզաբանեց նա՝ հավելելով, որ իրենց դպրոցի անգամ 10-12-րդ դասարանների աշակերտներն են ընթերցում ծրագրային գրականություն:


- Իհարկե, դրա համար ընթերցման միջավայր պետք է ստեղծի ուսուցիչը, այնպես անի, որ աշակերտն ինքն ուզենա գիրք կարդալ: Ուսուցիչ գործն այսօր առավել բարդ է, ինչը պետք է ամբողջ բեռը վերցնի իր վրա, կարողանա ցանկացած իրավիճակից դուրս գալ, հետաքրքրություն առաջացնել: Աշակերտն ուզում է, որ դասը հետաքրքիր լինի: Դրա համար թե ինչպես սովորել սովորեցնելու միջավայր են ձևավորում, հեշտացնում են քո գործը:

Նա գոհունակությամբ արտահայտվեց սեմինարի մասնակից ուսուցիչների մասին և առանձնապես հիացած էր Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Արթուր Բաբայանի՝ առարկայի խոր իմացությամբ, որի ներկայացրած թեման շիկացրեց դասարանը:

- Սիրով ուզեցինք օգտակար լինել Արցախի ուսուցիչներին: Գումարած՝ տեսարժան վայրերը, որ մենք հաճույքով վայելեցինք: Գերված, հնայված ենք Արցախ աշխարհի գեղեցկությամբ: Երկուսը միասին՝ աշխատանքը և հաճելի հանգիստը, համատեղեցինք և, որպեսզի մեծ լիցքեր ստացած, վերադառնում ենք՝ շարունակելու մեր վեհ առաքելությունը:

ՆՈՐԻ ԳԻՐԸ

ՃՇՄԱՐԻՏՆ ՈՒ ԿԵՂԾԻՔԸ ՂԱՐԱԲԱՂԻ «ԽԱՆՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ



Աշխարհում դժվար է պատկերացնել երկու հարևան պետություններից մեկի՝ ստի ու կեղծիքի վրա հյուսված «պատմական գիտության» այնպիսի հոխորտանք՝ ուղղված հազարամյակների հարուստ պատմություն ունեցող հարևանի դեմ, ինչպիսին նորաթուխ Ադրբեջանի «պատմաբանների» վայնասունն է Հայաստանի ու նրա օրինական տիրոջ՝ հայ ժողովրդի դեմ:

Եվ ցավալիք այն է, որ հարյուր տարի առաջ՝ 1918 թվականից սկսած, ապա 1920-ական թվականներին բորբոքված այդ «պատմական գիտությունը» խորհրդային իշխանության բոլշևիկ ղեկավարների՝ Լենինի և Ստալինի թուրքամետ քաղաքականության արդյունքում դարձել է սարից գլորվող մի ձմագունդ, որը գնալով ավելի է մեծանում: Հասկանալի է, որ վերջապես մի օր այն պիտի հալվի ճշմարտության ու արդարամտության արևային շողերի ներքո: Սակայն, ցավոք, և՛ անցած հարյուրամյակի ընթացքում, և՛ մեր օրերում ստի ու կեղծիքի այդ գաղափարախոսությունը դառնում է ավելի սանձարձակ քաղաքականություն, որը, այնուամենայնիվ, չի կարելի անտեսել, թողնել անպատասխան:

Իհարկե, մայր Հայաստանում գրվել ու տպագրվել են պատասխան գրքեր Ադրբեջանական «պատմաբանների» ծիծաղահարույց ուսումնասիրությունների դեմ, բայց տեղին է հիշեցնել, որ դեռևս քիչ են մեր պատասխանները, որոնք արդյունք են արհամարհանքի: Քաղաքավարության ու քաղաքակրթության սահմանները կոխկրտող հարևանին պետք է պատասխանել պատմական անժխտելի փաստերի, հոգևոր ու մշակութային կոթողների լեզվով ու վճռականությամբ:

Ու հաճելի է կրկին ու կրկին նշել, որ այդ ուղղությամբ շոշափելի և լուրջ աշխատանք է կատարում Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, վաստակաշատ պատմաբան, պրոֆեսոր Ստեփան Դադայանը: 2016թ. նա ընթերցողի սեղանին դրեց «Լեռնային Ղարաբաղի քաղաքական պատմության փաստեր և հերյուրանքներ (1918-1923)» աշխատությունը: Ապա 2017-ին սովորածավալ մի նոր ուսումնասիրություն՝ «Արցախ-Ղարաբաղի քաղաքական պատմությունը խամսայից մինչև ինքնավարություն... փաստեր և հերյուրանքներ» վերտառությամբ: Իսկ 2019-ին բազմավաստակ պատմաբանը հրատարակեց «Ճշմարիտն ու կեղծիքը Ղարաբա-

ղի «խանության» մասին» աշխատությունը, որն արժանի է ուշադրության ու դրվատանքի:

Ուսումնասիրությունը հասուն մտքի ու բեղուն գրչի արդյունք է: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ առանձին-առանձին ենթաբաժիններով, եզրակացությունից և հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն օգտագործված գրականության ցանկից, որի թիվը հասնում է 300-ի:

Հենց սկզբից ընդգծենք, որ բովանդակալից այս ուսումնասիրությունը մերօրյա հայ պատմաբանության մնայուն արժեքներից է, որի կարիքը զգացվում է այսօր և պահանջարկ է ունենալու գալիքում, քանզի մեր հարևան պետության ղեկավարները հայաստացույցային այնպիսի քաղաքականություն են վարում, որին անհրաժեշտ է լինելու պատասխանել տեղին ու դիպուկ:

Ընթերցելով գիրքը՝ զգում ես, որ հեղինակը վերացական ոչինչ չի օգտագործել: Նրա խոսքը համեմատված է կոնկրետ փաստերով, տրամաբանված է և համոզիչ: Նրա խոսքը երկչերտ է: Մի կողմից Ադրբեջանի ղեկավարների ու նրանց թութակի պես կրկնող «պատմաբանների» հակահայկական նկրտումներն են, մյուս կողմից՝ հայ իրականության մեջ հողոված ճշմարիտ ու բնութագրող փաստերով հագեցած պատասխանները:

Դժվար չէ նկատել, որ Ադրբեջանական բոլոր «պատմաբանները» անխտիր կատարում են Ադրբեջանի նախորդ նախագահ Յեյդար Ալիևի հետևյալ պատվերը, որ բերված է գրքում. «Պետք է ստեղծել այնպիսի աշխատություններ, որոնցում մշտապես հետևողականորեն ապացուցվի, որ այն հողերը, որտեղ այժմ գտնվում է Հայաստանը, պատկանում են Ադրբեջանին: Մենք պետք է ճանապարհ բացենք գալիք սերունդների համար:

Հորից ետ չի մնում որդին՝ Իլիան Ալիևը: 2005թ. դեկտեմբերի 14-ին էլույթ ունենալով Ադրբեջանի ԳԱ հերթական միջոցառման ժամանակ՝ Ադրբեջանի գիտնականներին նա կոչ է արել լծվել «Լեռնային Ղարաբաղում ղարաբաղյան հայության պատմական իրավունքի բացահայտման ծրագրի հիմնավորմանը»: Եվ խոստացել է օժանդակել «Արցախ-Ղարաբաղի տարածքի վրա հայ բնակչության բնիկ չլինելու» ծրագրի իրականացմանը, որ հայերը Ադրբեջանի անբակտելի մաս կազմող Լեռնային Ղարաբաղ են եկել որպես հյուրեր: Այսպես, նախագահ Ի. Ալիևը հակահայկական հիստերիան մտցրել է հանրապետության համար ստրատեգիական նշանակություն ունեցող ֆունդամենտալ գիտության կարգ:

2011թ. ապրիլի 26-ին Ադրբեջանի ԳԱ ամենամյա ժողովում Ի. Ալիևը կրկնել է այդ ծրագիրը՝ ավելացնելով. «Մեր գիտնականները դրականորեն են արձագանքել իմ կոչին, կարճ ժամանակում ստեղծել են հիասքանչ, ռեալ փաստերի վրա հիմնված աշխատություններ՝ առնչված այդ տարածաշրջանի պատմությանը»: Խոսքը Լեռնային Ղարաբաղի պատմության կեղծելուն

ուղղված պատվերի մասին է:

2018թ. փետրվարի 8-ին նույն Իլիան Ալիևը հայտարարել է, որ Ադրբեջանի քաղաքական-ստրատեգիական նպատակը Երևանի, Սյունիքի և Սևանա լճի գրավումն է: «Մենք չպետք է մոռանանք և չենք մոռանում մեր պատմական հողերը: Դա պետք է ուղեմիջ դառնա մեր հետագա գործունեության համար այնպես, ինչպես այսօր ենք աշխատում այդ ուղղությամբ: Մեր պատմական հողերը՝ Իրավանյան խանությունը, Ջանգեզուրը, Գեյջան: Այդ մասին պետք է իմանա և՛ երիտասարդ սերունդը, և՛ ամբողջ աշխարհը... Որովհետև Իրավանը մեր պատմական հողն է, և մենք՝ ադրբեջանցիներս, պետք է վերադառնանք պատմական այդ հողերի վրա»:

Աշխատության մեջ Ստ. Դադայանը, բերելով այս բարձրագույն հայտարարությունները, նշում է, որ Ադրբեջանական պատմաբանների ուսումնասիրությունները ետխորհրդային շրջանում 18-րդ դարի պատմական հիմնախնդիրների վերաբերյալ այսպես թե այնպես առնչվում են Արցախ-Ղարաբաղի պատմությանը, որում առանձնահատուկ տեղ է գրավում այսպես կոչված ղարաբաղյան «խանության» հարցը: Էթնոգրաֆիական այս խնդիրը չի հուզում նրանց: Արցախ-Ղարաբաղի արմատական հայ բնակչությանը նրանք համարում են աղվաններ (նրանց կարծիքով՝ ժամանակակից Ադրբեջանցիներ): Պարզ է, որ պատմական իրականությունը կեղծելու միջոցով, զուգահեռ նաև առասպելներ հորինելու օգնությամբ Ադրբեջանական «պատմաբանները» զեկուցել են իրենց ղեկավարությանը հերթական իրենց պատկառիկ հրատարակելու միտումով:

1960-1980-ական թթ. խորհրդային արգելքը շրջանցելը Ադրբեջանական պատմաբանների համար դժվար չէր: Նրանց հայ գործընկերները՝ իբրև երկրի օրինապահ քաղաքացիներ, որպես պատասխան, սահմանափակվել են միայն գայրալից գրախոսություններով ու արծագանքներով:

Ղարաբաղյան «խանության» բարձրացված հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանական «պատմաբանների» մոտ աննախադեպ հետաքրքրությունը ծավալվել է հետևյալ առիթներով. ա) Լեռնային Ղարաբաղի հայության կամքի բացարձակ արտահայտությամբ՝ Ադրբեջանի կազմից դուրս գալու և Մայր Հայաստանին վերամիավորվելու շարժումը, բ) խորհրդային կայսերական պետության՝ ԽՍՀՄ փլուզման և Ադրբեջանը անկախ պետություն հայտարարելը: Այսքանից հետո Ստ. Դադայանը եզրակացնում է, որ ղարաբաղյան հիմնախնդրի համոզեալ Ադրբեջանական պատմաբանների մոտ հետաքրքրությունը սերտորեն առնչված է Ադրբեջանում «պատմական գիտության» արմատներին:

Անցյալ դարի 30-ական թվականների երկրորդ կեսից սկսած՝ նաև խորհրդային Ադրբեջանի հասարակական կյանքում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ: Կրեմ-

լի քաղաքական ղեկավարների կամքով հանրապետության թուրքական բնակչությունը ստացավ «նոր ադրբեջանցիներ» անունը: Այս փաստերը բերելուց հետո Ստ. Դադայանն ըստ էության եզրակացնում է, որ արհեստականորեն ստեղծված պետությունը նաև արհեստականորեն ստացավ ազգային նոր անուն: Կրեմլը նման նորությամբ ձգտել է Ադրբեջանական հասարակությունը հասարակական-քաղաքական և քաղաքակրթության առումով հավասարեցնել հայ և վրաց հասարակությանը: Կրեմլը չի կամեցել նկատել, որ դրանով իսկ Բաքվի կողմից վերահսկվող հասարակությունը գտնվել է ոչ հեշտ իրավիճակում: Նրա առջև օբյեկտիվորեն հարց է առաջացել. ովքե՞ր են նրանք իրականում, թուրքե՞ր, թե՞ ադրբեջանցիներ: Որտեղի՞ց են եկել: Ինչպիսի՞ հոգևոր և նյութական արժեքներ են ստեղծել: Հարցերը հասարակ չեն: Դրանք պահանջել են օբյեկտիվ պատասխաններ, ու մինչև օրս այդ պատասխանների շուրջ ընթանում են թե՛ վե՛ճեր, որի պատասխանը դեռևս չկա: Նման եզրակացությունը ընթերցողի առջև հստակ բացում է այն կեղծ ու նանրի քաղաքականության ուղիներն ու նպատակը, որ անընդմեջ հողովվել ու հողովվում են Ադրբեջանական «գիտնականների» մոգոմած երկերում՝ ձգտելով ապացուցել, թե իբր Արցախում հայերը երևացել են 1828 թվականից հետո, ռուս-պարսկական պատերազմի արդյունքում: Այստեղից էլ Ադրբեջանական պատմաբանների հորինած առասպելներն ու կեղծիքը Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ: Ընդհանուր առմամբ, Ստ. Դադայանը ճշմարիտ պատմաբանի խղճով ու վճռականությամբ պատասխանում է քննարկվող հիմնախնդրի շուրջ ծավալված այդ հարցերին:

«Պատմական Արցախը հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի կեսերը: Ադրբեջանական պատմաբանների ստեղծած առասպելներն ու հնարանքները՝ 1-ին գլխում հեղինակն անժխտելի փաստերով Արցախ-Ղարաբաղի հայությանը ներկայացնում է որպես Արևելյան Հայաստանի քաղաքական-վարչական կազմավորում, ապա բերում է Արցախի մեկիքական տների ծագումնաբանությունը:

Աշխատության երկրորդ գլխում պատմաբանը ներկայացնում է Արցախ-Ղարաբաղի հայության ազատագրական պայքարը 18-րդ դարի առաջին եռամսյակում որոշակի մեկնաբանմամբ: Այստեղ առանձին ենթաբաժնում հեղինակն անդրադառնում է արցախա-ռուսական քաղաքական կապերին՝ կոնկրետ փաստաթղթերի հիման վրա, ապա գնահատում սղնախների շարժումը որպես Արցախ-Ղարաբաղի հայության ազատագրական պայքարի գագաթնակետ:

Աշխատության 3-րդ գլխում հեղինակի ուշադրությունը սևեղվում է «խանության» ծննդի վրա՝ ներկայացնելով նրա պատմաիրավական ադրբեջանական հիմնավորումը:

Կոնկրետ, անժխտելի փաստերով հեղինակն այս գրքի երեք բաժիններում ցույց է տալիս թուրքա-

կան էթնիկ տարրերի ներթափանցումը Արցախ-Ղարաբաղ, ապացուցում, որ Շուշին ինքնակոչ «խանության» հնարած կենտրոնն է, ու 3-րդ բաժնում գնահատում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները 18-րդ դարի 60-80-ական թթ., իսկ 4-րդ բաժնում մեկնաբանում է 18-19-րդ դարերի սահմանագլխում Արցախ-Ղարաբաղի շուրջ քաղաքական գործընթացի զարգացումը:

Աշխատության 4-րդ գլուխը, որն ամենից ծավալունն է, հեղինակը տրամադրել է ադրբեջանական «պատմաբանների» մտացածին մեկնաբանությանը 19-րդ դարի առաջին եռամսյակում Արցախ-Ղարաբաղի քաղաքական-վարչական-նազմական վիճակի վերաբերյալ: Այստեղ չորս առանձին ենթաբաժիններում հմուտ պատմաբանի դիտարկումով Ստ. Դադայանը նշում է 1805թ. Կուրակյան դաշնագրության ռազմաքաղաքական դերը ռուս-պարսկական և Արցախ-Ղարաբաղյան հարաբերություններում: Տվյալ գլխի 2-րդ բաժնում ներկայացված են ռազմաքաղաքական գործընթացների զարգացումը ռուս-պարսկական պատերազմի տարիներին (1804-1813թթ.) և Գյուլիստանի պայմանագիրը:

Հայ-ռուսական պատմական հարաբերությունների, ինչպես նաև տարածաշրջանի պատմության համար կարևոր հարց է համարվում Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի կոնտեքստում Արցախ-Ղարաբաղի քաղաքական-վարչական զարգացումը, որի լուրջ պատասխան ենք տեսնում 4-րդ գլխի 3-րդ բաժնում: Վերջապես սույն գլխի 4-րդ բաժնում ծանոթանում ենք Արցախ-Ղարաբաղի հայության վերադարձի հարցի քննարկմանը ըստ Ադրբեջանական «պատմաբանների» մեկնաբանության:

Ստ. Դադայանի սույն աշխատությունն ավարտվում է խոսուն ու համոզիչ եզրակացությամբ: Դա պատմաբան-քաղաքագետի ընդհանրացում է հայ-ադրբեջանական հարաբերություններում պատմական անցյալի և արդի ժամանակաշրջանի խնդրումների հիման վրա:

Ստ. Դադայանի «Ճշմարիտն ու կեղծիքը Ղարաբաղի «խանության» մասին» գիրքը քննարկվող հիմնախնդրին նվիրված բազմաչերտ ու բազմաբովանդակ ուսումնասիրություն է, որի երևան գալը տեղին ու ժամանակին է, քանի որ Ադրբեջանի կառավարող շրջանները շարունակում են հակահայկական հիստերիան՝ այն վերածելով հայաստացույցային ֆաշիստական քաղաքականության: Նման «հարևանին» պետք է պատասխան տալ ոչ միայն պատմական ճշմարիտ փաստերով, այլև պետք է զգոն ու պատրաստ լինել ջախջախիչ հարված տալու անհրաժեշտության դեպքում:

Սուրբապ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ՍԱՐՁԱԿԱՆ

ԿՐԿԻՆ ԲԱՐՁՈՒՆԵՐՈՒՄ Է ԱՐԹՈՒՐ ԱՊՈՒՇԱՆՅԱՆԸ



Ասում են՝ որքան դժվար է բարձունքի հասնելը, նույնքան դժվար է բարձրության տիտղոսը պահելը: Բայց Արթուր Առուշանյանի համար բարձունքին հասնելն ու մնալը, թերեւս, կենսակերպ է դարձել: Գերթական անգամ կիոկուշին կարատեի կենդանի լեգենդն առաջին հորիզոնականում է՝ հռչակվելով Եվրոպայի հնգակի չեմպիոն: Գերթական անգամ ոսկին մերն է՝ շաղախված առուշանյանական քրտինքով: Եվ մեկ անգամ միջազգային մրցաշարակալում հաղթանակի պատվանդան բարձրացավ արցախցի մարզիկը՝ հնչեցնելով հայոց օրհներգը, ցույց տալով հաղթական ոգին ու տաղանդավոր ծիրը:

Աշխարհի կրկնակի եւ Եվրոպայի հնգակի չեմպիոն, ԳՅ կիոկուշին կարատեի հավաքականի առաջատար մարզիկ, Արցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի սիրված մարզիչ Արթուր ԱՐՈՒՇԱՆՅԱՆԻ հետ հարցազրույց ունեցանք այն ժամանակ, երբ նոր էր վերադարձել հոկտեմբերի 24-27-ը Պորտուգալիայի Պորտո քաղաքում կայացած Եվրոպայի կիոկուշինկայ կարատեի առաջնությունից:

- Արթուր, նախ՝ շնորհավորում ենք եւ մեր հպարտությունն ենք հայտնում Ձեր հերթական հաղթանակի առթիվ: Ինչպե՞ս դա հաջողվեց:

- Շնորհակալություն: Մեկնեցիմք երեք հոգանոց թիմով՝ մարզիչ Սպարտակ Գասպարյանի գլխավորությամբ: Այս անգամ գերազանց արդյունք ունեցանք՝ երեքս էլ չեմպիոն հռչակվեցիմք:

- Ովքե՞ր էին Ձեր թիմակիցները:

- ԳՅ հավաքականի անդամներ Գոռ Մատոյանը եւ Էմիլ Դազարյանը: Գոռը մրցեց պատանիների միջեւ, իսկ Էմիլը մեծահասակների՝ մինչեւ 75 կգ քաշային կարգում: Այս մրցաշարը բենեֆիս էր Էմիլի համար, քանի որ մինչև սա երկրից դուրս նա հաղթանակներ չէր ունեցել: Հաղթելով մրցակիցներին, ընդ որում չեմպիոն մարզիկների, նա դարձավ Եվրոպայի չեմպիոն:

- Հաղթանակին հասնելու ճանապարհը հե՞շտ անցա՞ք:

- Որոշակի դժվարություն կար՝ կապված իմ ցածր քաշի հետ: Պայքարում էի մինչեւ 70 կգ քաշային կարգում, բայց ինձանից ծանր մրցակիցներ ունեի: Առաջին մարտս լեհաստանցի փորձառու մարզիկի հետ էր, որն ինձանից ծանր էր 8 կգ-ով: Մարտը տեւեց չորս րոպե, դժ-

վար էր, բայց հաջողվեց հաղթել նրան: Երկրորդ մենամարտս ռուս մարզիկ Պավել Չերեպանովի հետ էր, որը 2017 եւ 2018 թվականների Եվրոպայի կիոկուշին կարատեի կրկնակի չեմպիոն է: Քաշը 75 կգ էր: Չորս րոպեանոց մարտը կրկին ավարտվեց իմ հաղթանակով՝ մրցավարների որոշմամբ: Երրորդ մարտս բուլղարացի երիտասարդ մարզիկի հետ էր, որը լավ պարպած լինելուց բացի ինձանից շատ ավելի բարձրահասակ էր: Անհարմար էր ինձ համար մենամարտել նրա հետ, լավ էր աշխատում ոտքերով: Օգտագործեցի մասնագիտական մեթոդ եւ կարողացա հաղթել նրան: Եզրափակիչում հանդիպեցի կրկին բուլղարացի մրցակցի: Մարտի ժամանակ վնասվածք ստացավ եւ դժվարացավ մարտը շարունակել՝ հաղթողի կոչումը թողնելով ինձ:

- Մենամարտերում հաղթելու համար վնասվածքներն անխուսափելի են. ինչպե՞ս ստանալը, այնպես էլ պատճառելը: Կիոկուշինում առավել արտահայտված է վնասվածքավտանդությունը, քանի որ այն համարվում է կոպիտ ու դաժան ոճ: Ձեզ ճանաչում ենք որպես բարի, համեստ ու նրբանկատ անձնավորություն, իսկ որքանո՞վ է կիո-

կուշինի դաժանությունը համապատասխանում Ձեր հոգեկերտվածքին:

- Կիոկուշին կարատեի մարտական տեխնիկան հագեցած է կոշտ ու դաժան հնարներով, դա այդպես է: Բայց եւ մեր մարզածուում կան սկզբունքներ, որոնք խստորեն պահպանվում են: Այդ սկզբունքներից մեկն այն է, որ սովորվող հնարները պետք է օգտագործել միայն տատանու վրա, իսկ առօրյա կյանքում՝ միայն ծայրահեղ անհրաժեշտ ինքնապաշտպանության ժամանակ: Իմ պարապելու սկզբնական շրջանից սկսած՝ հետեւել եմ այն սկզբունքին, որ կիոկուշին կարատեի մարզիկը պետք է լինի ուժեղ, բայց համեստ ու բարի: Ներկայում էլ մեր սաներին ենք փոխանցում դա: Մրցագործից դուրս երբեք կիոկուշինի հնարներ չեն կիրառել որեւէ մեկի վրա, առավել եւս՝ վնասվածք պատճառել: Վերջին եզրափակիչ մենամարտիս ժամանակ, երբ մրցակիցս վնասվածք ստացավ եւ ընկավ գետնին, ես վայրկյան իսկ չվարանցի. մարտից դուրս մրցակիցը հակառակորդ է, նա ընկել է, եւ պետք էր օգնել: Նրան գրկեցի ու տարա՝ մինչեւ մոտեցան օգնություն ցույց տալու: Բոլոր մարզիկներն էլ պետք է

առաջնորդվեն այս սկզբունքներով, իսկ ուժն ու տեխնիկան օգտագործեն ըստ անհրաժեշտության:

- Որո՞նք եք կիոկուշինի սկզբունքները՝ ոչ միայն դրանք, այլեւ բարձունքներ նվաճելը դարձրել եք կենսակերպ: Հավանաբար մենակ չեք անցնում պայծառ բարձունքներ տանող ամբողջ ճանապարհը, որն անցնելիս, անշուշտ, հանդիպում են եւ թխալտ պահեր: Իսկ ովքե՞ր են Ձեր այդ ճանապարհի լուսատուները:

- Իմ մարզիչները. պատանեկան տարիքում ինձ պատրաստում էր Արցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի մարզիչ Արմեն Պետրոսյանը, իսկ մեծահասակ ժամանակ՝ ԳՅ կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի նախագահ եւ ԳՅ հավաքականի մարզիչ Սպարտակ Գասպարյանը: Ինչպես նաեւ ինձ ոգեւորող հարազատներս ու ընկերներս:

- Երբ խոսք է գնում հարազատների ու ընկերների մասին, անհնար է շրջանցել այն հարցը, թե ինչպես եք կարողանում համատեղել ընտանեկան կյանքն ու մարզական կյանքը՝ երկու դեպքում էլ փայլուն արդյունք դրսևորելով:

- Ճիշտն ասած, շատ դժվար է ինչպես ինձ համար, այնպես էլ՝ իմ կնոջ ու երեխայի, որ ստիպված եմ լինում հաճախակի բացակայել. մրցաշարեր, սեմինարներ, պարասպորտներ: Բայց դա բացասական ազդեցություն չի ունենում իմ մարզական կարիերայի կամ ներքնական հարաբերությունների վրա: Կարող եմ ասել ավելին. դրանք լրացնում են մեկը մյուսին: Մրցաշարերի կամ այլ պատասխանատու պահերի ժամանակ մեծ աջակցություն ու քաջալերանք եմ ստանում իմ կնոջից: Մտածում եմ այն ուղղությամբ, որ առաջիկայում նա եւս որպես մեր թիմի անդամ հնարավորություն ունենա մեկնել մեզ հետ մրցաշարերի եւ ավելի մոտիկ լինել

ինձ:

- Կինելով արցախցի մարզիկ՝ ի՞նչ զգացողություններ եւ ապրումներ եք ունենում մենամարտերի ժամանակ եւ հաղթական պատվանդանին կանգնած:

- Արցախցի լինելս ինձ մոտ հպարտության զգացում է առաջացնում: Մեր սաներին էլ ենք պատգամում չմոռանալ, որ մեր երակներով չպարտվողի արյունն է հոսում, մենք ֆենոմենալ ազգ ենք: Մեր պայքարն ամենուրեք է՝ մարտադաշտում, թե մրցագործին: Աշխարհի լավագույն մարզիկների մեջ ցույց տալ գերազանց արդյունք, աննահանջ ոգի ու կամք. սա առաջնակարգակն ու մարտավարական նշանակություն ունեցող սկզբունք է: Անկախ նրանից՝ ստացվում է Արցախի Հանրապետության որոշ բարձրացման, թե չէ (աղբերջանցիները նպաստեցին, որ սանկցիա դնեն ինձ վրա, մեր դրոշը բարձրացնելու դեպքում ցմահ կորակարկվեմ միջազգային առաջնությունների մասնակցելուց), մեզ արդեն ճանաչում են: Դա է մեր հիմնական նպատակը, որի համար շարունակում ենք պայքարել:

- Հաջորդ թե՛ պայքարը սարերի հետեւում չէ. դեկտեմբերին Աշխարհի առաջնությունն է: Հանգստանալու ժամանակ ունե՞ք, թե՞ արդեն նախապատրաստվելու ժամանակն է:

- Հանգստանալու ժամանակ գրեթե չկա, պարապմունքներն սկսված են: Անցած Եվրոպայի առաջնությունը մեր պարապմունքների շարունակությունն էր: Պատրաստվում ենք դեկտեմբերի 7-8-ը Նորսուլթանում կայանալիք կիոկուշին կարատեի աշխարհի առաջնությանը:

- Ուրեմն՝ Ձեզ հաջողություն, անսպառ ուժ ու եռանդ սպասվող առաջնությունում լավագույնս հանդես գալու համար:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԲՐԵՅՆ - ՌԻՆԳ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Նոյեմբերի 16-ին Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի դահլիճում մայրաքաղաքի հիմնական (այդ թվում՝ հ. 3 մ/դ) դպրոցների աշակերտների համար քիմիայի քաղաքային մեթոդիավորման կողմից անցկացվեց բրեյն-ռինգ բնագիտությունից:

«Բյուրեղի պես մաքուր և բյուրեղի պես ամուր», «խելքը ոսկե թագ է, ոչ բոլորն են այն կրում» և այլն:

Առաջին փուլում թիմերը մեկ րոպեի ընթացքում պետք է պատասխանեին 15 հարցի, իսկ երկրորդ և երրորդ փուլերում ներառված էր 10-ական հարց: Յուրաքանչյուր ծիշտ պատասխան գնահատվում էր մեկ միավոր: 1-ին փուլում ավելի շատ հիշողության հարցեր էին, 2-րդ և 3-րդ փուլերում՝ տրամաբանական: Քիմիային վերաբերող հարցերը կապված էին աշխարհագրության, ֆիզիկայի, կենսաբանության, գրականության և այլ առարկաների հետ: Հարցերը 7-9-րդ դասարանների ծրագրից էին: Ուսուցիչների համար դասազրբից բացի օժանդակ գրականություն է Ա. Ալեքսանյանի «Քիմիայի ուսուցման խաղային մեթոդները» գիրքը, որը բոլոր դպրոցների գրադարաններում կա: Ուսուցիչները գիրքն օգտագործում են դասերն ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար: Այն ձեռնարկ է, որտեղ կան բազմաթիվ մեթոդներ, խաղեր, բանավեճեր, մրցույթներ:

Թիմերին աջակցելու էին եկել իրենց դպրոցների աշակերտները, նաև՝ ծնողներ, ուսուցիչներ: Մրցութավարը տալիս էր հարցը, որն անմիջապես ցուցադրվում էր լայն էկրանին: Թիմերի կողմից գրավոր պատասխանները ներկայացվելուց հետո վարորդը տալիս էր ծիշտ պատասխանը, որը դարձյալ արձանագրվում էր էկրանին: Մրցույթն անցավ դահլիճի բուռն աջակցության պայմաններում: Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո մրցատյանի նախագահ՝ քաղաքապետարանի ԿՍ բաժնի մասնագետ Լյուբա Միքայելյանը հայտարարում էր միավորները: Երեք փուլերի հանրագումարով 31,5 միավորով 1-ին տեղը գրավեց «Բյուրեղ» թիմը (հ. 1 դպրոց), 31 միավորով 2-րդ տեղում «Նեյտրոն» թիմն էր (հ. 7 դպրոց), 30,5 միավորով՝ «Ոսկի» թիմը (հ. 6 դպրոց): Պետք է ասել, որ մյուս թիմերը ևս հաջող հանդես եկան: Միավորների մեծ տարբերություն չկար նրանց միջև, ինչը խոսում է այն մասին, որ բոլորն էլ լավ էին պատրաստվել: Մրցանակային տեղեր գրաված թիմերը ԿՍ բաժնի կողմից պարգևատրվեցին նվերով և պատվոգրով:



Ստեփանակերտի հիմնական դպրոցի համար քիմիայի քաղաքային մեթոդիավորման կողմից անցկացվեց բրեյն-ռինգ բնագիտությունից: Մեթոդիավորման նախագահ, հ. 6 հիմնական դպրոցի քիմիայի ուսուցչուհի Գայանե Շահբաջյանի խոսքով՝ նպատակը բնագիտական առարկաների նկատմամբ աշակերտների մեջ հետաքրքրություն և սեր առաջացնելն է: Այդ առարկաների, մասնավորապես՝ քիմիայի ժամաբանակը քիչ է, և ուսուցիչների համար դժվար է ուսուցանել նյութը աշակերտներին հասցնելը: Դրա համար էլ դիմում են նաև խաղային, մրցութային մեթոդների:

Մրցատյանի կազմում ընդգրկված էին տարբեր դպրոցների ուսուցիչներ, իսկ խաղը վարում էր մրցույթի կազմակերպիչ Գ. Շահբաջյանը:

Մրցույթը բաղկացած էր երեք փուլից: Թիմերին աջակցելու էին եկել իրենց դպրոցների աշակերտները, նաև՝ ծնողներ, ուսուցիչներ:

«Մի րոպե սովորածը չեն մոռանա», - այս կարծիքին է մեթոդիավորման նախագահ Գ. Շահբաջյանը:

Սեֆ. լրատվություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՄՆԱԳԻՐ՝ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorceter@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3000: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 19.10.2019թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: